

Օսմանեան

հարկային կանոնադրութիւնները եւ արեւմտահայութիւնը

ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ

Հայ-օսմանեան տնտեսական փոխյարաբերութիւններու պատմութիւնը միշտ ալ պիտի մնայ անկատար եւ ոչ-ամբողջական՝ պարզօրէն անոր համար, որ այդ պատմութիւնը լրացնելու գալիք միութեան ընդհանրապէս պիտի մնան գրումնի ներքեւ, եւ պատմութեան ուսանողին պիտի զլացուի մատչումն իսկ անոնց:

Հետաքրքրական է, սակայն, որ վերջին քառասնամեակի ընթացքին Օսմանի աշխարհավարութեան պատկանող կարգ մը միութեան եկան հրապարակ եւ լոյսի փոքր մշտնջող մը նետուեցաւ այդ փոխյարաբերութեան պատմութեան վրայ: Անշուշտ, տակաւին ովկէան կը կազմեն այն միութեան ու վաւերագիրները, որոնք ամբողջով փակ կը մնան հայոց պատմութեան ուսանողին համար. բայց կը թուի թէ ժամանակը պիտի հարթէ կարգ մը հարցեր, եւ լոյսին պիտի գտնուի միութեան, որոնք անմիջական կերպով կ'առնչուին ոչ միայն հայոց պատմութեան հետ ընդհանրապէս՝ այլ նաեւ այդ պատմութեան մէջ յաճախ անտեսուած կարգ մը միութեան հետ մասնաւորապէս:

Շատ մեծ է թիւը օսմանեան աշխարհավարութիւնը գնահատողներուն՝ մանաւանդ արեւմտեան պատմագրութեան մէջ: Կան հեղինակներ, որոնք, այսօր, հեռուէն դիտելով հարցերը՝ կը գրուեն զանոնք առնուազն գնահատելի: Բայց թուրքին հերոսացումը չի գալի լոյս արեւմուտէն, այլ անոր չափ նաեւ մոյնիմէն թուրքէն, որ

այսօր յենած իր մախառնությունն կատարածներուն եւ չկատարածներուն վրայ՝ ինքզինքն ու իր անցեալը կը ներկայացնէ պատկերով մը, որ ամտարակոյտ չի պատկանիր իրեն: Գուցէ այս իսկ էր պատճառը վերջին վարձու տարիներու ընթացքին կատարուող թուրք պատմութեան կեդոնման ու մեկգափոխումին, որոնք վերջապէս մղեցին երեմէիլը լոյսին տալու իր գիրքը, որպէս շառաչում ապսակ բոլոր կեդարարներուն: Երեմէիլի գիրքը քարգմանուեցաւ հայերէնի եւ հրատարակուեցաւ Երեւանի մէջ 1975 թ. ին՝ *Թուրքերի Ծագումը* ընդհանուր վերնագրով: Թէ անիկա ախտի զգաստութեան կարեւոր՝ հրաւիրել կարգ մը թուրք եւ օտար պատմաբաններ՝ կ'անգիտանանք հիմա: Բայց մէկ բան կը մնայ յստակ – թուրք եւ օսմանեան պատմութեամբ գրադողներէն ոմանք, զոնէ վերջին շրջանին, կու տան գիտականութեան շարք մը իրենց հրատարակած գործերուն՝ երբ կը դիմեն օսմանեան արխիւային նիւթերուն:

Այսօր կարելի է կազմել կոկիկ փունջ մը այսպիսիներու անուններէն, որոնց գործերէն ոմանք բարեբախտաբար ունինք սեղանի վրայ: Այդ անուններէն Պարֆանինը անծանօթ չէ զոնէ հայերենի մտաւարականութեան՝ անոր մէկ գործէն (1) կատարուած կարգ մը վաւերագիրներու քարգմանութեան հրատարակութեամբ Երեւանի մէջ (2):

Սափրաստեան եւ Զուլալեան կատարեցին շնորհակալ աշխատանք մը: Բայց անոնք կրնային աւելի ամբողջական ընծայել իրենց գործը, որ կ'ընդգրկէ քարգմանութիւնը մօտ երկուփուլէս տասնեակ հաշուող օսմանեան վաւերագիրներու: Կը հաւատանք որ անհրաժեշտ էր Պարֆանի գործէն վերցնել այն բոլորը, որոնք կ'առնչուէին արեւմտահայութեան տնտեսական կեանքին, եւ տալ զանոնք ի շահ հայ-օսմանեան տնտեսական փոխյարաբերութիւններու լուսաբանումին: Չըրին այդպէս, եւ այդ իսկ պատճառով՝ *Կանուներմէնքը* մնաց զակասաւոր:

Մասամբ մը զոնէ ամբողջացնելու համար գայն, աւելին՝ շօշափելի դարձնելու համար հայ-օսմանեան տնտեսական փոխյարաբերութիւններու հիմնաքարերը կազմող կանոնագրութիւն տարազը՝ հոս կու տանք կարգ մը օսմանեան կանոնագրութիւններու քարգմանութիւնները, որոնք առաւելաբար կ'առնչուին Արեւմտեան Հայաստանի, եւ մանաւանդ արեւմտահայութեան տնտեսական առօրեային:

Հոս քարգմանաբար տրուող բոլոր կանոնագրութիւններն ալ, որոնք զանց առնուած են Սափրաստեանի եւ Զուլալեանի կողմէ, ու կը վերցնուին Պարֆանի գործէն՝ հայերէնով լոյսին կը տրուին առաջին անգամ ըլլալով: Անոնցմէ ոմանց նմանները կան *Կանուներմէնքը* ի մէջ որպէս տարբերակ, սակայն, անոնք կը վերբերեն նկատառու-

լի տարբերութիւններ, եւ այդ իսկ պատճառով՝ կ'արժէ որ դրուին սեղանին վրայ արեւմտահայ տնտեսական կեանքի ուսանողին:

Այս կանոնագիրներէն ումանք կը կրեն թիւ ու թուական. ումանց պարագային կը նշուի թերին թուականի. երկու հատը կու գան Սուլթան Սիւլէյմանի ժամանակաշրջանէն, որ կ'ընդգրկէ 1520-1566 թ.թ. շրջանը: Մէկ հատին ժամանակը կ'իյնայ 1500 թ.էն առաջ՝ ըստ Պարքանի պլպտումներուն: Գրեթէ բոլորն ալ կը պատկանին յականէ անուանէ յիշուող նահանգներու. միայն մէկն է, որուն կը պակսի նշումը որեւէ նահանգի անունին. սակայն ան ալ ծանօթ է գայն կազմողին եւ խմբագրողին՝ Ալա-իւտ-Տելլէի անունով, որ, ըստ Պարքանի՝ եղաւ բարձրագոյն իշխանաւորը Պոգոֆի (եղզաթ) շրջանին: Աւելին՝ այս վաւերագիրը կը գտնուի Պոգոֆի մատենան մէջ, եւ ունի բաւական մեծ հանգիստութիւն Պոգոֆի գազայի անթուակիր մէկ կանոնագրութեան հետ (3): Ըստ Պարքանի՝ այս մատենան տարեթիւն է Հիմրի 932, որ կը համապատասխանէ 1525-1526 թուականին:

Ինչ որ ալ ըլլան խնդիրները վայրի՝ եւ թուականի՝ հոս կը տրուին անոնք այնպէս ինչպէս որ են, որովհետեւ շատ են խօսուն իրենք իրենց: Բայց յստակացնելու համար կատարուած բարգմանութիւնը, քառակուսի փակագիծի մէջ կը տրուին կատարուած կարգ մը լեզուական յաւելումներ. նոյնպէս քառակուսի փակագիծի մէջ կը տրուին Պարքանի գիրքին էջերը:

Ա.

[154] ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԷՐԿԱՆԻ ԼԻՎԱՅԻ

Պոլիս, Պաշլեֆիլի արխիւ

Մատենան թիւ՝ 735

Թուական՝ Սուլթան Սիւլէյմանի

ժամանակաշրջան [1520-1566]

Կանոնադրութիւն էրկանի Լիվայի՝ ըստ Տիարպեքերի վիլայէթի օսմանեան օրէնքին.

Բացատրութիւն թամդա-ի սիահի (4)

1. Հետեւեալներն են թամդա-ի սիահի ենթակայ եղողները. եթէ մէկ բնո վուչ բերուելով ծախուի [չուկայի մէջ]՝ իւրաքանչիւր բեռէն կը դանձուի վաթսուն վեց աղէ (5). եթէ ծախուի բամպակ, օճառ կամ հինա՝ [իւրաքանչիւր] բեռէն կ'առնուի տաս նիւկի (6) թամդա, որուն իւրաքանչիւր նիւկին կ'ընէ երկու հարիւր տիրհնմ (7): Եթէ թարմ պտուղ բերուի ու ծախուի՝ չորս նիւկի կ'առնուի ա-

նոր իւրաքանչիւր բեռէն, եւ եթէ բեռով դետը անցնի՝ վեց օսմանեան [ազէն] կը դանձուի իւրաքանչիւր բեռէն:

2. Եթէ էրկանիւր ըստանալու իրենց այգիներուն մէջ հասցուցած գինին (8) բեռ կապեն ու տանին [շուկայ] ծախելու՝ երկու հասանալէկի կը դանձուի ձիու կամ ջորիի բեռէն. իշու բեռէն մէկ հասանալէկի է [հարկը], որ կ'ընէ երկու օսմանեան ազէն իւրաքանչիւր բեռէն:

3. Եթէ ձի, ջորի կամ նոյնանման կենդանիներ ծախուին՝ իւրաքանչիւր էշրեֆի (9) [վրայ] կ'առնուի մէկ հասանալէկի թամղա, որ հարկւրէն չորսի հաշիւով է. բայց [դանձումը] շուկան ծախուողէն է՝ ըսելով արձանագրուած է, որուն կէսը պիտի առնուի ծախողէն եւ [միւս] կէսն ալ՝ դնողէն: Սակայն պիտի չառնուի դիւղերէն: Ստացուածքի նման բան ծախուելուն՝ պիտի չառնուի որեւէ բան:

4. Խաղաղորդարանի մասին ալ՝ իւրաքանչիւր երկու ոչխարի կամ այծի մորթ, որ խաղաղորդարան դայ՝ իւրաքանչիւր երկու մորթէն կ'առնուի մէկ ազէն. եզի մորթէն կ'առնուի մէկուկէս, եւ ցուլի մորթէն՝ երեք ազէն. կրկին նոյն ձեւով որոշուեցան:

5. Թամղա-ի աղնեմն (10) ալ՝ եթէ ոչխար մորթուի քաղաքին կամ գիւղերուն մէջ ծախուելու համար՝ իւրաքանչիւր ոչխարէն կ'առնուի վեցական սեւ ազէն (11) թամղա, իսկ եզէն՝ տասնութը սեւ ազէն. արձանագրուած է երեքը մէկ օսմանեան ազէնի հաշիւով. իւրաքանչիւր ոչխարէ պիտի դանձուի երկու ազէն, իսկ իւրաքանչիւր եզէ՝ վեց ազէն: Իսկ եթէ քաղաքանակը ոչխար դնէ [ձմեռնային պահածոյ] միսի համար՝ այն ատեն [թամղա] չ'առնուիր:

6. Մէկ սեխ եւ մէկ ձմերուկ կ'առնուի սեխի եւ ձմերուկի ամէն մէկ բեռէն. կրկին նոյն ձեւով պիտի առնուի. իսկ հինէն ի վեր բան չ'առնուիր մածունի եւ պանիրի բեռէն:

7. Քաղաքի Ժողովուրդի մահմետականներու ամուսնացածներուն արձանագրուեցաւ տասներկու ազէն [հարկ], եւ ամուրիներուն՝ վեցական ազէն. իսկ անհաւատներու իւրաքանչիւր խարած (12) վճարողին քսանհինգ ազէն իսպենձ (13) արձանագրուելով վերցուեցաւ անոնց ըրդատիէն (14):

8. Բացատրուելուն նոգթա պաշրի (15).

Երբ մետաքսի բեռ [մը] անցնի՝ իւրաքանչիւր բեռէն կը դանձուի երկու ազէն որպէս նոգթա պաշը. այս բոլորէն ետք՝ ուրիշ ինչ որ անցնի՝ կրկին երկու ազէն պիտի առնուի որպէս նոգթա պաշը. բայց [բան] չ'առնուիր թարմ պտուղէն. իսկ եթէ ցուլ անցնի վաճառուելու համար՝ [անկէ] կ'առնուի մէկուկէս ազէն նոգթա պաշը. կրկին նոյն ձեւով որոշուեցաւ [154] (16):

Բ.

[73] ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐԶՆԿԱՅԻ ՎԱԳՖՆԵՐՈՒ

Պոլիս, Պաշվեֆիլի արխիւ

Մատեամի քիւ՝ 917

Թուական՝ 1540 (947)

1. Երզնկայի դազայի մետրեսէներուն, մեսճիտներուն եւ զա-
վիէներուն (17) վազֆներու մատեանն [է ասիկա] : Ասկէ առաջ յիշ-
եալ դազային մէջ առկայ կարգ մը դիւղերուն մէջ սիփահին (18) որ-
պէս տիւլանի (19) տասէն երկու դանձեւէ ետք՝ եկամուտի տասէն
մէկն ալ որպէս վազֆի հարկ՝ մազթու կը դանձուէր (20) : Գոյութիւն
ունեցող զավիէներուն շէյխերուն իւրաքանչիւրին համար որոշուած է
մէկ չիֆթլիք (21) . իսկ մնացեալին՝ թիմարին (22) տրուած ըլլալը
կը դտնուի հին մատեանին մէջ եւ արձանագրուած է :

2. Առ այժմ յիշեալ վիլայէթը նոր ի նորոյ արձանագրուած ըլ-
լալով՝ երբ նոր մատեանը մատուցուեցաւ բարձրագոյն դահին՝ աստ-
ուածաշնորհ վսեմութիւն թագաւորի բոլոր երկիրներուն մէջ [հաս-
տատելու համար] կարգ ու կանոնը եւ ըրաշներուն արժանի ըլլալովը
դուրի եւ շնորհի՝ հրահանգուեցաւ դործադրել Բում վիլայէթի կա-
նոնադիրը : Տասէն երկու դանձուեւէ ետք տասէն մէկին ալ դանձումը
ակնյայտ ապօրինութիւն ըլլալով՝ վազֆներու ըրաշները դերժ կա-
ցուցուեցան [անկէ] : Միայն տասէն երկուքի դուրթեամբ պիտի դան-
ձուի [հարկը], մէկը [որպէս] տիւլանի եւ միւսը՝ [որպէս] հողի
հարկ : [74] Յիշեալ հողի որոշեալ հարկը վազֆներէն իւ-
րաքանչիւրին կարողութեան համաձայն ոմանց լրիւ, ոմանց կէս, եւ
ոմանց մէկ երրորդ, ոմանց քառորդ, ոմանց մէկ ութերորդ եւ ընդ-
հանրապէս որքան որ կարելի է անջատ կերպով որոշուելով՝ մնացեալը
փոխանցուեցաւ թիմարին : Նախապէս մէկ չիֆթլիք յատկացուած զա-
վիէներէն ալ իրենց դիւղերէն ներս եւ դուրսի դիւղերու մէջ աւելորդ
վազֆ ունեցողներուն, որոնք գոյութեան են կոչուած չերիաթով,
կամ անցեալին հաստատուած են էմիրներու վկայութեամբ, կամ չե-
րիաթական վկայադիրներով, կամ [ալ] արդարադատական կարգ մը
վկաներով՝ այդպիսիներուն ալ, անհրաժեշտութեան պարագային,
իրենց վազֆներու կարգ մը ստացուածքներէն մաս մը, եւ մերթ մէ-
կական չիֆթլիք կամ կէս չիֆթլիք փոխանցուեցաւ բարձր հրամա-
նով :

3. Մատեանէն դուրս դտնուող, կարգ մը մեկուսի կիրճերու եւ
անցքերու մօտակայքը առկայ դիւղերու մէջ, հինէն ի վեր զավիէներ
կան հաստատուած . զըզըլպաշներու շրջանին (23) ցրումովն անոնց
ընակիչներուն՝ խեղճացած են եւ աւերուած [այդ] դիւղերն ու զա-

վիէները, եւ [ապա]՝ ըստ դնահատանքի արձանադրուելով [մատ-
եանի մէջ]՝ յանձնուած են թիմարին: Եթէ կան այդպիսիներ՝ յիշեալ
վիւլայէթի վերստին արձանադրութեան [պահուն], չըջանն ու վիւլա-
յէթը ապահով կերպով նորոգելէ ետք, խեղճ ու քայքայուած դիւղա-
ցիներէն անոնք, որոնք [տակաւին] ողջ են Աստուծոյ իրենց շնորհա-
օրերու կարողութեամբ՝ պիտի վան իրենց վայրերը եւ շէնցեն [զա-
նոնք]: Յիշեալ վիւլայէթի Ժողովուրդին միջոցով անհրաժեշտ եւ
կասկածէ վեր պիտի ըլլայ բարելաւումը խեղճ ու աւերակ դաւիթէնե-
րուն: Մեծ քաղաքներուն ալ օգտակար է ըսելով՝ խնդրանք ներկա-
յացուեցաւ եւ դիմում կատարուեցաւ պետութեան: Մեր աստուածա-
շնորհ մսեմափայլ թագաւորին [ալ] ամբողջական մտածումն [այս]
ըլլալով՝ կարգ մը նախապէս քանդուած ու աւերուած՝ [սակայն] վե-
րըստին նորոգումը կարելոր եղող դիւղերուն եւ կարգ մը մեկուսի
կիրճերու մէջ նախկին որոշումով կառուցուելիք դաւիթէներ անհրա-
ժեշտ ըլլալով՝ անոնց ստացուածքները որ դիւղին մէջ որ ալ գտնը-
ւին՝ անոնց եկամուտներէն մէկ չիֆթլիք յատկացնես եւ որոշես ըսե-
լով՝ հրահանգուեցաւ: Ըստ բարձր հրամանի՝ անհրաժեշտ նկատ-
ուած վայրերու մէջ մերթ նորոգումի եւ մերթ կառուցումի համար
որոշում առնուելով՝ վաւերացուեցաւ [որոշումը] [74] (24):

Գ.

[115] ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՆԱԹԻԱ ԼԻՎԱՅԻ

Անգարա, Թափուի եւ հանրային հարկերու
սպասարկութեան տնօրէնութիւն
Մատեանի քիւ՝ 142
Թուական՝ 1559 (987)

1. Յիշեալ լիւլային մէջ դոյութիւն ունեցող դիւղերու, դաշ-
տերու եւ հողամասերու մեծամասնութենէն որպէս բաժին մալիքիա-
նէի (25) եւ տիւմանի՝ ցանքով եւ հողամշակութեամբ արտադրուող
հացահատիկին հինգէն մէկը հանուելով երկու տասանորդ առնուելը
հին սովորութիւնն է Ժողովուրդին: Օրինակի համար՝ լրիւ ցանք ե-
ղող վայրերու մէջ հողին օգտադործումը կը բաղկանայ մալիքիանէէ,
որ շերիաթի համաձայն կ'օգտադործուի որպէս միւլը (26) կամ
վադֆ. իսկ հողին եկամուտը կ'որոշուի որպէս տիւմանի, որ կը յատ-
կացուի մահմետականներու պէյթիւլմալին (27):

2. Ապա՝ ամէն դիւղ, դաշտ եւ հողամաս՝ նշանակուած է որ-
պէս մալիքիանէ կամ տիւմանի. օրէնքով ճշդուելէ ետք անոնց ստաց-
ուածք կամ վադֆ ըլլալը, կը յատկացուի ինչ որ է [անոնց] իրաւուն-
քը: Եթէ մալիքիանէի անոնց իրաւունքէն մաս մը աւելնայ՝ այդ ա-

ւելցած մասը մալիքիանէին հետ կ'արձանադրուի մերթ արքունական խասերուն (28) եւ մերթ թիմարի [ներքեւ] :

3. Բայաններուն բոլոր հասոյթը կազմող հացահատիկը հինգէն մէկի [դրութեամբ] կը բաժնուի : Ինչ որ արտադրուի վաղօք եւ միւլը եղող դիւղերուն մէջ՝ կը բաժնուի երկու մասի եւ ճշդելէ ետք վաղօքի եւ միւլքի տէրերը՝ նոր մատենանին մէջ արձանադրել տուած իրենց բաժիններուն համաձայն իրենց եկամուտներուն տէր կ'ըլլան վաղօքի եւ միւլքի տէրերը :

4. Հինգէն մէկի եկամուտէն զատ՝ նախապէս կը դանձուէր քառասուն քիւէն (29) մէկ քիւէ որպէս սալարիէ (30) : Երբ վիլայէթն արձանադրուեցաւ վերստին՝ արդիլուեցաւ [անիկա] որպէս ապօրինութիւն : Ներկայիս սալարիէն լոկ տասանորդ դանձուող վայրերուն [վերաբերելով]՝ որոշուեցաւ հինգէն մէկն [առնել] յիշեալ լիւսային մէջ մշակուող հացահատիկէն . [ուստի] սալարիէն հարստահարութիւն ըլլալով՝ կրկին վերցուած արձանադրուեցաւ : Ոչ մէկ ատեն սալարիէ պիտի առաջարկուի բայաններուն :

5. Երբ կը չափուին բայաններուն կալերը՝ [աշնաները] (31) կը ձգեն տասանորդներն անոնց [կալերուն] վրայ . հետագային, ժամանակ անցնելէ [ետք], կը դանձեն անոնց դրամը [կալերու չափուած] օրուան սակադինէն աւելիով : [Այս մէկը] ակնյայտ հարստահարութիւն է : Սակայն անհրաժեշտ է, որ բայաները [իրենք] կառուցեն իրենց [հատուցանելիք] տասանորդին բաւարար չափով շտեմարան իրենց դիւղերուն մէջ : Օրէնքով շտեմարանները չինելով՝ անմիջապէս որ չափուի բերքը՝ դայն՝ [տասանորդը] մօտակայ չուկան տանելով՝ սիրահին կը ծախէ [դայն] ինչ գինով որ կամի : Տասանորդի փոխան կանխիկ դրամ պիտի չսպասնջուի բայաներէն :

6. Բուն Մալաթիոյ չրջակայքը դտնուող կարգ մը դիւղերու եւ գաշտերու պարտէզները տասանորդի հին մատենանին մէջ մաղթու արձանադրուած ըլլալով՝ [անոնց տէրերը] տարուէ տարի կանխիկ կը հատուցանեն պարտէզի տասանորդը . [ասոր] պատճառն ալ այն է, որ պտուղի ժամանակ շատ մը [116] բայաներ իրենց զաւակներուն հետ կը մեկնին իրենց պարտէզները եւ հոն կը բնակին . [այսպիսով] կարելի չըլլար էօշը-ի մէյլէն (32) դանձել ըստ օրինի . առ այդ՝ [հարկը] կանխիկ է արձանադրուած : Ներկայիս նորէն եղածին պէս արձանադրուած է ըստ սովորութեան եւ օրէնքի, մերթ դրամով եւ մերթ ալ՝ խաբած : Գիւղերու եւ արտերու եկամուտի [արձանադրութեան] մէջ՝ [անոնցմէ] իւրաքանչիւրն արձանադրուած է իր տեղը . ըստ այնմ պէտք է դործադրել :

7. Սանճադպէյերը (33) եւ սիրահինները կ'առնեն ու կը տանին բայաները քանի մը օրուան խոտհարքի համար եւ [այսպէսով]

արգելք կ'ըլլան անոնց դործին: [Այս մէկն] ապօրինութիւն ըլլալով՝ արգիւրուեցաւ: [Սանճադալէյերը եւ սիփահիները իրենց խոտը] հնձել պիտի տան իրենց դրամով բանուոր վարձելով եւ դժուարութիւն պիտի չտան բայաներուն: Ըստ մատեանի՝ իւրաքանչիւր դիւղ դասըմ ըլլալէ (34) ետք՝ երկուքական ազգէ եւս կը դանձուի որպէս սուպաշըլը (35) եւ եադըճըլը (36): Իւրաքանչիւր տունէ կը դանձուի երեքական ազգէ որպէս խարման ազգէսի (37): Խարին անգամ մը, աշնան, մարդ զրկելով եւ քչիկ մը բան տալով՝ որպէս գըշ եարադը (38) իւրաքանչիւր տունէ կ'առնեն որոշ քանակով ցորեն եւ դարի, մէկական ոչխար, որոշ քանակով մեղր, յարդ ու խոտ, եւ ածուխ ու փայտ: այս բոլորն ապօրինութիւն եւ հարստահարութիւն ըլլալով՝ վեցուած արձանադրուեցան ըստ բարձր հրամանի: Իջեւանելով ըստ ժողովուրդին մօտ՝ սանճադի սուպաշիները կեր ու կերակուր կը պահանջեն եւ բռնութեամբ առնելով [իրենց պահանջները]՝ դժուարութիւն կու տան. ապօրինութիւն, հարստահարութիւն եւ արքայական հրահանգէ դուրս ըլլալով՝ արգիւրուեցան: Ոչ մէկուն տունը պիտի իջեւանին բռնութեամբ եւ առանց դրամի առնեն կեր ու կերակուր: Ինչ որ առնեն՝ իրենց դրամով պիտի գնեն արժէքին համաձայն [վճարելով]:

8. Բեսմ-ի չիֆթը յիսունական ազգէ է Մալաթիա լիւսային մէջ լրիւ չիֆթ արձանագրուած բայաներէն, [իսկ] քսանհինգ ազգէ՝ կէս չիֆթ արձանագրուած բայաներէն: Հողը կէս չիֆթէն նուազ ըլլալով քիչ ցանք ունեցող բայաներուն կ'ըսեն էքինլու բեննաք (39): այդ տեսակ բայաներէն կը դանձուի տասնութը ազգէ, ցանք չունեցող բեննաքէն՝ տասներկու ազգէ, եւ ամուրիներէն՝ վեցական ազգէ: աւելի պիտի չգանձուի: Գարդառ, Քիախթէ եւ Պէւսէլ զաղաներուն մէջ բնակող բայաներուն հողը քիչ ըլլալով՝ լրիւ չիֆթ արձանագրուած բայաներէն կ'առնուի երեսունչորս ազգէ, կէս չիֆթ արձանագրուած բայաներէն եւ էքինլու բեննաքներէն՝ տասնվեցական ազգէ, ցանք չունեցող բեննաքներէն՝ տասներկու ազգէ, եւ ամուրիներէն՝ վեցական ազգէ: աւելի պիտի չգանձուի: Այդքան առնն, որ մատեանի մէջ չարձանագրուած ամուրիներ ծառայութեանը մէջ կը դառնուին իրենց հայրերուն եւ կ'ուտեն անոնց հացը՝ այդպիսիներէն ոչինչ պիտի գանձուի: [հարկը] պիտի գանձուի [իրենց հայրերէն] անկախ երողներէն: Յիշեալ լիւսային մէջ գտնուող գիւղերու եւ դաշտերու սահմաններէն դուրս գտնուող բայաներէն՝ ըստ հին օրէնքի՝ իրենց մշակած հողերուն երկու տէօնիւմէն (40) պիտի գանձուի մէկ ազգէ:

9. Ատեթ-ի աղնեմ (41). ոչխարին գառնուկ ծնելէն ետք՝ դառնուկին հետ [միասին] համրուելով՝ պիտի դանձուի երկուքին մէկ ազգէի հարկ. որպէս չուպուգ ազգէսի (42)՝ նորէն հարկ պիտի չպահանջուի:

10. Բեսմ-ի քիւլվարէ (43). Հին ժամանակներէն ի վեր յիշ-
եալ լիւլային մէջ մէկական ազէ կը դանձուի փեթակ գլուխ. կրկին
նոյնպէս պիտի առնուի [հարկը]: Եթէ բայա մը իր սեփական փեթա-
կը հանէ իր գիւղի հողէն եւ այլ հող տանի եւ [փեթակը] հոն մեղր
տայ՝ հարկին կէսը կ'առնէ բայային տէրը, իսկ [միւս] կէսն [ալ]՝
հողին տէրը. երկու հարկ պիտի չպահանջուի:

11. Բեսմ-ի ասիապ (44). [լրիւ] տարին բանող ջրաղացներէն
պիտի դանձուի վաթսունական ազէ, [իսկ] վեց ամիս բանող ջրա-
ղացներէն երեսուն ազէ:

12. Գարգառ, Քիախթէ եւ Պեհեսնի դաղաներուն մէջ դանձուող
այդիններու իւրաքանչիւր հարկւր որթատունկին երկուքական ազէ
խարած է արձանագրուած հին մատեանին մէջ: [117] Արապ վիլայէ-
թին ենթակայ այլ վայրերու մէջ [իւրաքանչիւր] հարկւր որթատուն-
կէն կը դանձուի տասական, ութական, վեցական, եւ վերջապէս՝
չորսական ազէ. չորսական ազէէն նուազ չի դանձուիր. անոնցմէ
երկուքական ազէ դանձելը վնաս մը ըլլալով մահմետական պէյթիւլ-
մալին՝ նոր մատեանին մէջ իւրաքանչիւր հարկւր որթատունկէ երե-
քական ազէ հաշիւով արձանագրուեցաւ. յետ այսու որթատունկի
համար պիտի դանձուի երեք ազէ:

13. Պատ-ի հաւլայի (45) եւ ճիւրիւմ վէ ճինայէթի (46) մասին
պէտք է դիմել օսմանեան օրէնքին. աւելի պիտի չդանձուի. օրուան
իշխանաւորները պիտի արգիլեն եւ չքացեն [ապօրինութիւնները]
[117] (47):

Դ.

[40] ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԱՐԱՄԱՆ ՎԻԼԱՅԵԹԻ

Պոլիս, Պաշվեֆիլի արխիւ

Մատեանի քիւ՝ 871

Թուակնն՝ ամբուակն (48)

1. ...իմ (49) իշխանութեանս եւ ինծի յանձնուած երկրին բա-
յաները հանդիստ չըլլալով՝ հրահանդեցի վերստին արձանագրել Գա-
րաման վիլայէթը, որ մէկ մասն ու հատուածն է յիշեալ պետութեան:
Անոր բայաներուն դրութեան վատ ըլլալուն համար հոն ալ էմիններ
(50) զրկելով հրամայեցի արձանագրել եւ մատեանի մէջ անցընել ա-
նոր աւատները, վազֆները եւ հողերը: Այնպէս իմաց տրուեցաւ
բարձրագոյն դահիս, որ յիշեալ վիլայէթին մէջ Մարգարէի շերիա-
թէն եւ օսմանեան օրէնքէն դուրս ապօրինութիւններ կատարուելով՝
հոն դանձուող բայաները կ'ենթարկուին զանազան դժուարութիւննե-
րու եւ բռնութիւններու: Առ այդ՝ վստահելով իւլեմաններու (51)
չպարտութիւնն եղող Մեվլանա (52) Մուհիտտինին, որ հռչակաւոր

է Մեղլանա Վիլտան անունով՝ հրահանգեցի անոր որ շրջադայի բոլոր կողմերը այդ վիլայէթին, զննէ ու քննէ, եւ ինչ որ դոնէ շերիաթի եւ օրէնքի հակառակ՝ արդիլէ եւ պաշտօնադիր մը տայ [առ այդ] : Մեր բարձրագոյն հրամանին համաձայն՝ յիշեալ մեղլանան հասաւ այդ վիլայէթը, մատեանի մէջ արձանագրեց իր արդիւած ապօրինութիւնները, եւ եկաւ [41] ու ներկայացուց զայն իմ բարձր դահլս : Ես ալ ընդունելով զայն՝ որոշում կայացուցի եւ հրահանգեցի, որ աստուածառաք մեղլանան դրէ կանոնադրութիւն մը այդ վիլայէթին համար, որ բացատրէ օսմանեան պետութեան մէջ ի դօրու եղող օրէնքները եւ արդիւրած բոլոր ապօրինութիւններն ու բռնութիւնները եւ կազմուի նոր մատեան մը : (Սկիզբը) դրուեցաւ, որ յետ այսու դործադրուի այս կանոնադրութիւնը : Յիշեալ մեղլանային կողմէ՝ զբուրած կանոնադրութիւնն արձանագրուեցաւ նոր օրէնքով, եւ [հոն] մանրամասն կերպով կը յիշուին ասոնք :

2. Իւրաքանչիւր տէօնիւմ [հողէն] կը պանծուի եղեր ութական ագէէ բեսմ-ի միրասլի (53) . ապօրինութիւն ըլլալով՝ վերցուեցաւ . ասկէ ետք պիտի չպահանջուի : Բեսմ-ի թահուինսանէի (54) եւ պեղիրխանէի (55) մուդաթաա (56) ըլլալն արդիւրուեցաւ Գոնիա դադային եւ նոյնինքն Գոնիայի մէջ : Ասկէ առաջ զայն արդիւրող բարձրագոյն հրահանգ էր տրուած Սուլթան Պայէգիտ Խանի կողմէ :

3. Գոնիա դադայի Ստհրա Նահիէին մէջ կան կարգ մը դիւղեր, [որոնք] հինէն ի վեր կիսրար ըլլալով՝ չեն վճարեր բիւսում-ի բէայան (57) : Որովհետեւ ըստ նախկին մատեանի՝ սերմնցուն կը փճանայ եղեր՝ կիսրարութիւնն արդիւրուեր է եղեր եւ մէկ երրորդ արձանագրուելով՝ անոնք չեն վճարեր եղեր բիւսում-ի բէայան եւ աւարիղը (58) : Ներկայիս յիշեալ վիլայէթը նոր ի նորոյ արձանագրուելով՝ ըստ դիմումի՝ արդիւրուեցաւ [հողի արտադրութեան] մէկ երրորդի [հարկային] արձանագրութիւնը : Հրահանգուեցաւ, որ վազֆային հող եղող գիւղերը տասանորդ տալէ ետք վազֆին՝ մնացեալին [հարկը] տան մէկ հինգերորդի դրութեամբ, տան բիւսում-ի բէայան եւ հատուցեն աւարիղը : Առ այդ՝ [ամէն ինչ] մանրամասն բացատրուած է այդ գիւղերու [արձանագրութեան ներքեւ] : Յիշեալ դադային մէջ Խաթուն Սարայըին ալ արդիւրուեցաւ [հարկ] վճարել կէս առ կէսի դրութեամբ : Անոնք ալ (59) տասանորդը հատուցելէ ետք վազֆին՝ մնացեալին [հարկը] պիտի վճարեն մէկ հինգերորդի յիշեալ դրութեամբ : Տարենտէ դադայի կարգ մը գիւղերուն մէջ ալ կիսրարներ կան եղեր . անոնց ալ սերմնցուն փճանալուն պատճառով բիւսում-ի բէայան եւ աւարիղը պիտի հատուցեն հրահանգելով [վերը] բացատրուածին պէս արձանագրուեցաւ :

4. Ըստ հին մատեանի՝ Էրէյլի դադային համար արձանագրու-

ւած է հաղար երկու հարիւր աղջէ որպէս բեամ-ի սաղունխանէ (60) : Բայց հոն օճառի դործարան չգտնուելուն համար՝ իւրաքանչիւր տունէ կը դանձուի եղեր երկուքական աղջէ : [Հարկն] արդիւրեցաւ այդ վիւայէթի ժողովուրդի դանդաւորն վրայ :

Ծ. Յիշեալ դաղային մէջ լուսաւիայ Մետինէի վաղֆ եղող հողերու դիւղերէն որպէս բեամ-ի միւրապի իւրաքանչիւր չիֆթէ կը դանձուին եղեր տասական աղջէ եւ Գարամանի քիլէով երկուքական քիլէ հացահատիկ . այս ձեւով վաղֆը վնասի ենթարկուելուն համար՝ արդիւրեցաւ . ասկէ ետք պիտի չպահանջուին :

6. Ի՛չ Ի՛լ լիւյայի բայաները ձմեռը հովիտ իջնելով՝ ամրան կ'ելլեն եղեր իրենց արօտավայրերը : Հինէն ի վեր պահպանուած եւ արօտավայրի հարկ դանձուող այս արօտավայրերէն անոնք , որոնք հին մատենաւով կ'ընդգրկուին՝ մէկ մասը [անոնց մէջ] վրան լարելու համար է եւ մաս մըն ալ՝ ուրիշներու աւատն է : Բեամ-ի օթլադ (61) ըսելով ամիւններն (62) ու սիփահինները անոնցմէ կը դանձեն եղեր երկու ոչխարի մէկ աղջէ : Օրէնքէ դուրս ըլլալով՝ զիմումի վրայ արդիւրեցաւ [41] (63) :

Ե.

[167] ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՁԵՐՄՈՒԿ ԼԻՎԱՅԻ

Պուխ , Պաշկեֆիլի արխիւ
Մատեանի քիւ՝ 840
Թուակառն՝ 1518

1. Բացատրութիւն Ձերմուկ լիւյայի կանոնադրութեան՝ ըստ Հասան փատիշահի կանոնին .

Նախապէս բայաներէն անոնք , որոնք մահմետական էին եւ ունէին մէկ չիֆթի հող ու կարող էին մշակել զայն՝ իւրաքանչիւր չիֆթէն որպէս բեամ-ի չիֆթ (64) կը դանձուէր հինգ թենկէ (65) , որ կ'ընէ տասը օսմանեան աղջէ . դանձուելուն ժամանակը Մարտի սկիզբներուն՝ դարնան սկիզբն է :

Կալի առեն որպէս շահնեկի (66) իւրաքանչիւր չիֆթէն կը դանձեն մէկ քիլէ ցորեն եւս , որ կ'ընէ Պոլսոյ կէս քիլէն :

Անոնց ցանքերէն կ'առնուի եօթնէն մէկը :

Այդիններէն կը դանձեն մէկ թենկէ՝ հարիւր որթատունկէն , եւ կողով մը խաղող :

Կարգ մը բարերեր հողերէ , ուր կը մշակուին բանջարեղէն ու բամպակ՝ [հարկը] կը դանձուի տասանորդի [գրութեամբ] :

Իւրաքանչիւր տունէ կ'առնուի երեք օր ըրդատիէ , որուն իւրաքանչիւր օրը մէկ փարա է , որ կ'ընէ երկու օսմանեան աղջէ . դան-

ձուժին ժամանակն է՝ կէսը դարնան սկիզբը ցանքի ատեն եւ [միւս] կէսն ալ՝ հունձքի ատեն :

[168] Իւրաքանչիւր տունէ կը դանձուի նաեւ երկու բարդ (67) օթլուդ (68), որ կ'ընէ վաթսուն խուրձ : Իւրաքանչիւր բարդը երկու ադէէն՝ կ'ընէ չորս ադէն . ասոր ալ դանձելու ժամանակը խոտհարքի ատենն է . այն ատեն պէտք է դանձել :

Կրկին՝ իւրաքանչիւր տունէ կը դանձուի երկու բեռ փայտ եւս , որուն իւրաքանչիւր բեռը կ'ընէ երկու օսմանեան ադէն . ասոր ալ դանձումին ժամանակը աշնան վերջին ամիսն է :

2. Անհաւատ Ժողովուրդներու (69) ցանքէն [հարկ] կը դանձուի հնդորդի համաձայն : Այն բարեբեր հողերէն , ուր կ'աճին բանջարեղէնն ու բամպակը . . . (70) [հարկը] կը դանձուի տասանորդի համաձայն :

Այդիներու իւրաքանչիւր հարիւր որթատունկէն կը դանձուի երկու ադէն :

Բեսմ-ի ըրդատիէն՝ իւրաքանչիւր անհատէն կը դանձուի տասն օր ըրդատլըդ (71), որուն իւրաքանչիւր [օրը] երկու օսմանեան [ադէնէն]՝ կ'ընէ քսան ադէն . ասոր ալ դանձումին ժամանակը մահմե-տականներու նման կէսի վրայ է : Կրկին՝ իւրաքանչիւր տունէ կ'առնուի երեք բեռ փայտ , որ երկուքական ադէնէն՝ կ'ընէ չորս ադէն . ասոնց ալ դանձուելու ժամանակը մահմետականներուն վճարած ատենն է , որ յիշուած է վերը :

Կրկին՝ անհաւատ Ժողովուրդի իւրաքանչիւր տունէն կ'առնուի երեք հաւ , որուն իւրաքանչիւրը երկու ադէնէն կ'ընէ վեց օսմանեան [ադէն] . ասոր ալ դանձումի ժամանակը կալի ատենն է :

Կրկին՝ անհաւատ Ժողովուրդէն կը դանձուի տարեկան երեք հարիւր թենկէ մազթու , որ կ'ընէ վեց հարիւր օսմանեան ադէն . կը դանձուի հարիւր թենկէ չորս ամիսը անգամ մը : Բայց [մազթու] չի դանձուի քաղաքի անհաւատներէն . կրկին՝ անոնցմէ (72) կ'առնուի երեսուն երկու պաթման (73) շիրէ (74) մազթու :

3. [Որպէս] բեսմ-ի մեկաշի (75) թէ՛ մահմետականէն եւ թէ՛ ալ անհաւատէն կը դանձուի մէկական թենկէ ջորիէն , էգ էշէն եւ կովէն , [որ] կ'ընէ երկու ադէն : Անծին կովէն կը դանձուի կէս թենկէ , որ կ'ընէ մէկ օսմանեան [ադէն . իսկ] որպէս մերայի (76) կը դանձուի մէկ թենկէ երեք ոչխարէն եւ կ'ընէ երկու օսմանեան ադէն :

[Որպէս] բեսմ-ի ասել (77)՝ իւրաքանչիւր փեթակէ կ'առնուի մէկ նիւկի մեղր . նիւկին երկու հարիւր տիրհմ է :

[Որպէս] բեսմ-ի արուսիէ (78)՝ իւրաքանչիւր ամուսնացողէն կ'առնուի մէկ ոչխար :

Ջուլհակներու իւրաքանչիւրէն կ'առնուի տարեկան մէկ [ծրար] կտաւ :

Անհաւատներէն [դանձուելիք] յիշեալ այս [հարկերը] հիմնականօրէն որոշուեցան եւ հասոյթ արձանադրուեցան մատեանին մէջ :

Եւ բեամ-ի ասիապ չունին եղեր . կրկին ոչինչ արձանադրուեցաւ :

4. Թամղայի մասին ալ՝ երբ [ապրանքի] բեռն անցնի [ու] երթայ՝ իւրաքանչիւր բեռէն կը դանձուի մէկ թենկէ որպէս նողթա պաշը, որ երկու օսմանեան ազէի հաշիւով է : Եթէ ոչխար մորթուի քաղաք՝ մէկ ու կէս թենկէ կը դանձուի իւրաքանչիւր ոչխարէն, որ կ'ընէ երեք օսմանեան ազէ : Եթէ եղ մորթուի՝ կը դանձուի երեք թենկէ, որ կ'ընէ վեց օսմանեան [ազէ] : Եթէ ձի, ջորի եւ էջ ծախուի՝ իւրաքանչիւրէն կը դանձուի մէկ շահրուխի (79), որ կ'ընէ վեց օսմանեան ազէ, եւ եթէ ծախուի այլ բան՝ թաղմա չի դանձուիր : Խոլոր այս յիշուածները որոշուեցան այնպէս ինչպէս որ են [169] (80) :

Զ.

[110] ՊԱՏՃԷՆ ՄԱԼԱԹԻԱ, ԳԱՐԳԱՌ ԵՒ ՏԻՎՐԻԿ ԼԻՎԱՆԵՐՈՒ
ՎԱԳՖՆԵՐՈՒ ԵՒ ՄԻԻԼՔԵՐՈՒ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ,
ՈՐ ԿԸ ՏՐՈՒԻ ԸՍՏ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆԻ

Պոլիս՝ Պաշվեֆիլի արխիւ
Մատենի քիւ՝ 1013
Թուակամ՝ 1530

1. Յիշեալ դաւառներուն մէջ գտնուող գիւղերու, ցանքատարածութիւններու, չիֆթլիքներու, բանջարանոցներու, ծառերու եւ տասանորդի [ենթակայ] այլ [բաներու] տասանորդն ինչ որ է, հին օրերէն մինչեւ մեր այս օրը, կը դանձուի կրկնակ տասանորդի [հաշիւով, որուն] մէկը կը կոչուի մալիքիանէի համար, եւ միւսը՝ տիվանիի համար : Մէկ մասը վազֆ կամ միւլք եղող գիւղի մը մէջ արտադրուող ընդեղէնի եւ այգիներու մուգաթաաներէն եւ այլ նիւթերու տասանորդէն ինչ որ դանձուի՝ հողատէրը կը բաժնուի վազֆի եւ միւլքի տէրերուն հետ :

2. Աւատատիրոջ եկամուտն է այն ինչ որ [կը գոյանայ] բեամ-ի չիֆթէն, բեամ-ի բենաքէն (81), [բեամ-ի] ճապայէն (82), բեամ-ի արուսանէէն (83), բեամ-ի աղնեմէն (84), պատ-ի հաւպայէն եւ սովորութային այլ հարկերէն . [111] վազֆի եւ միւլքի տէրերը միջամուխ պիտի չըլլան :

3. Ինչ որ գոյանայ սովորութային հարկի [ենթակայ] չեղող ցանքատարածութիւններէն, դաշտերու եւ չիֆթլիքներու տասանոր-

դէն՝ վազֆի եւ թիմարի տէրերը պիտի բաժնուին աւատի տիրոջ հետ :

4. Ինչ որ առնուի բեամ-ի գոյանէն (85) եւ բեամ-ի ասիւսէն՝ պատաստէրը եւ վազֆի ու միւլքի տէրերը կ'առնեն միասին : Ուր որ շինուի փեթակին մեղրը՝ հարկը կը պատկանի այդ վայրի սիրահինն եւ վազֆի ու միւլքի տէրերուն : Սանճադպէյերը, վազֆի եւ միւլքի տէրերը չեն կրնար հարկ պահանջել՝ մեր բայայինն է ըսելով :

5. Լրիւ տարին գործող ջրաղացէն կը դանձուի վաթսուն հինգ ազէ, վեց ամիս գործողէն՝ երեսուն, եւ երեք ամիս գործողէն՝ տասներկու ազէ : [որպէս բեամ-ի ասիւս] : Աւելին պիտի չդանձուի [111] (86) :

Է.

[170] ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԵՒԵՐԵԿ ԼԻՎԱՅԻ

Պոլիս՝ Պաշլիքիի արխիւ

Մատեանի քիւ՝ 840

Թուական՝ 1518

1. Բացատրութիւն Սեւերեկ լիվայի կանոնադրութեան՝ ըստ Հասան փատիչահի կանոնին :

2. Նախապէս դիւղարնակ մահմետական թէ անհաւատ բայաներէն ան որ չիֆթ ունէր եւ կարող էր մէկ չիֆթի հող մշակելու՝ այդ տեսակներէն կը դանձին մէկ էշրեֆի որպէս բեամ-ի չիֆթ, որ կ'արժէր քառասուն օսմանեան ազէ. կրկին նոյնպէս որոշուեցաւ : Գանձելու [ժամանակը] դարնան սկիզբը՝ Նեվրուզն (87) է :

3. Յանքերէն կը դանձուի հնդորդի համաձայն. կրկին այդպէս հաստատուեցաւ :

4. Կրկին՝ իւրաքանչիւր տունէ կ'առնուի տարեկան երեք օրուան ըրդատիէ, որուն իւրաքանչիւր օրը երեք ազէէն՝ կ'ընէ ինը ազէ : Գանձելու ժամանակը՝ կէսը դարնան սկիզբը ցանքի ատենն է, եւ միւս կէսն ալ՝ հունձքի ատենը :

5. Բեամ-ի ասիւսը՝ [ջրաղացը] քանի ամիս որ աշխատի՝ ամսական կը դանձուի մէկ շահրուխի, որ կ'ընէ վեց օսմանեան ազէ. կրկին նախկինին պէս հաստատուեցաւ :

6. Ատեթ-ի աղնեմը իւրաքանչիւր հարիւր ոչխարի մէկ ոչխար է. կը դանձուի նաեւ չորս թենկէ. [171] այդ հաշիւով երկու ոչխարին կ'իյնայ մէկ ազէ : Ասոր ալ դանձուելու ժամանակը դարնան սկիզբը Նեվրուզն է : Այն ատեն պէտք է դանձել :

7. Այգիներէն որոշուեցաւ [հարկը] դանձել տասանորդի համաձայն :

8. Սակայն յիշեալ լիվայի գիւղերու բնակիչներէն կը դանձուի երեք հարիւր սիքքէ (88) մազթու, որուն հարիւր յիսունը կը կոչուի

դարա սաղղուն (89), եւ [մնացեալ] հարիւր յիսունն ալ խարճ-ի թիմար (90) : Այս յիշեալ երեք հարիւր սիքքէն վերցուելով՝ ոչինչ արձանադրուեցաւ մատենին մէջ :

9. Որպէս շահնեկի՝ իւրաքանչիւր կալէն կ'առնուի մէկ զարպիլ (91), որ ըստ բաղդատութեան՝ Պոլսոյ մէկ քիւլէն է :

10. Բեսմ-ի իյոիէն (92) մէկ ոչխար է իւրաքանչիւր զիւղէ :

11. Բեսմ-ի Նեվրուզիէն (93) ալ ըստ կանոնադրութեան է :

12. Զուլհակնեբէն ալ տարեկան մէկ թենկէ կ'առնուի եղեր, վերցուելով՝ հասոյթ հարձանադրուեցաւ :

13. Բեսմ-ի արուսիէն մէկ ոչխար է իւրաքանչիւր ամուսնացողէն. կրկին նոյնպէս որոշուեցաւ :

14. Թամղայի մասին ալ՝ մետաքսի անցնող [ու] դացող բեռէն կ'առնուի կէս էշերֆի, որ քսանհինգ օսմանեան ազէն է : Ասկէ զատ՝ որքան որ այլ [ապրանքի] բեռ անցնի [ու] երթայ՝ իւրաքանչիւրէն կը դանձուի չորս թենկէ, որ կ'ընէ ութը օսմանեան ազէն : Կրկին՝ [որպէս] նոյթա պաշը՝ իւրաքանչիւր բեռէն կ'առնուի մէկ թենկէ, որ երկու օսմանեան ազէնի հաշիւով է : Գասապանբէն ալ որոշ քանակով մազթու ունին [հողին տէրերը] : Եթէ [չուկայ] բերուելով թարմ պտուղ ծախուի՝ իւրաքանչիւր բեռէն կը դանձուի երկու սեւ ազէն : Իսկ մատենին մէջ հարձանադրուած մնացեալ [ապրանքներու թամղան] որոշուած է ըստ նախկին կանոնադրութեան [171] (94) :

Ը.

[204] ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԶՈՒԳՈՒՐ ԱՊԱՏ ՎԻԼԱՅԵԹԻ (95)

Պոլիս՝ Պաշվեֆիլի արխիւ,

Մատենի քիւ՝ 735

Թուակամ՝ Գաֆուրիի Ժամանակաշրջան

1. Ատանայի լիվային մէջ բնակող թուրք եւ անհաւատ բայաներուն իւրաքանչիւր ամուսնացածէն որպէս բեսմ-ի խանէ (96) տարեկան կը դանձուի քսանհինգ փարա (97), որ կ'ընէ յիսուն օսմանեան ազէն : Եիշեալ հարկին կէսը կը դանձուի սուլթանական Նեվրուզին, եւ միւս կէսն ալ՝ աշնան վերջին ամսուն սկիզբը :

2. Եիշեալ վիլայեթին մէջ բնակող անհաւատներու իւրաքանչիւր ամուսնացածէն եւ ամուրիէն սուլթանական Նեվրուզին [կը դանձուի] քսանչորսական փարա ճիզիէ (98), որ [կ'ընէ] քառասուն ութը [ազէն] : Նախապէս, ըստ հին մատենին, ճիզիէն որոշուած էր Հալէպի յիսուն ազէն, որ կ'ընէ քսան[հինգ] օսմանեան [ազէն] : Ներկայիս՝ երբ արքայական հրամանով նոր արձանադրութիւն կատարուեցաւ Զուզուր Ապատ վիլայեթին մէջ՝ յիշեալ անհաւատներու

ճիղիէն նուազ ըլլալով՝ [դանուեցաւ որ անիկա] հակառակ էր Շերիաթին եւ կանոնին, ուստի՝ որպէսզի յիշեալ անհաւատները խարաճ տային Շերիաթին եւ կանոնին համաձայն՝ ճիղիէի քանակը որոշուեցաւ ըստ բարձրագոյն հրամանին :

3. Յիշեալ վիլայէթին մէջ բերդերուն ծառայող անհաւատները իրենց պարտաւորութեան փոխան բեւմ-ի խանէ արձանագրուած չըլլալով հին մատեանին մէջ՝ ներկայ մատեանին մէջ ալ չարձանագրուեցաւ [բեւմ-ի խանէն] : Որովհետեւ Նախշա բերդը բնակող անհաւատները կ'օժանդակեն քիւլեքի բաճին (99), եւ առ այդ՝ իրենց ձեռքըն ունենալով բարձր հրամանագիր՝ դերծ պիտի կացուցուին բեւմ-ի խանէէն եւ ճիղիէէն : [Ուստի]՝ ճիղիէ եւ բեւմ-ի խանէ չարձանագրուեցաւ անոնց [անունին] : Յիշեալ բերդերու մէջ բնակող անհաւատներու ճիղիէն կը դանձուի արքունիքին համար : Աւաններու մէջ [205] բնակող անհաւատներու ճիղիէները եւ հարկերը հին մատեաններուն մէջ սանձադպէյերուն բաժին արձանագրուած ըլլալով՝ այժմ նոր մատեանին մէջ ալ նոյնպէս արձանագրուեցան :

4. Էօզեր լիւլային մէջ բնակող թուրք ըայաններուն բեւմ-ի խանէն պիտի դանձուի ըստ լիւլայի օրէնքին : Թարսուս լիւլային մէջ բերդ բնակող թուրք ըայաններուն իւրաքանչիւր ամուսնացածէն հարկ պիտի դանձուի վաթսուն փարա, որ կ'ընէ երեսուն երկու (100) օսմանեան [ազէ], իսկ ամուրիներու [իւրաքանչիւրէն]՝ երկու փարա, որ կ'ընէ չորս օսմանեան [ազէ] : Սիս լիւլային մէջ բնակող թուրք ըայաններու իւրաքանչիւր ամուսնացածէն հարկ պիտի դանձուի տասնչորս փարա, որ կ'ընէ քսանութթ օսմանեան (ազէ), իսկ ամուրիներու [իւրաքանչիւրէն]՝ երկու փարա, որ կ'ընէ չորս օսմանեան [ազէ] : Հին մատեանին մէջ յիշեալ հարկերը արձանագրուած էին Հալէպի ազէէով . այժմ Հալէպի ազէն վերցուելով՝ նոր մատեանին մէջ արձանագրուեցան օսմանեան [ազէով] :

5. Էօզեր լիւլային մէջ կարգ մը հողամշակներէ մէկ վեցերորդի եւ կարգ մը ուրիշներէ մէկ եօթներորդի [համեմատութեամբ] հարկ կը դանձուի ցորենէն, դարիէն, դարմանէն, չուճմայէն, բամպակէն, սոխէն եւ չիրէէն : Տեղը արձանագրուած է :

6. Բրինձի գետեզերեայ հողերու մասին . ըստ արքայական հրամանին՝ օրէնքն այն է, որ քսան դանթար սերմ ցանուող գետեզրի մը ըէիս (101) եւ սազա (102) եղողները կը ցանեն երկուքական դանթար սերմ, [որուն] մէկական դանթարը պարտաւորութեան համար ըլլալով՝ [անկէ] ոչինչ կը դանձուի արքունիքին կողմէ : [Մնացեալ] մէկական դանթարէն պիտի դանձուի արքունիքին բաժինը՝ ինչպէս այլ գելադաշիներէն :

Յիշեալ գետեզերներուն վրայ մէկ երրորդի դրութեամբ աշ-

խատողներ ներուած են եւ զերծ՝ դիւանական աւարիդէն եւ սովորութեան չարկերէն՝ իրենց ծառայութեան ընթացքին։ Կէս առ կէսի զրութեամբ աշխատողներ՝ այլ բայաներու նման պիտի մճարեն տուրքերը եւ դիւանական չարիքը, երբ հասնի ժամանակն [անոնց դանձումին։ Իսկ] եթէ դուրսէն՝ բրինձի մշակումին ծանօթ կարգ մը մարդեր ուղեն կէս առ կէսի դրութեամբ օգտադործուող գետեղերքները շահագործել մէկ երրորդի զրութեամբ՝ գետեղերքներուն օգտադործումն անոնց տալով՝ յիշեալ պարտաւորութիւններէն զերծ պիտի կացուցուին անոնք։

Երբ բրինձ ցանուելիք ըլլայ՝ գետեղի իւրաքանչիւր պատասխանատու տուեալ գետին ջուրով բաւարարուելիք հողը բաժնելով պիտի պատրաստէ զայն իր քիւրեքձիներուն (103) միջոցով։ Այդ տարի ուր որ բաժին իյնայ բրինձի [ցանքին]՝ պիտի հրահանուէ [այդ բաժնի] հողատիրոջ, որ ոչինչ ցանէ։ Բրինձ ցանողները ժամանակին պատրաստելով ցանուելիք հողը՝ անմիջապէս պիտի պատրաստեն [զայն] առանց տնտնալու։ Որքան որ սերմնցու անհրաժեշտ է՝ էմինները պիտի տան արքունիքէն եւ ցանել տան։ Սերմնցուն ցանուելէ ետք՝ բրինձ ցանողն իր պարտաւորութիւնն ինչ որ է՝ պիտի կատարէ։ Բրինձին լրիւ հասուննալէն ետք՝ պիտի ծեծեն զայն ու կալսեն, որմէ ետք՝ էմին եղողները հասնելով՝ արքունիքէն [տրուած] սերմնցուն վերցնելէ ետք զատաւորներու միջոցով՝ պիտի հանեն արքունիքին բաժին [իւնալիք] մէկ երրորդը կամ կէսը. [ապա] մնացեալէն պիտի հանուի հողատիրոջ տասանորդը եւ մնացեալը պիտի տրուի քիւրեքձիներուն։

7. Քանի ամիս որ դործէ ջրադացը՝ ամսական հինգական ազէ հարկ պիտի առնուի [անկէ]։

8. Բեսմ-ի արուսիէն քանութը ազէ է կոյս աղջիկէն, իսկ այրի կնոջմէն՝ [անոր] կէսը. կը դանձէ ժողովուրդին տէրը։

9. Ատանա քաղաքը ուղտով եկող բամպակի բեռէն ինը ազէ, իսկ ձիու եւ ջորիի բեռէն [ինը ազէին] կէսը պիտի դանձուի։

[206] 10. Որպէս բեսմ-ի եաթագ. (104) դուրսէն եկող ոչխարի եւ այծի հօտէն, որ երեք հարիւր ոչխար է՝ պիտի առնուի մէկ ոչխար. աւելի կամ պակաս ըլլալու [պարագային]՝ պիտի դանձուի ըստ այնմ։

11. Դուրսէն դալով Ատանա դաղային մէջ իւրաքանչիւր ձմերուղէ բեսմ-ի տուխան (105) պիտի առնուի տասական ազէ, իսկ յիշեալ վիլայէթի այլ վայրերուն մէջ ձմերուղներէն՝ անոր կէսը։

12. Իւրաքանչիւր չորս ոչխարէ մէկ փարա պիտի առնուի [որպէս] բեսմ-ի աղնեմ (106)։

13. [Փեթակի] իւրաքանչիւրէն մէկ փարա պիտի առնուի [որպէս] բեսմ-ի քիւվարէ։

14. Իւրաքանչիւր ցուէն կը դանձուի երկու վարա արքունիքին համար :

15. Իմամները (107) զերծ են դիւանական աւարիղէն :

16. Գլուխ կոտրելէն՝ քսան օսմանեան ազէէ, եւ դանակի վէր-
քէն, որ մահ էի պատճառեր, քառասուն ազէէ [տուգանք] պիտի դան-
ձուի :

17. Այլ ոճիր դործուելու պարագային պէտք է դիմել օսման-
եան հին օրէնքներուն [206] (108) :

Թ .

Յաջորդ վաւերագիրը, որ հոս կը տրուի՝ հատուած մըն է լոկ
այն կանոնագրութեան, զոր Տրապիզոնի սաննագայէ Էօմէր Պէյը
խմբագրեց Կարինի վիլայէթին համար : Տալէ հոս Իւսէփիայի եւ Սե-
լանիկի կանոնագրութիւնը, որ առաւելաբար կը խօսի հողի կանո-
նական տեսակներուն մասին (արգ-ի էօշրիէ, արգ-ի խարանիէ եւ
արգ-ի մեմլեֆեթ կամ արգ-ի միքի) Օսմանեան Կայսրութեան մէջ՝
Պարսեան կու տայ մասն Ռումի վիլայէթին կանոնագրութեան այս
հատուածը, որ կը խօսի հողի կանոնական չորրորդ տեսակի մը մա-
սին : Իսկ Ռումի վիլայէթը Կարինի վիլայէթն է :

Հոս կու տամք այս հատուածն ալ պարզապէս Պարսեանի տուած
վաւերագիրներէն հայութեան հետ աղերս ունեցող կանոնագրու-
թիւններն ու անոնցմէ տրուած հատուածներն ամբողջութեամբ տը-
ւած ըլլալու համար :

[300] ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՐՈՒՄ ՎԻԼԱՅԵԹԻ

Անգարա, քափուի եւ
հանրային հարկերու սպասար-
կութեան տնօրէնութիւն
Մատեանի թիւ՝ -
Թուական՝ 1574 (982)

Բայց Ամասիոյ եւ Սերաստիոյ չըջակայքը [կը բաղկանայ]
Րումի վիլայէթ անունով ծանօթ քանի մը սանճագներէ : Այդ սան-
ճագներն ունին [իրարմէ] տարբեր վիճակներ : Օրինակի համար՝ բա-
ցի չիֆթլիքի մը յիսուն եօթը ազէէ եւ կէս [չիֆթլիքի մը] քսան ու-
թը ազէէ խարան-ը մուլազազաֆէն՝ երկու տասանորդ կ'առնուի ըն-
դեղէններէն եւ այլ բերքերէն . մէկը կը կոչուի տիվանի ու կ'առնուի
սիփահներու դասակարգին կողմէ, իսկ միւսը՝ էօշը-ի մալիքիանէ ու
կ'առնուի միւլքերու եւ վազֆներու տէրերուն կողմէ : [Այս դը-
րութեան] պատճառը յիշեալ չըջանին արգասաբեր ըլլալով հնդորդ

[արձանագրուած եւ անոր] կէսն ալ մէկ դասակարգի որոշուած [ըլլալը չէ] : Իրաւամբ կանոնական չէ այս մէկը : Թերեւս իրականութիւնն այն է, որ հին օրերուն երբ կը դրաւուէր այդ շրջանը՝ որոշուեցաւ ժողովուրդն իր տեղը ձգել, [պայմանով որ] այլ երկիրներու պաշտպանուած ժողովուրդին նման ճիշդի վճարէր իր մեծաւորներուն : որոշուեցաւ իրեն յանձնուած հողէն, որ որպէս ստացուածք չտրուեցաւ իրեն, [զանձել] խարածը մովաղղաֆ եւ խարածը մուգասեմէ : Մահմետական պէյթիւմալին յանձնելէ ետք՝ տուեալ հողամասը նահիէ առ նահիէ որպէս ստացուածք տրուեցաւ կարգ մը մեծամեծներու : Բումէլիի մէջ կարգ մը վեղիւրներու եւ մեծամեծներու ստացուածք տրուելուն նման յանոնց ալ ստացուածք տրուեցաւ՝ կալուածին խարածը մովաղղաֆ եւ խարածը մուգասեմէն պէյթիւլխարածին տրուելու պայմանով : Յիշեալներն ալ շատ տեղեր նորոգելով եւ [զանոնք] կապալի տալը գտնելով դժուար եւ խրտչեցընող, եւ թերեւս ալ [այդ մէկն] անկարելի ըլլալով ըստ սովորութեան, իւրաքանչիւրն իր կալուածն եղող նահիէն վարձու տուաւ նախապէս զայն օգտադործող բայաներէն եւ ուրիշներէն կարգ մը մարդոց : Եւ երկուստեք որոշեցին որ ամէն մարդ ցանէր ու հնձէր իր ձեռքն եղող վայրը եւ սիփահիին տալէ ետք խարածը մովաղղաֆն ու մուգասեմէն՝ ընդեղէններուն եւ այգիէն, պարտէղէն ու բանջարանոցէն հասնող բերքին տասանորդն ալ տար սեփականատէրերուն, որպէս վարձքն անոնց հողին : Ասոր վրայ անոնք օգտադործեցին [հողը] եւ աշխատեցան : Ժամանակի ընթացքին՝ մալիքներէն եւ [հողն] օգտադործող բայաներէն մահացողներու ժառանգորդներն ու յետորդներն ալ ընդունեցան իրենց նախորդներուն յարգած սովորութիւնը եւ հաստատ մնացին անոր, վրայ : Էօշը-ի մալիքիանէ կոշուածն այս է : Այս մէկը պատահեցաւ եւ արձանագրուեցաւ ինը հարիւր ութսուն երկու (982) տարուան առաջին ամսուն [300] (108ա) :

Փ.

Այս շարքին մէջ տրուող կանոնագրութիւններու վերջինը, սակայն, բոլորովին այլ նկարագիր ունի : Հոս կը տրուի անիկա պարզօրէն ցայց տալու համար արեւմտահայ կեանքի այլ մէկ երեսն ալ, որովհետեւ տնտեսականին փոխին ի վեր հոն կարելի է գտնել նաեւ բարոյական մէկ երեսը կեանքին : Վաւերագիրը գուրկ չէ հետաքրքրութեմէ՝ հակառակ իր բովանդակած կրկնութիւններուն եւ մերթ՝ տեղտեղ առկայ եղող աղաւաղումներուն, որոնք կու գան գրիչներու եւ ընդօրինակողներու անփութութենէ : Ինչ որ ալ ըլլայ վիճակն այս վաւերագիրին, անիկա սերտօրէն առնչուած կը մնայ նիւթականին, որ, այս անգամ, կը գանձուի ոչ թէ որպէս հարկ կամ տուրք, այլ մանա-

ւա՛նդ որպէս տուգանք տեղի ունեցող ռիսկներու, ընկերութեան եւ անհատ մարդերու դէմ կատարուող օրինազանցութիւններու, բարոյական մեղանշումներու եւ գործուող ապօրինութիւններու համար: Կանոնագիրը կ'աւարտի հարկային որոշ յօդուածներով, որոնց միւսներուն կարելի է հաճդիպիլ Պոզոֆի գազայի կանոնագրութեան մէջ (109), եւ որսնք, սակայն, ունին որոշ եւ մերթ հիմնական տարբերութիւններ: Կանոնագրութեան քարգմանութիւնը կատարուած է նոյն սկզբունքով՝ ինչ որ եղած է սկզբունքը առաջին ինը կանոնագրութիւններուն, միայն քէ այս վաւերագրի վերջին յօդուածէն ետք Պարֆանի տուած կանոնագրութիւնն ունի ութուկէս տողանի հատուած մըն ալ «Անվալ-ի Ձերինիան պեր-միւնեպ-ի ատեթ-ի գատիւ-ի Ձիւլգատիքիէ» վերնագրով (110), որուն քարգմանութիւնը զանց առնուած է հոս, արեւմտահայութեան հետ ամեր աղերս մը ունեցած չլլալուն համար (111):

[120] ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԼԱ-ԻԻՏ-ՏԵՎԼԷ ՊԵՅԻ

1. Առաջին՝ ով որ ճամբայ կտրելով աւազակութիւն ընէ, պիտի պատժուի:

2. Եւ ով որ ձի կամ ջորի գողնայ՝ տասնութը ոսկի պիտի առնուի [անկէ]՝ եթէ ձեռքը չկտրուի. եթէ եզ գողնայ եւ ձեռքը չկտրուի՝ պիտի առնուի տասնչորս ոսկի: Ով որ ընկեր ըլլայ այս յիշեալներուն (112) եւ [ընկերակիցներն] ըլլան երեք [կամ] չորս հոգի՝ լրիւ տուգանք պիտի դանձուի [անոնց] իւրաքանչիւրէն: Իսկ ոչխարի եւ այծի գողութեան համար պիտի դանձուի հինգ ոսկի:

3. Եթէ մէկը գողնայ երկու ձի, կամ երկու ուղտ, կամ երկու եզ, կամ երկու ջորի, կամ երկու ոչխար, կամ [գողնայ] երկուքէն աւելի, եւ մէկ կամ երկու անգամ՝ լրիւ տուգանք պիտի առնուի [անկէ՝ գողցուած] իւրաքանչիւր կենդանիի համար: Եթէ գողնայ երեքէն աւելի, պիտի վճարէ երեք կենդանիի հարկ, եւ [միայն] մէկ անգամ:

4. Եթէ [մէկը գողնայ] փեթակ, քուրջ (113), ոտնակապ, ասպանդակ, եւ կամ ասոնց նման այլ առարկայ եւ [գողցածին] գինն ըլլայ տասը աղէ՝ հինգ ոսկի պիտի առնուի [անկէ]:

5. Եթէ ոեւէ մէկը խորտակէ տուն մը, եւ ձեռքը չկտրուի [այդ արարքին համար]՝ քսան ոսկի պիտի առնուի [անկէ], եւ եթէ դուռ խորտակէ եւ ձեռքը չկտրուի՝ պիտի առնուի տասնհինգ ոսկի:

6. Այն գողին, որուն ձեռքը կը կտրուի, եթէ մօտն է [իր] գողցած կենդանին՝ պիտի առնուի անիկա եւ տրուի իր տիրոջը. իսկ եթէ իր մօտ չէ՝ պիտի տուգանուի [գողը]:

[121] 7. Յանցաւոր չէ ան, որ կը զարնէ ու կը սպաննէ գողը, անոր գողութիւն ըրած միջոցին:

8. Երբ որեւէ բան կասկածին մէկէն [որ] յայտնի է] գողութեամբ՝ աւանդական սովորութեան համաձայն պիտի տուգանուի [անիկա] :

9. Եթէ ոեւէ մէկը տուն մը մտնէ գիշերով, եւ [ուր] արտօնուած չէ իր մուտքը, եւ ըստ աւանդական սովորութեան տանտէրը զարնէ եւ սպաննէ [զայն]՝ յանցաւոր չէ [տանտէրը] :

10. Ով որ շնանայ (114) եւ չերիաթով կամ աւանդական սովորութեամբ փաստուի [արարքը]՝ եթէ չափահաս է եւ ամուրի՝ [անիկէ] կ'առնուի տասներկու ոսկի, իսկ եթէ ամուսնացած է եւ չի քարկոծուիր [իր արարքին համար]՝ պիտի առնուի տասնհինգ ոսկի :

11. Եթէ [մէկը] պատուաղրկէ [իր] նշանածը՝ շնացումի համար չէ [իր արարքը] . բայց եթէ երթայ անոր մօտ եւ յարաբերութիւն չունենայ [անոր հետ]՝ հինգ ոսկի պիտի առնուի :

12. Ով որ տուն մտնէ շնանալու մտադրութեամբ, կամ բռնէ ու համբուրէ [կին մը] եւ [այդ] ըլլայ համբուրուողին կամքովը՝ [այդպիսի մէկէն] պիտի դանձուի շնութեան տուգանքը : Եթէ բռնութեամբ է տուն մտած, կամ համբուրած, կամ պատուաղրկած՝ հինգ ոսկի պիտի առնուի անկէ : Եթէ աղջիկն է համբուրողը՝ անկէ պիտի առնուի շնութեան տուգանքը . եթէ աղջիկը համբուրուի իր կամքովը՝ տասը-տասներկու ոսկի պիտի առնուի անոր հօրմէն կամ եղբորմէն . եթէ [տղամարդը] բռնութեամբ համբուրեց՝ անկէ պիտի դանձուի երկու կողմի շնացումի տուգանք :

13. Եթէ ոեւէ մէկն իր կիներ տեսնէ օտարին հետ [անոր] զբարձանալու եւ զբաղելու պահուն եւ սպաննէ զանոնք՝ արիւնապարտ չէ . մեղաւոր դարձաւ ըստ աւանդական սովորութեան ըսելով՝ բան պիտի չառնուի [անկէ] :

14. Եթէ տեւական կաւատութիւն ընել սովորութիւնն է մէկուն՝ [անոր] երեսը մրոտելով պիտի խայտառակեն [զայն] հանրութեան առջեւ, եւ պիտի կտրեն [անոր] քիթն ու ականջը . [իսկ] եթէ [կաւատութիւնն անոր տեւական գործը] չէ՝ հինգ ոսկի պիտի առնեն [անկէ իր արարքին համար] :

15. Եթէ քանի մը տղայ յարձակին տունի մը վրայ եւ աղջիկ առեւանդեն՝ տասնհինգական ոսկի պիտի առնուի անոնց իւրաքանչիւրէն : Եթէ մարդ վիրաւորեն [այս գործի պահուն]՝ չերիաթով տիէթը (115) առնելով պիտի տան տիրոջը : Եթէ տղայ պղծեն՝ քան չորս ոսկի պիտի առնուի [անոնցմէ, իսկ] եթէ երկուստեք է սէրը՝ շնութեան տուգանք պիտի սահմանուի երկու կողմին ալ, եւ իւրաքանչիւրէն ալ պիտի առնուի շնութեան տուգանքը :

16. Եթէ բռնութեամբ տանել է ետք աղջիկը՝ ամուսնացնեն [զայն]՝ ապօրինի է այդ ամուսնութիւնը . պէտք է ամուսնալուծել,

[այլապէս ոչ]՝ եթէ յարմար տեսնէ խնամակալը՝ կրկին՝ եթէ [տըղան] յարարերի [աղջկան] կամքովը եւ ամուսնանայ, եւ խնամակալը համաձայն չգտնուի՝ կարելի է ամուսնալուծուիմը՝ որովհետեւ որբապղծութիւն է [այդ ամուսնութիւնը] :

17. Եթէ պատանիներ [սեռային] յարարերութիւն ունենան [երարու հետ]՝ աւելի կարգապահութեան հրաւիրելով սաստելու է [զանոնք] . սակայն տուգանք պիտի չառնուի [անոնցմէ] :

18. Ուր որ արիւն թափէ, պիտի սպաննուի, եթէ արժանի է մահուան. իսկ եթէ արժանի է հաշտութեան եւ տիէթի՝ բացի տիէթէն՝ [անկէ] պիտի առնուի երեսուն ոսկի տուգանք :

19. Եթէ մէկը ակոյս փշրէ եւ ակոսն փշրուողն ինք. պատճառ դարձած ըլլայ կռիւին՝ շերիաթով դանձելի տիէթին կէսը պիտի առնեն [անկէ], իսկ ութը ոսկի ալ՝ ակոսն փշրողէն :

20. Եթէ [մէկը] մատ կոտրէ, կամ գլուխ ճեղքէ քարով, կամ փայտի կտորով, կամ ալ որեւէ կարծր իրով՝ հինգ ոսկի պիտի առնուի [անկէ, եւ որուն] մէկը պիտի տրուի գլուխը ճեղքուածին :

[122] 21. Սակայն եթէ [անիկա] ձեռքով զարնէ [եւ] փշրէ [ակոսն], կամ օձիքը պատռէ, կամ [ալ] փետտէ մաղն ու մօրուքը [ուրիշին]՝ երեսուն ազէէ պիտի առնուի [անկէ] :

22. Եթէ երաշխս կամ քերթուած յառաջանայ քարով կամ փայտով՝ ճեղքուածքի համազօր [է] : Եթէ [այդ մէկը] կատարուի ձեռքով կամ եղունգով՝ համազօր է քիթ արիւնելուն :

23. Ուր որ կոտրէ [ուրիշի մը] թեւը կամ ոտքը, կամ որեւէ մէկ մասը մարմինին եւ անկողին իյնայ [երկրորդ անձը], ու քանի մը օր ետ մնայ [իր] աշխատանքէն, անոր անգործ մնացած միջոցին կոտորողէն պիտի առնուի տասնչորս ոսկի. իսկ եթէ [կոտորողը] սխալմամբ ընէ՝ պիտի առնուի հինգ ոսկի :

24. Աչք հանողին [յճարելիք] տիէթը [որ] տասնչորս ոսկի [է]՝ առնուելով պիտի տրուի [աչքին] տիրոջը. եթէ [աչք հանողն] ըրած է սխալմամբ՝ [անկէ] պիտի առնուի հինգ ոսկի :

25. Եթէ [ոեւէ մէկը] քարով կամ փայտով [ուրիշի մը] ականջին զարնելով խլացնէ զայն՝ վճիռն աչքի վճիռն պէս է . օրէնքով կ'առնուի տիէթը. եթէ [արարքը] դիտաւորեալ կերպով չէ [եղած]՝ պիտի առնուի չորսական ոսկի. այլապէս՝ պիտի առնուի հինգ ոսկի :

26. Եթէ [ոեւէ մէկը] հարուածէ կարծր իրով մը եւ երաշխս յառաջացնէ՝ մէկ ոսկի պիտի առնուի [անկէ] . եթէ [այդ արարքն] ընէ ձեռքով, բռունցքով կամ կիցով, պիտի առնուի երեսուն ազէ. եթէ մաղ ու մօրուք փետտէ, նոյնպէս պիտի կատարուի. իսկ եթէ զարնէ սուրով, դանակով կամ նետով եւ հետք ձգէ [հարուածը]՝ պիտի առնուի տասը ոսկի :

27. Եթէ [ոեւէ մէկը ուրիշ մը] հալածէ սպաննելու կամ վիրաւորելու նպատակով՝ [եւ հալածուողն] ազատի ու դառնայ [ինք] վիրաւորէ [հալածողը], կամ կոտորէ թեւն ու մատն [անոր]՝ բան չկայ (116) :

28. Եթէ [մէկը] սուր կամ դանակ հանէ, կամ նետ ցոյց տայ դողութիւն կատարելու [համար], կամ զարնելու նպատակով հարուածէ [ուրիշը՝ անկէ] պիտի առնուի երկու հարիւր ազէ՝ եթէ հարուածէ իր սուրովը, նետովը կամ դանակովը եւ անկողին ձգէ [հարուած ստացողը], պիտի առնուի տասնչորս ոսկի. [իսկ] եթէ հարուածէ, բայց չվիրաւորէ, եղածի պէս է. պիտի առնուի տասնչորս ոսկի :

29. Եթէ վիրաւորուի կռիւի տուն տուողը, օրինականօրէն անկէ կ'առնուի տիէթին կէսը :

30. Եթէ համբողջն ոչխար պահուի՝ մէկ ազէ [տուգանք] պիտի առնուի [պահուած] իւրաքանչիւր ոչխարէն :

31. Եթէ [ոմանք] գողնան հաւ, կանաչեղէն կամ թարմ պտուղ՝ զինն անոնց տիրոջը տալէ ետք՝ գողցողներէն պիտի առնուի քսան ազէ [տուգանք] :

32. Գիւղացին ձեռք [պիտի] չբարձրացնէ [իր] սիփահէին վրայ. եթէ վերցուց՝ տասը ոսկի պիտի առնուի [անկէ] :

33. Եթէ ցանք մտնէ անասունը, [անոր] տիրոջը պիտի զարնեն խարազանի հինգ հարուած, եւ [անկէ] պիտի առնեն հինգ ազէ [որպէս տուգանք] :

34. Մալի գողութենէն պիտի առնուի երեսուն ազէ :

Եթէ [ոմանք ներս] նային ոեւէ մէկուն դուռէն կամ պատուհանէն՝ քառասուն ազէ պիտի առնուի. [նայողէն] : Եթէ ժողովուրդէն է [նայողը]՝ շերիաթով պէտք է փաստել, եւ եթէ չէ, եւ հաւատացեալ մէկն է, պէտք է հաւատ ընծայել [անոր] խօսքին : Եթէ ժողովուրդէն եղողը սուտ ելլէ՝ հինգ ոսկի պիտի առնուի [անկէ], եւ կամ ալ կտրուի [անոր] լեզուն :

35. Եթէ [ոեւէ մէկը] կռէ թերի նիւկիով՝ ծախածին իւրաքանչիւր տիրահմին [վրայ] պիտի առնուի մէկ ազէ [տուգանք], եւ նաեւ պիտի ծեծեն [զինք ամիւլները] :

36. Եթէ [մէկը] վնաս հասցնէ [ուրիշին]՝ տանիք կամ ցանկապատ փլելով, վնասը պիտի հատուցանէ եւ հինգ ոսկի պիտի առնուի [անկէ որպէս տուգանք] :

37. Եթէ պտրտած միջոցին սիփահէին վիրաւորանք հասցնէ բային եւ ծեծէ [զայն], պարտն ու պատշաճը պիտի տնօրինեն սիփահէին :

[123] 38. Եթէ [մէկուն] դիտումնաւոր կերպով սուտ տեղը

[կատարած] վկայութիւնը երեւան ելլէ, կամ [մէկը սուտ] երդում ընէ [եւ յայտնուի]՝ մուր պիտի քսեն անոր երեսին եւ հինգ ոսկի տուգանք պիտի առնուի [անկէ] :

39. Եթէ [մէկը] հայհոյէ [ուրիշի մը] բերանին՝ պիտի ծեծեն [զայն] եւ երեսուն ազէն պիտի առնեն [անկէ որպէս տուգանք] : Երբ զինովն սթափի, կամ ութսուն ազէն պիտի առնուի [անկէ], կամ ալ՝ խարազանի ութսուն հարուած պիտի տան [անոր] :

40. Եթէ չարագործ մը կամ չարագործուհի մը զրպարտութիւն ընէ, շնութիւն [ընելու] պէս է. կամ խարազանի ութսուն հարուած [պիտի տան անոր], կամ ալ ութսուն ազէն պիտի առնուի [անկէ] :

Եթէ չափահասութենէ առաջ են այս չարիքները եւ տասնհինգ տարիքէն նուազ են [զանոնք կատարողները]՝ բան չկայ (117) : Սակայն վախճնելով սաստելու է :

41. Եթէ մարդերու խումբ մը յարձակի տունի մը վրայ եւ խումբէն որուն որ զէնք դալի [ու վիրաւորուի անիկա՝ վիրաւորողն] անպարտ է՝ նոյնիսկ եթէ սպաննէ կամ վիրաւորէ : Իսկ տունին վրայ յարձակողներէն կ'առնուի երկուքական ոսկի [տուգանք] :

42. Եթէ [աղջիկ մը] առնեն որպէս կոյս եւ պղծուած ելլէ, եւ եթէ [այս մէկը] դադտնի մնացած է շերիաթի սխալով՝ [աղջիկին կողմէն] լրի պիտի տան դրամօթիտը. իսկ եթէ դիտումնաւոր կերպով դադտնի է պահուած՝ դրամօթիտին կէսը :

43. Եթէ տասը ազէէն նուազ չէ մէկու մը գողցածին [արժէքը]՝ ձեռքը չկտրելով մէկ ոսկի պիտի առնուի [անկէ]. շերիաթով երկու մահմետականի վկայութիւնը բաւարար է [գողօնին արժէքը որոշելու համար] :

44. Եթէ մէկը հայհոյէ [ուրիշի մը] բերանին՝ դատաւորին առջեւ պիտի ծեծեն [զայն] :

45. Գոյուն բաճըն (118) մէկական օսմանի (119) պիտի առնուի թէ՛ [ոչխարը] ծախողէն եւ թէ՛ զնողէն :

46. Գազըասքերը (120) պիտի առնէ ութ ազէն իւրաքանչիւր պսակէն, եւ հարիւրէն երկուքուկէս ալ՝ ժառանգէն :

47. Գան ճերիմեսին (121) երեք հարիւր փարա է, վիրաւորելու տուգանքը՝ հարիւր յիսուն փարա, նետով եւ սուրով [վիրաւորելու] տուգանքը՝ [նոյնպէս] հարիւր յիսուն փարա. եթէ աղջիկ մը կամ կին մը պղծուի, [եւ] եթէ պղծողն ամուսնացած է՝ երեք հարիւր փարա. եթէ մէկը դայ թաղէ մը ալլ թաղ եւ տուն կողոպտէ՝ անձ դուրս քառասուն փարա [է տուգանքը] :

Եթէ տեղի ունենայ ստրուկի, ձիու, ուղտի կամ ջորիի փախուստ [եւ բռնուին անոնք՝ անոնց տուրքը] կը պատկանի Զիւլգատիր [ցեղախումբի] պէյերուն :

48. Իսկ եթէ աղջիկ մը կամ կին մը պղծուի եւ ամուսնացած մարդ է պղծողը՝ [անկէ կ'առնուի] հարիւր յիսուն փարա. եթէ ամուսնի մէկը պղծէ եւ յղի ձգէ [աղջիկը կամ կինը]՝ երեք հարիւր փարա : Եթէ մէկը մօտենայ իր նշանածին՝ հարիւր յիսուն փարա. դուռն կոտորողէն՝ յիսուն փարա, ահաւ փշրողէն՝ հարիւր յիսուն փարա, աչք կուրցնողէն՝ հարիւր յիսուն փարա. երաշխէտի տուգանքը՝ տասներկու փարա, եւ թեւ կտորելուն տուգանքը՝ ութսուն փարա [է] . եւ եթէ տեղի ունենայ ձիու, ուղտի, ստրուկի կամ ջորիի փախուստի եւ տոհմերու քեթխուտան (122) որոշելու [հարց]՝ այս բոլորը կը պատկանի պոյգէյիին (123) :

49. Իհիսասպի (124) համար կ'առնուի խանութպաններէն [տարեկան] հազար երկու հարիւր փարա, անկողին պատրաստողներէն՝ հազար փարա, հացադործներէն՝ երեք հարիւր փարա, խմորեղէն պատրաստողներէն՝ հարիւր փարա, խոհարարներէն՝ հարիւր փարա, հրուշակեղէն ծախողներէն՝ յիսուն փարա, զովացուցիչ ծախողներէն՝ յիսուն փարա, դղակալաճառներէն՝ հարիւր փարա, կօշկակարներէն՝ հարիւր փարա, առեւտրականներէն եւ փերեղակներէն՝ երկու հարիւր փարա, մսավաճառներէն՝ երեք հարիւր փարա, պանիրէն, մածունէն, ձուկէն եւ ասոնց նմանող [այլ նիւթերէն], որոնք չուկայ կու գան [եւ] կը ծախուին՝ երեք հարիւր փարա [բեռնէն] : Եթէ բեռ մը խսիր դայ [չուկան]՝ մէկ խսիր, եւ մէկ բեռ սորէն՝ մէկ պաթման (125) սոխ :

[124] 50. Ապրանքներու դին դրուած շրջանին՝ հազար երկու հարիւր փարա, որ կը վճարուի երեք անգամով, մէկը՝ դարնան, մէկը՝ աշնան, եւ մէկն [այ]՝ ձմրան կէսին : Հաղդ-ը պիսաթը (126) որ յիշուեցաւ [վերը]՝ իւրաքանչիւր անկողինի համար երեքական օսմանի [է : Տարին] երեք անգամ դին կ'որոշուի հացադործներուն համար [եւ] ամիսը կ'առնուի երեքական, աղջիկ. խմորեղէն, հրուշակեղէն եւ զովացուցիչ վաճառողներէն [կը դանձուի] ամիսը երեքական աղջիկ. մնացեալը կ'առնուի երեք անգամով :

51. Այս կանոնադրութեան որոշումներն անսաստողները յանցաւոր են, [եւ] պէտք է դիտնան, [որ] պատիժի արժանի կ'ըլլան : Ալա-իւտ-Տեյլէ Պէյի կանոնադրութեան պատճէնն [է այս], որ վերարտադրուած է բնադիրէն՝ անփոփոխ եւ առանց ձեւադեղծումի [124] (127) :

Հոս կ'աւարտի շարքը օսմանեան կանոնադրութիւններէն կատարուող քարգումուքիւններուն. բայց անով իր աւարտին չի հասնիր պատմութիւնը տնտեսական այն առօրեային, որ եղաւ բաժինը արեւմտահայութեան. ընդհակառակը, հոս տրուող վաւերագիրներն

առնուազն ցոյց կու տան տնտեսական այն դրութիւնը, որուն ենթակայ մնաց հայութիւնն Արեւմտեան Հայաստանի մէջ եւ այլուր՝ Օսմանեան կայսրութեան շրջածիրէն ներս. տխուր էր այդ դրութիւնը, ինչ փոյթ որ այսօր, այս միեւնոյն վաւերագիրներուն յենած՝ թուրք պատմագրութիւնը փորձէ փաստարկել արեւելին եւ արեւմուտին, թէ օսմանեան աշխարհավարութեան մէջ երջանիկ էին բազկացուցիչ տարրերը կայսրութեան, թէ կիսմաքի ամէն երեւոյթ առնուած էր կարգ ու կանոնին սահմաններէն ներս, եւ թէ օրինակամութիւնըն էր որ կ'իշխէր հոն մականովը սուլթաններուն:

Փաստաբաւոյթերը, սակայն, ահա՛սպիկ, կ'արտահանեն այլ բան, ցոյց կու տան բոլորովին այլ պատկեր, մանաւանդ այն ոչմարտութիւնը, թէ ժողովուրդն ընդհանրապէս, եւ արեւմտահայութիւնը մասնաւորապէս՝ կը կեդեփուէր, աւելին՝ կ'ըլլար արիւնաբաւ՝ միեւնոյն այս կանոնագրութիւններով, անոնց ֆովիկն ի վեր ամէն օր անող ու բազմացող ապօրինութիւններով, հարստահարութիւններով, բռնութիւններով, կեղեքումներով, եւ մասամբ նոցին, եւ այս բոլորը՝ շնորհիւ մանաւանդ շերիաթին եւ աւանդական սովորութեան, օրինակութեան եւ օրէնքներուն, օսմանեան իշխանութիւններուն եւ մեծ ու փոքր իշխանաւորներուն, զինուորական եւ ոչ-զինուորական մարմիններուն, տասնիւններորդ դարուն թուղթի վրայ կատարուած քարեմորգումներուն եւ սուլթանական կրկնուող, երեքնուող ու բազմաթիւ անգամներ յայտարարուող հրովարտականներուն, թուրքին, փիւրսին, եւ վաչկատուն այլ ցեղախումբներուն:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Omer Lutfi Barkan, *XV ve XVI inci asirlarda Osmanli Imperatorlugunda zirai ekonominin hukuki ve mali esaslari*, Birinci cilt, *Kanunlar*, Istanbul, 1943. *ասկէ ետք կը նշուի որպէս Պարզան*:

2. Ա. Ն. Սաֆրաստեան եւ Մ. Կ. Զուլալեան [Թրք.], Օսմանեան Օրէնգրքը Արեւմտեան Հայաստանում (ԺԶ.-ԺԷ. դդ.), կանոնադրական, *Երեւան, 1964*. *ասկէ ետք կը նշուի որպէս կանոն*:

3. Պարզան, էջ 124-129:

4. Թրքերէն *Թամդա՝ կնիք, դրոշմ, նշան, եւ սիւն՝ սեւ բառերէն կազմուած հարկային տարազ, որ ներքին բովանդակութեամբ համանման է բաճի: Սովորութային հարկ մըն էր անիկա, որ Օսմանեան կայսրութեան մէջ կը զանձուէր չուկան վաճառուող զրեթէ բոլոր ապրանքներէն, կենդանիներէն եւ ստրուկներէն: Ունէր իր տարատեսակները, եւ կը զանձուէր դրամով կամ ապրանքով. փոփոխական էր*

բանակով: Տես՝ Պարբան, էջ 137, 146, 154, 163, 166, 179, 182, 185, 199:

5. Մինչև տասնիններորդ դարուն կեսը օգտագործուող դրամի արծաթեայ միաւոր, որ կը հաւասարէր մէկ դրուշի 1/120-րդ մասին: 1451 թ.ին կը կշռէր 1.052 կրամ, որ, սակայն, հետագային կորսնցուց շատ բան, նախ՝ որպէս անխառնութիւն արծաթի, եւ ապա՝ որպէս ծանրութիւն: Տես՝ Ա. Խ. Սաֆրասեան [Թրդ.], Թուրքական Ազգութիւնը Հայաստանի եւ Անդրկովկասի Միւս Ժողովուրդների Մասին, Ա., Երեւան, 1961, էջ 352: ասկէ ետք կը նշուի որպէս Թուրքական, Ա.: Կանոն, էջ 128: Nicoara Beldiceanu, **Les Actes des premiers sultans conservés dans les manuscrits turcs de la Bibliothèque Nationale à Paris, I, Actes de Mehmet II et de Bayezid II du ms. Fonds turc ancien 39**, Paris/LaHaye, 1960, p. 173: ասկէ ետք կը նշուի որպէս Պելտիսիանու, Ա.:

6. Մէկ նիւկին կը հաւասարէր 200 տիրահմի, իսկ տիրահմը ընդհանրապէս 3.20 կրամի: առ այդ՝ մէկ նիւկին կը կշռէ 640 կրամ: Տես՝ Nicoara Beldiceanu, **Les Actes des premiers sultans conservés dans les manuscrits turcs de la Bibliothèque Nationale à Paris, II, Rèlements miniers, 1390-1512**, Paris/La Haye, 1964, p. 286, 297. ասկէ ետք կը նշուի որպէս Պելտիսիանու, Բ.:

7. Տիրահմ ունէր թէ ծանրութեան եւ թէ ալ դրամական միաւորի իմաստ. որպէս այդպիսին ալ եղաւ փոփոխական ըստ ժամանակի եւ վայրի. որպէս ծանրութեան չափ՝ կը կշռէ 3.20 կրամ, մինչդեռ որպէս դրամական միաւոր՝ 12 ազէն էր անոր արժէքը: Տես՝ Պելտիսիանու, Բ., էջ 286:

8. Բառացի՝ դինիի իմաստ ունեցող արարերէն չարապ բառը Թրքերէնի մէջ յաճախ կը գործածուէր նաեւ խաղողի իմաստով:

9. Ըստ սկզբնաղբիւրներու՝ Եղիպտոսի մէջ հատանուած դրամ, որ համարժէք էր յիսուն ազէն: Սակայն միշտ չէր որ անիկա ունեցաւ այս արժէքը. կան վաւերադրիւններ, որոնք անոր կու տան քառասուն ազէնի արժէք: Տես՝ Պելտիսիանու, Ա., էջ 176: Պարբան, էջ 154, 170, 171:

10. Բառացի կը նշանակէ ոչխարի կնիք: Տարազը կազմուած է Թրքերէն թամզա՝ կնիք, դրուշմ, նշան եւ արարերէն աղնամ՝ ոչխարներ բառերէն: Ըստ տեղի եւ ժամանակի փոփոխական հարկ մըն էր անիկա եւ կը դանձուէր շուկան ծախուող ոչխարներէն: Մերթ, սակայն, այսպէս կը կոչուէր այն հարկը նաեւ որ կը դանձուէր ընդհանրապէս արջառէն: Հետագային արջառէն դանձուող հարկն ստացաւ նորանոր անուններ: Սկիզբը թամզա-ի աղնամը կը դանձուէր միայն դրամով՝ թէ զնորդէն եւ թէ ալ վաճառողէն, բայց շուտով դանձուող հարկին վրայ աւելցան ոչխարին դրուշմը, տոտիկները, մորթը, ճարպը, եւ փորոտիքը՝ երբ անիկա դնուէր մասվաճառի մը կողմէ: Տես՝ Պարբան, էջ 136, 147, 152, 154, 169, 178:

11. Սկզբնաղբիւրներու մէջ յիշուող սեւ ազէն կը հաւասարէր մէկ երրորդ օսմանեան ազէնի: առ այդ՝ մէկ ազէն հաւասար էր երեք սեւ ազէնի: Տես՝ Պարբան, էջ 145, 146, 150, 166:

12. Արարերէն խարաճ՝ տուրք, հարկ, եկամուտ կամ հողի արտադրութիւն

բառէն է յառաջացած հարկային այս տարազը: Թրքերէնի մէջ բառն զգեցած է իմաստը տարեկան հարկի մը, զոր կը վճարէին ոչ-մահմետական հպատակներ: Հողային հիմնական հարկն էր անիկա եւ կը պատկանէր հուգուղ-ը շերէի դասին, թէպէտեւ վաւերագիրներու մէջ կը գտնենք այլադանութիւն մը անոր բովանդակութեան տրուած: Խորան վճարող բայաները ծանօթ էին որպէս խարանդակաւոր: Երբ խարանդ պատկանէր հողային արտադրութեան՝ կը կոչուէր խարան-ը արաղի, իսկ երբ անհատներուն՝ խարան-ը բու՛ռու, որ ծանօթ էր նաեւ որպէս ճիղէի եւ շախի վերկի: Տես՝ Պարքան, էջ 4, 23, 25, 26, 44, 57, 66, 72, 96, 101, 105, 116, 150, 180, 208, 217, 226, 237, 300, 303, 322, 330, 349, 360, 400: Պելտիսիանու, Ա., էջ 74, 75, 77, 102-103, 122, 137, 138, 149-150: Պելտիսիանու, Բ., էջ 203, 209, 219, 255, 275-276:

13. Հայկային այս տարազը ազաւաղումն է պարսկերէն բենն-եքի, որ ունի մէկ-հինգերորդի նշանակութիւն: Շերիաթական հարկ մըն էր իսպեննը, որ սկզբնական շրջանին կը հաւասարէր ստրուկի մը գինին մէկ հինգերորդին, այսինքն՝ 25 ազէի: Օրինականներէն՝ ոչ-մահմետականն էր, որ կը վճարէր իսպեննը, սակայն, ըստ վաւերագիրներու, Օսմանեան Կայսրութեան մէջ կային շրջաններ, ուր գլխահարկի այս հարկը կը վճարէր նաեւ մահմետականը: Փոփոխական էր քանակով, թէպէտեւ չերիաթով որոշուած սակ մը ունէր անիկա: Իսպեննէ գերծ էին կացուցուած միայն կարգ մը մարդեր եւ ցեղախումբեր՝ իրենց կատարած դործին համար, կամ ալ անոնց տրուած արքայական հրովարտակով: Տես՝ Պարքան, էջ 23, 59, 69, 72, 100, 132, 158, 175, 181, 194, 201, 237, 252, 275, 288, 296, 316, 326, 393: Պելտիսիանու, Ա., էջ 122, 138, 153. Պելտիսիանու, Բ., էջ 203, 217, 219, 232, 275, 276:

14. Յունարէն էրկաթէս՝ շինութիւններու վրայ աշխատող բանուոր բառէն յառաջացած տարազ մը, որ օսմաներէնի մէջ ազաւաղուելով եղած է ըրդատ: Հարկային տարազը ծանօթ էր որպէս ըրդատիէ: Սովորութային հարկերու կարգին պարտաւորութիւն մըն էր անիկա, զոր գիւղացիներն ստիպուած էին կատարելու աւատատիրոջ կամ պետութեան հաշուոյն՝ տարեկան որոշ օրեր ձրի աշխատելով: մերթ, սակայն, պարտաւորութիւնը կը հատուցուէր դրամով: Տես՝ Պարքան, էջ 132, 148-150, 154, 155, 167, 168, 174-176, 188, 193:

15. Արաբերէն նոդթա՝ կէտ, եւ Թրքերէն պաշ՝ դլուխ բառերէն կազմուած հարկային տարազ մը, որ բառացի կը նշանակէ սահմանադլուխ: Բովանդակութեամբ կը նոյնանար բաճի եւ կարող մը հարկային այլ տարազներու հետ, զորոնք Օսմանեան Կայսրութեան մէջ վաճառականները կամ ապրանքատէրերը կը վճարէին՝ երբ ապրանք փոխադրէին վայրէ վայր: Մերթ հարկին քանակը կը դանձուէր նախորոշուած դրամարով մը, ու մերթ՝ տոկոսային դրութեամբ: Հետաքրքրական է, որ լծկան եղբերք էր այս հարկէն: Տես՝ Պարքան, էջ 154, 159, 164, 168, 171, 185, 191: Պելտիսիանու, Բ., էջ 222-223, 283-284, 285:

16. Պարքան, էջ 154:

17. Այսինքն՝ կրօնական հաստատութիւններուն ենթակայ դպրոցներուն,

փոքր մզկիթներուն եւ տէրվիչական ճգնարաններուն :

18. Պարսկերէն սիփահէ՛՛ ձիւոր բառէն յառաջացած տարազ, որ օսմաներէնի մէջ ալ մերթ բառացի կը նշանակէ այրուծի: Օսմանեան Կայսրութեան մէջ, սակայն, անկա ստացած էր հողատիրոջ իմաստ. իրականութեան մէջ սիփահէն այն աւատատէրն էր, որուն յանձնուած էր որոշ տարածութեամբ թիմար մը, ուր անհրաժեշտ էր որ հաստատուած ըլլար անիկա եւ որուն եկամուտներէն օգտուէր անձնապէս: Այդ վերջիններուն փոխան՝ անկա ստիպուած էր իշխանութիւններուն օգնել զինուորական ուժով եւ անոնց տրամադրել իրեն յանձնուած աւատին համեմատական կերպով համընկնող զինուորական քանակ մը: Մերթ ալ, սակայն, անոր կը վստահուէր խմբազրուժը որոշ կանոնադրութիւններուն: Տես՝ Պէլտիսիանու, Բ., էջ 305: F. A. Belin, *Etude sur la propriété foncière en pays musulman et spécialement en Turquie*, Paris, 1862, p. 131. ասկէ ետք կը նշուի որպէս Պէլին:

19. Պարսկերէն տիվան՝ առեան, դուռ եւ խորհրդատու բառէն ստեղծուած հարկային տարազ մը, որ օսմաներէնի մէջ ստացած է պալատ, արքունիք կամ զերագոյն ժողով իմաստները, մինչդեռ օսմաներէն կարգ մը բառաբաններ կը նշեն, թէ տիվանին այն էր որ կը պատկանէր արքունիքին կամ աղերս ունէր անոր հետ: Ինչ որ ալ եղած ըլլայ իմաստը տարազին՝ սովորութային հարկ մըն էր անիկա, որ ընդհանրապէս կը դանձուէր հողի արտադրութենէն. առ այդ՝ մերթ կը յիշուէր որպէս տիվանի-էօշիւր, թեքիալիֆ-ի տիվանիէ, հուզուդ-ը տիվանիէ, եւայլն: Յաճախ փոփոխական էր քանակով՝ ըստ վայրի եւ ժամանակի: Տես՝ Ա. Խ. Սաֆրաստեան [Թրք.], Թուրքական Աղբիւրները Հայաստանի, Հայերի եւ Անգղիկոսի Միւս Ժողովուրդների Մասին, Բ., Երեւան, 1964, էջ 14, 36, 257. ասկէ ետք կը նշուի որպէս Թուրքական, Բ.: Սիմէոն Կաթողիկոս Երեւանցի, Ջամբա, Վաղարշապատ, 1873, էջ 231. ասկէ ետք կը նշուի որպէս Ջամբա: Պարթան, էջ 56, 57, 73, 74, 80, 83, 110, 115, 119, 152, 182, 194: .

20. Արաբերէն մազթու՝ որոշուած, վերջնական, անփոփոխ, կտրուած բառէն կազմուած հարկային տարազ, որ ունի նաեւ տուրք եւ հարկ իմաստները: Ըստ Փափազեանի՝ Պարթեքի մի որոշակի քանակ, կամ հաստատուն դումար, որ ամէն տարի սխիթեմութիւն կերպով, անկախ հարկատու օպիէքթի տուեալ բերքից, պէտք է հատուցուէր կալուածատիրոջը կամ պետութեանը որպէս բնետա: Սովորութային այս հարկը, սակայն, փոփոխական էր ըստ տեղի եւ ժամանակի: Տես՝ Յ. Գ. Փափազեան, Մատենադարանի Պարսկական Վաւերագրերը, Ա., Հրովարտակներ, պարակ առաջին, Երեւան, 1965, էջ 113. ասկէ ետք կը նշուի որպէս Հրովարտակներ, Ա.: Պարթան, էջ 17, 69, 81, 115, 151, 153, 166, 168, 171, 206, 215, 220, 309, 314, 337, 342, 382:

21. Պարսկերէն չիֆթ՝ զոյգ, լուծ բառէն կազմուած տարազ մըն էր չիֆթլիքը, որ օսմաներէնի մէջ կը նշանակէ նաեւ արտ կամ աղարակ: Ըստ վաւերագրերուն՝ չիֆթլիքը հողի այն տարածութիւնն էր, զոր մէկ օրուան մէջ կարելի էր վարել զոյգ մը եզով: Իրականութեան մէջ, սակայն, անկա կընար բաղկանալ 80 տէօ-

նիւմ լաւ հողէ, 90-100 տէօնիւմ միջակէն, եւ 130-150 տէօնիւմ անջրդիէն, թէպէտեւ, ըստ Ինանի՝ անոր տարածութիւնը կրնար ըլլալ 80, 80-90, կամ 100-120 տէօնիւմ: Զեֆթիքը կրնար ըլլալ լման կամ կէս. առ այդ՝ անկէ դանձուող հարկն ալ կ'ըլլար լման կամ կէս: Տես՝ Պելտիսիանու, Ա., էջ 160: Պարքան, էջ 66:

Dr. Afet Inan, *Aperçu général sur l'histoire économique de l'Empire Turc-Ottoman*, Istanbul, 1941, p. 47. ասկէ ետք կը նշուի որպէս Ինան:

22. Թրքերէն թիմար՝ խնամք, ծառայութիւն բառէն ստեղծուած տարադ, որ Թուրքերէնի մէջ կը նշանակէ նաեւ հողամաս կամ ղինուորական աւատ՝ վարչական հին կազմակերպութեան մէջ Օսմանեան Կայսրութեան: Կը նշանակէ նաեւ այն խնամքը, զոր հողատէրը կը տանի իր հողին: Թիմարը, սակայն, սեփական չէր եւ 300-500 հեքթար տարածութեամբ աւատական այն հողամասն էր, որուն փոխանէն՝ զայն ստացողը պարտաւոր էր պետութեան տալ որոշ թիւով ղինուոր, իսկ ինք կարող էր օգտուիլ անոր օրինական տասանորդէն եւ այլ հարկերէն: Ժառանգական էր թիմարի իրաւունքը, թէպէտեւ Սուլթան Մեհմետ Բ.-ի օրով հարցական դարձաւ այդ մէկը: Տես՝ Թուրքալիւմ, Ա., էջ 359-360: Պարքան, էջ 2, 8, 20, 33, 51, 66, 115, 182, 206, 232, 266, 283: Պելտիսիանու, Ա., էջ 87-88, 89, 149-150: Edward S. Creasy, *History of the Ottoman Turks*, Beirut, 1961, p. 101. ասկէ ետք կը նշուի որպէս Քրիշի:

23. Կանոնադիրը կ'ակնարկէ Թուրք-պարսկական կռիւներուն, որոնք տեղի ունեցան տասնվեցերորդ դարու առաջին կէսին:

24. Պարքան էջ, 73-74:

25. Արարերէն մալիք՝ սեփականատէր բառէն, եւ պարսկերէն մասնիկէ մը կերտուած հարկային տարադ մը, որ օսմաներէնի մէջ զդեցած էր նաեւ կալուածատիրոջ վաճարուող հարկի բովանդակութիւնը: Հարկը կը դանձուէր հողէն կամ կալուածէն ստացուած եկամուտի եւ արտադրութեան վրայ, անկախ՝ թէ ո՞վ էր տէրը ստացուածքին, անհատ մա՞րդ թէ կրօնական ու վաղճային վարչութիւն: Բովանդակութեամբ նոյնանման էր աշարին եւ խարածին: Յաճախ հարկը կը դանձուէր արտադրութեան մէկ հինգերորդի համեմատութեամբ, թէպէտեւ փաստաթուղթերը այդ մէկը ցոյց կու տան փոփոխական՝ ըստ ժամանակի, վայրի եւ դանձիչի: Գանձուած հարկին կէսը կ'երթար աւատատիրոջ, իսկ երկրորդ կէսը՝ պետութեան. այդ վերջինը ծանօթ էր որպէս տիվանի: Ըստ Բաքալինի՝ օսմանցիներու մօտ մալիքիանէի հարկային այս դրութիւնն սկսաւ 1386 թ.ին: Տես՝ Mehmet Zeki Pakalin, *Osmanlı tarihi deyimleri ve terimleri sozlugu*, II, Istanbul, 1971, s. 395-396, Պարքան, էջ 73, 77, 115, 158-159, 182, 194, 195, 300: Պելտիսիանու, Բ., էջ 88, 93, 94, 209:

26. Արարերէն մալիք՝ ստացուածք, կալուած, սեփականութիւն, երկիր բառէն ստեղծուած հարկային տարադ մը, որ ըստ Ավդալրեկեանի՝ մահմետական երկիրներու մէջ արտադրուած բերքին տասանորդն էր լոկ: Առ այդ՝ անիկա կը դառնար մէկ տարբերակը աշարին, եւ կը վճարուէր կալուածատիրոջ կամ աւատատիր-

րող: Բայց սկզբնաղբիւրները ցոյց կու տան, որ այս Հարկին ենթակայ էին ոչ միայն Հողային արտադրութիւնները՝ այլ նաեւ ոչ-մահմտականներու բնակարանները եւ արտածուող ապրանքները: Հարկը փոփոխական էր քանակով՝ ըստ տեղի եւ ժամանակի: Բովանդակութեամբ անիկա կը նոյնանայ մալիքեանէին, աշարին, խարածին, պահարային եւ նոյն բովանդակութեամբ Հարկային այլ տարազներու հետ: Տես՝ Թաղէոս Ավդալրեկեան, Հայագիտական Հետազոտութիւններ, Երեւան, 1969, էջ 423: Ջամբո, էջ 159: Պելտիսիանու, Ա., էջ 91: Պելտիսիանու, Բ., էջ 216: Բաքալին, Բ., էջ 612-613: Պարթան, էջ 7, 38, 46, 48, 55-57, 70, 80, 110, 111, 113, 115, 192, 210:

27. Արարերէն պէյթիւմալ՝ զանձատուն նշանակութիւնն ունեցող այս տարազը օսմաներէնի մէջ զղեցած է մահմտական ընկերութեան մէջ Հարկային զանձի իմաստը: Իրականութեան մէջ՝ անիկա մասնայատուկ գործակալութիւն մըն էր, որ սկիզբները կը զբաղէր Հողեւոր որոշ Հարկերու զանձումով եւ անժառանգ մահացածներու կալուածներուն յայտնագործումով, բռնադրաւումով եւ անոնց տնօրինութեամբ: Հետագային, սակայն, անիկա մասնազիտացաւ միայն ժառանգական Հարցերու մէջ: Բայց այս անունով կը ճանչցուէր նաեւ այն Հարկը, որ կը զանձուէր ժառանգական Հարցերը լուծելու համար, եւ առ այդ՝ չկար որեւէ մէկը, որ դերձ ըլլար անկէ: Սովորութային եւ պատահական Հարկ մըն էր, որ վերածուեցաւ կանոնաւոր եւ մնայուն Հարկի: Տես՝ Հրովարտակներ, Ա., էջ 207: Պելտիսիանու, Բ., էջ 151, 220, 284-285: Պարթան, էջ 19, 34, 69, 80, 210, 245, 280, 288, 317, 354, 385:

28. Օսմանեան Կայսրութեան մէջ Հողը օրինականօրէն կը սպտկանէր սուլթանին, որ, սակայն, պայմանական տիրակալութեամբ բաժնուած էր աւատատէրերու: Այն Հողամասերը որոնց եկամուտը, ըստ մատենաներու արձանագրութեան, կը գնահատուէր 20,000-100,000 ազէ՝ կը կոչուէին զիամեթ. իսկ 300-20,000 ազէ եկամուտ ունեցողները ծանօթ էին որպէս Թիմար: Սուլթանին, վեզիրներուն եւ բարձրաստիճան այլ աւատատէրերուն յանձնուած Հողերը ծանօթ էին որպէս ազատ զիամեթ եւ ազատ Թիմար՝ անոնց տէրերուն վայելած օրինական եւ Հարկային որոշ ազատութիւններուն համար: Զիամեթ կամ Թիմար էին նաեւ վազֆային Հողերը: Հողային այս դասակարգումէն դուրս կ'իյնային ուղղակի արքունական Հողերը, որոնք կը պատկանէին սուլթանին կամ իր ընտանիքի անդամներուն, եւ ծանօթ էին որպէս խաս, ու կը կառավարուէին ուղղակի արքունիքէն: այս տեսակ Հողերու շահագործումը կը կատարուէր կիսարուլթեամբ եւ ենթակայ էր պետական քննիչի մը: Պելտիսիանու, Ա., էջ 73, 119-120, 121-123, 144, 154, 164, 170: Պելտիսիանու, Բ., էջ 95, 189, 216, 271, 272, 277: Պարթան, էջ 86, 103:

29. Հացահատիկ չափելու համար օգտագործուող կոտ, որ նահանգէ նահանգ ունէր տարբեր ծանրութիւն: Զմշկածաղի չորս քիլոն կը հաւասարէր Պոլսոյ մէկ քիլոնին, որ հաւասար էր քսան օգդայի, կամ 8000 տիրհմի, եւ կ'ընէր 25-656 կրամ: 1911 թ.-ին մէկ քիլոն կը հաւասարէր 45 քիլոկրամի: Քիլոն ծանրութիւնը կը տարբերէր նաեւ ըստ չափուող ընդդիմի տեսակին: Մեծ զանազանութիւն կար նաեւ ա-

նունենալու, այսպէս՝ կանոնադրութիւնները կը յիշեն օսմանեան, Պոլսոյ, Ամիաի, Արարիկի, Կարինի, Ուրֆայի, Զաչլաճաղի եւ Շամի քիւիները: Տես՝ Պեղտխիւսնու, Բ., էջ 293: Պարբան, էջ 20, 138, 145-147, 155-157, 163, 172, 189:

30. Պարսկերէն սալար՝ զօրագլուխ, առաջնորդ, հրամանատար բառէն կազմուած հարկային տարազ մը, որ օսմաներէնի մէջ ստացաւ հրամանատարի համար դանձուող զուսարի կամ թուակի իմաստ: Տարազի ստեղծումին սկզբնական շրջանին հարկը կը դանձուէր պատերազմի մը կամ արտակարգ դէպքի մը պարագային, եւ առ այդ՝ պարագայական էր անիկա: Հետագային նկարագիր փոխեց եւ շարունակեց դանձուիլ նաեւ աւատատիրոջ կողմէ, որպէսզի կարենար կատարել զինուորական իր պարտաւորութիւնները սուլթանին հանդէպ: Հետագործարական է, սակայն, որ ժամանակի ընթացքին սալարիէն դանձուեցաւ տակաւին պետական պաշտօնեաներու, վեզիրներու, կուսակալներու եւ կառավարիչներու, զինուորական զեկալարներու եւ նոյնիսկ սուլթանին կողմէ՝ ապահովելու համար թէ՛ իրենց եւ թէ ալ իրենց ձիւրուն կարիքները: Ըստ Ինանի՝ հողային եկամուտի հարկւրին երեքն էր անիկա, թէպէտեւ կանոնադրութիւնները ցոյց կու տան լայն զանազանութիւն քանակի՝ ըստ տեղի եւ ժամանակի: Կը դանձուէր մթերքով կամ դրամով որպէս սովորութային տարեկան կանոնաւոր հարկ, թէպէտեւ հարկէն զերծ կացուցած էին կարգ մը վայրերու բնակիչները: Տես՝ Պեղտխիւսնու, Ա., էջ 121, 138, 145, 168: Պեղտխիւսնու, Բ., էջ 216, 223, 304: Պարբան, էջ 10, 20, 49, 62, 115, 197, 233, 243-244, 275, 288, 312: 341:

31. Աղաւաղումը արարերէն շահըն՝ բեռնաւորում կամ պարսկերէն շահնա՝ հարկահան, ոստիկան բառերուն: Ինչ որ ալ ըլլայ ստուգարանութիւնը բառին՝ աշնան դործակատարն էր տասնորդը հաւաքող կապալաւուն կամ պաշտօնեային: Տես՝ Ա-Դօ, վաճի, Բիք-Իսի եւ Էրզրումի վիլայէթները, Երևան, 1912, էջ 284:

32. Հարկային տարազը կը բաղկանայ արարերէն ուշը՝ տասնորդ, եւ պարսկերէն միլէ՝ պտուղ բառերէն, եւ կը նշանակէ պտուղի տասնորդ: Տարեկան հարկ մըն էր անիկա, որ կը դանձուէր թարմ կամ չոր պտուղներէն, մերթ նաեւ՝ պարտէզներէն եւ անոնց ծառերէն: Ըստ կանոնադրներու տուեալներուն՝ փոփոխական էր անիկա ըստ տեղի եւ ժամանակի, ըստ պտուղի եւ դանձիչի: Սկիզբները կը դանձուէր լոկ շուկայի մէջ վաճառուող պտուղներէն, հետագային, սակայն, հարկն սկսաւ հաւաքուիլ պողահաւաքի առեն: Մերթ, սակայն, անիկա կը հաւաքուէր որպէս մաղթու: Եւ՝ կանիիկ Խորականութեան վրայ հիմնուած հարկ մըն էր էօլը-ի մէյվէն, որովհետեւ քրիստոնեան միշտ ալ աւելի կը վճարէր մահմետականէն: Տես՝ Պեղտխիւսնու, Ա., էջ 123: Պեղտխիւսնու, Բ., էջ 194: Պարբան, էջ 34, 115-116, 269, 284:

33. Թրքերէն սանճադ՝ դրօշակ, նահանգ, եւ պէյ՝ տէր, աշխուական, իշխան բառերէն կազմուած կառավարչական իշխանութեան տարազ: Ըստ պատմական տուեալներու՝ Օսմանեան Կայսրութիւնն ունէր երկու հիմնական բաժանումներ՝ Եւրոպականն ու Ասիականը, որոնցմէ առաջինը ծանօթ էր որպէս Բումէլիի դազլաթերիք եւ ունէր տասնեօթը սանճադ, իսկ երկրորդը՝ որպէս Անատոլիի դա-

ղըտաբերիւի եւ ունէր տաճնհինգ սանճադ: Իւրաքանչիւր սանճադ ունէր իր վերին իշխանաւորը, որ յաճախ իշխանութեան կը տիրանար կաշառքի մէջոցով, եւ իրեն ենթակայ սանճադէն ներս կը հաստատէր զինուորական եւ քաղաքական բացարձակ եւ միահեծան իշխանութիւն, թէպէտ եւ օրինականօրէն ենթակայ էր սուլթանին եւ օսմանեան շէրիաթական եւ աւանդական եւ սովորութային օրէնքներուն: Անգամ մը հաստատուելէ ետք իրեն սահմանուած սանճադէն ներս՝ սանճադպէշը կը քամէր տնտեսական բոլոր աղբիւրները աուելալ շրջանին, դորձ մը, որուն համար օսմանեան վաշուլթիւնն ստեղծած էր վերին իշխանաւորին ենթակայ բաղմաթիւ պաշտօնեաներ, ոստիկանութիւն եւ մասամբ նոցին: Տես՝ Mehmet Zeki Pakalin, **Osmanli tarihi deyimleri ve terimleri sozlugu**, III, Istanbul, 1972, ss. 119-121: ասկէ ետք կը նշուի որպէս Բաքալին, Գ.: Պէլտիսիանու, Ա., էջ 66-67, 68, 73, 77, 79, 85-92, 94, 97, 104, 111, 135-136, 139, 141, 144, 148-149, 150-157, 160: Պէլտիսիանու, Բ., էջ 180, 197-198, 217-219, Պարթան, էջ 33, 67, 113, 124, 174, 180, 199, 244, 265, 274, 287: Քրիդի, էջ 97:

34. Այսինքն՝ հարկերուն եւ տուրքերուն չափը որոշուելէ ետք,

35. Թրքերէն սու կամ սիւ՝ զօրք, ջուր, եւ պաշ՝ զլուխ բառերէն կազմուած սուպաշըն զլխաւոր պաշտօնատարներէն էր Օսմանեան կայսրութեան սկզբնական շրջանին եւ անմիջական փոխանորդն էր սանճադպէշին: Եթէ սկիզբները անիկա կը հսկէր ջուրի եւ ոռոգման ընդհանուր եւ հիմնական գործին՝ հետապային, սակայն, բաղմացան իր պարտականութիւնները, որոնց շնորհիւ անիկա եղաւ ոստիկանապետ, իր շրջանէն ներս կարգ ու կանոնի պատասխանատու, օրէնքի լրիւ դորձադրութեան հսկող մարդ, հանքերու վերահսկող, եւ ետապօշներու օժանդակ: Իրեն վստահուած դորձերը լաւադոյնս կատարել կարենալու համար եւ մանաւանդ զանձելու համար իրեն իրաւունք սահմանուած զանազան հարկերը, անիկա ճորպէս փաշա մի շրջեր, երեսուն, քառասուն եւստիսիշլ: Աւելին՝ անիկա իրեն ենթակայ ունէր բաղմաթիւ հետեւակ եւ ձիաւոր զինուորներ: Սուպաշըն իրեն համար զանձած զուամբն էր սուպաշըրը, որ եթէ սկզբնական շրջանին պատահական էր՝ հետապային վերածուեցաւ կանոնաւոր հարկի եւ զանձուեցաւ քիչ մը ամէն բանէ: Փոփոխական էր քանակով ըստ տեղի ու ժամանակի, եւ մանաւանդ՝ անձի, ու կը զանձուէր դրամով եւ մթերքով՝ նայած պայմաններուն: Տես՝ Թուրքալիամ, Ա., էջ 379: Յ. ձ. Սիւրուհի, Պոլիս եւ իր Դիւրը, Ա., Պէյրութ, 1965, էջ 487-488: Պէլտիսիանու, Ա., էջ 71, 75, 79, 86, 90, 94, 97, 102, 122, 131, 138, 144, 156, 163, 170: Պէլտիսիանու, Բ., 133, 134, 138-140, 218, 221, 255-256: Պարթան, էջ 43, 113, 116, 197: Բաքալին, Գ., էջ 259-260:

36. Թրքերէն եազը՝ զիւր բառէն յառաջացած հարկային տարազ, որ բառացի կը նշանակէ քարտուղարութիւն, բայց որպէս հարկ ունի Քարտուղարութեան համարժի բովանդակութիւն: Անիկա զուամբ մըն էր, որ ընդհանրապէս կը զանձուէր քարտուղարութեան կողմէ՝ երբ կատարուէր որեւէ ձեւի պետական արձանագրութիւն: Հետապային հարկն ստացաւ կանոնաւոր ու տարեկան մնայուն հարկի նկարագիր, եւ ընդգրկեց ոչ միայն պետական արձանագրութիւնները՝ այլ նա-

և և առեւտուրն ընդհանրապէս: Հետաքրքրական է, սակայն, որ եաղըճըլըզը կը դանձուէր նաեւ հայ եկեղեցիին կողմէ տրուող վկայագիրներու արձանագրութեան համար: Եաղըճըլըզը փոփոխական էր քանակով և բովանդակութեամբ՝ ըստ վայրի, ժամանակի և դանձիչի: Տես՝ Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի, Պոլիս, 1900, էջ 197-198: Պարթան, էջ 113-114, 116: Պելտիսիանու, Ա., էջ 98-99, 102, 150, 168, Պելտիսիանու, Բ., էջ 114, 147:

37. Պարսկերէն խարժան՝ կալ, և Թրքերէն ազէ, դրամ բառերէն կազմուած հարկային այս տարազը բառացի կը նշանակէ կալի դրամ, կալի հարկ, որ Օսմանեան Կայսրութեան մէջ ապօրինի կերպով կը դանձուէր աւտատիրոջ կողմէ հողագործի բերքի կալերէն, և անկախ՝ վճարուող տասանորդէն: Կը դանձուէր երկրագործական արտադրութեամբ կամ դրամով, թէպէտեւ մերթ էլ խանութիւնները կը փորձէին արդեւք հանդիսանալ անոր դանձումին՝ առարկելով թէ անիկա որպէս հարկ արձանագրուած չէր հարկացուցականութեան մէջ: Տես՝ Պարթան, էջ 113, 116: Պելտիսիանու, Բ., 292:

38. Թրքերէն դըշ՝ ձմեռ, և եարազ կամ եարազ՝ պաշար բառերէն կազմուած հարկային տարազ մը, որ կը նշանակէ ձմեռնային պաշար: Այսպէս կը կոչուէր ապօրինի այն հարկը, զոր ամէն տարի աշնան, բերքի ժամանակ, Մալաթիոյ գիւղերէն կը դանձէին սանճապէտները և սիփաշիները իրենց ներկայացուցիչներուն միջոցով՝ դանազան հարկեր դանձելէ ետք: Հարկը կը բաղկանար ցորենի և դարբի որոշ չափէ մը, մէկ աշխարհ, մեղրի և իւղի որոշ քանակէ մը, թաղիք ունեցող վայրերէն՝ մէկ կտոր թաղիքէ, յարդէ, դարմանէ, ածուխէ և փայտէ: Տես՝ Պարթան, էջ 116:

39. Թրքերէն էքինլու՝ ցանքի համար կամ մշակելի հող ունեցող, և բեննաք՝ մշակ բառերէն կազմուած հարկային տարազ մը, որ պարզօրէն կը նշանակէ անձնանապէս մշակելի հող ունեցող գիւղացի. արդէն վաւերագիրներն ալ այսպէս կը բացատրեն տարազը: Ըստ Սաֆրաստեանի և Զուլալեանի՝ հայերէն է բեննաք և յառաջացած բնակիլ բառէն, թէպէտեւ Պարթան կը խոստովանի թէ կարող չէ ստուգելու պատկանելիութիւնը այս բառին: Ինչ որ ալ ըլլայ՝ բացատրութիւնն անոր՝ Օսմանեան Կայսրութեան մէջ բայաները բաժնուած էին երկու դասի, որոնցմէ առաջինը՝ էքինլու բեննաք՝ հարկ կը վճարէր իր ունեցած լրիւ կամ կէս չիֆթին վրայ, մինչ երկրորդը՝ ճապա բեննաք՝ հարկ կը վճարէր իր չունեցած հողին վրայ. այդ վերջին հարկը կը կոչուէր բեսմ-ի ճապա բեննաք: Տես՝ Կամուս, էջ 130: Պարթան, էջ 2, 33, 34, 63, 66, 76, 116, 538:

40. Տարածութեան Թրքական չափ մը, որ ունէր քառասունական քայլ լայնք ու երկարութիւն. Տես՝ Կամուս, էջ 131. Diran Kélékian, **Dictionnaire Turc-Français**, Constantinople, 1911, p. 593. ասիէ ետք կը նշուի որպէս Գէլէքեան:

41. Արաբերէն առեթ՝ սովորութիւն, և աղնեմ՝ ոչխարներ բառերէն կազմուած հարկային այս տարազը բառացի պիտի նշանակէր ոչխարներու սովորութիւն: Սակայն Թրքերէնի մէջ առեթ ստացած է կանոն և օրէնք իմաստներն ալ. առ ալդ՝ տարազը կը ստանայ ոչխարներու կանոն բովանդակութիւնը: Ըստ կանոնադրու-

Թիւններու՝ հարկը կը դանձուէր մանր եղջերաւոր կենդանիներէն՝ առանց նկատի առնելու ոչխարն ու գառնուկը, կամ այծն ու ուլիկը՝ ինանի համաձայն՝ եղան չըրջաններ, երբ այս անունով կոչուեցան այն հարկերը, որոնք կը դանձուէին խոզէն, ձիէն, եղէն, ցուլէն, դոճէն, ջորիէն, էջէն, եւ նոյնանման այլ կենդանիներէն նաեւ։ Ոչխարաբուծութեան տարեկան այս հարկն ընդհանրապէս կը դանձուէր կենդանիներու ծնելէն ետք այն բոլորէն, որոնք կը զրաղէին ոչխարաբուծութեամբ կամ ոչխար կը պահէին նոյնիսկ իրենց առօրեայ օգտագործումին համար։ Հարկը կը վճարէին նաեւ կրօնական հաստատութիւնները, թէպէտեւ կային չըջաններ եւ մարդեր, որոնք հարկադրած էին կացուցուած սուլթանական բարձրագոյն հրամանագիրով։ Հարկը կը դանձուէր առանց նկատի առնելու ցեղային կամ կրօնական պատկանելիութիւնը հարկատուին, եւ կը դանձուէր դրամով, բնամթերքով կամ կենդանիով՝ պետութեան եւ մերթ աւատատիրոջ հաշուին։ Փոփոխական էր ըստ վայրի, ժամանակի, դանձիչի եւ հարկատուի կրօնական պատկանելութեան։ Կը դանձուէր ամենայն խստութեամբ, որովհետեւ անիկա կը կազմէր նկատառելի մէկ մասը դանձողին տարեկան եկամուտին։ Տես՝ Թուրքական, Բ., էջ 230, 240, 262, 295։ Ա-Դօ, էջ 290-292։ Ջամբո, էջ 130, 227։ Գարեգին Քաթակնեան, Հարկերը Տաճկաստանում, «Մուրեմ» ԺԱ. տարի թիւ 1, Թիֆլիս, Յունուար, 1899, էջ 87։ ասիէ ետք կը նշուի որպէս Հարկեր։ Ս. Ա. Համբարեան, Ագրարային Յարաբերութիւնները Արեւմտեան Հայաստանում, 1854-1914, Երևան, 1965, էջ 105, 109։ Պարթան, էջ 45, 54, 56, 71, 116, 143, 144, 153, 156, 158, 166, 169-172, 181, 190, 198, 199, 201, 206, 207, 216, 239, 280, 289, 301, 313, 320, 323, 325, 333, 338։ Պելտիսիանու, Բ., էջ 152, 194, 202, 207, 217, 219, 275, 300-301։ Mehmet Zeki Pakalin, **Osmanlı tarihi deyimleri ve terimleri sozlugu**, I, Istanbul, 1971, s. 20-21.

42. Թրքերէն չուպուք՝ ծխամորճ, եւ աղէ՝ դրամ բառերէն կազմուած այս տարազը բառացի կը նշանակէ ծխամորճի դրամ, մինչդեռ որպէս հարկային տարազ՝ անիկա ստացած է ծխախոտի դրամի բովանդակութիւն։ Ապօրինի հարկ մըն էր անիկա Օսմանեան Կայսրութեան մէջ, զոր իրենց համար կը դանձէին մեկզուֆէիները՝ ատեթ-ի աղնեմի դանձիչները, որպէս լրացուցիչ հարկ, դրամով կամ ոչխարով։ Ըստ կանոնադրութիւններու տուեալներուն՝ անիկա մէկէ աւելի անգամներ արգելուեցաւ որպէս ապօրինութիւն, եւ, սակայն, հակառակ անոր վրայ դրուած յաճախակի արգելքներուն՝ անիկա շարունակեցաւ դանձուիլ։ Տես Պարթան, էջ 114, 116, 129, 198։

43. Արարերէն բեամ՝ հարկ, եւ զաֆիր՝ փեթակ բառերէն կազմուած հարկային այս տարազը իրականութեան մէջ կը վերաբերի մեղուարուծութեան։ Օսմանեան Կայսրութեան մէջ հարկը կը դանձուէր կամ ըստ փեթակի եւ կամ ալ ըստ արտադրուած մեղրի։ Այդ վերջին պարագային՝ դանձուած հարկը արտադրութեան տասանորդն էր։ Կը դանձուէր դրամով կամ արտադրութեամբ եւ փոփոխական էր ըստ տեղի եւ ժամանակի։ Գանձումի տասանորդային դրութիւնը կը գործածուէր միայն այն առիթներ փեթակներուն թիւը ըլլար տասէն աւելի։ Տես՝ Բաքալին, Գ., էջ 30։ Պարթան, էջ 51, 54, 68, 112-113, 116, 198, 239, 240, 316, 322, 338, 354, 399։

Պետխոստանու, Բ., էջ 194, 201, 207, 307. Ինան, էջ 48:

44. Արարերէն բեամ՝ տուրք, հարկ, եւ պարսկերէն ասիապ՝ ջրաղաց բառերէն կազմուած հարկային այս տարազը կ'ընդգրկէր ոչ միայն ջրաղացները՝ այլ նաեւ Հողմաղացները, բրինձի տինդերը եւ ձիթհանները: Հոն, ուր այս բոլորը կ'աշխատէին ամբողջ տարին՝ հարկը կը դանձուէր լրիւ, վեց ամիս աշխատողներէն՝ հարկին կէսը, իսկ կային նաեւ շրջաններ՝ ուր դանձումը կը կատարուէր ամսականի դրութեամբ: Հարկը կրնար դանձուիլ դրամով կամ հացահատիկով՝ ըստ տեղի եւ ժամանակի: Օսմանեան Կայսրութեան մէջ կային շրջաններ, ուր հարկը կը դանձուէր լոկ աւատատիրոջ կողմէ, մինչդեռ կային նաեւ այլ վայրեր, ուր կատարուած դանձումը կը բաժնուէր վազֆին, աւատատիրոջ եւ պետութեան միջեւ: Տես՝ Ինան, էջ 48: Բաբային, Գ., էջ 29. Պետխոստանու, Բ., էջ 186, 198, 201, 214, 215, 223, 275, 276: Պարքան, էջ 6, 11, 31, 47, 50, 67-68, 111, 113, 116, 129, 134, 150, 158, 165, 168, 170, 172, 176, 181, 193, 196, 198, 201, 216, 253, 269, 276, 285, 290, 302, 314, 329, 343, 391, 399:

45. Պարսկերէն պատ՝ Հով, եւ արարերէն հաուա՝ օդ, մթնոլորտ բառերէն կազմուած հարկային այս տարազը օսմաներէնի մէջ ստացեր էր ձրի, անվճար իմաստները: Սահայն, որպէս հարկային տարազ՝ անիկա ընդհանուր անունն էր կարգ մը հիմնական կերպով ապօրինի հարկերու եւ դանձումներու՝, զորոնք մերթ կը դանձէին սիփահիններն ու մերթ նաեւ՝ սիփահիններն ու սանճազայինները ընկերովի՝ որպէս լրացուցիչ իրենց տարեկան եկամուտներուն: Սկզբնական շրջանին՝ պատահական եղող զանազան այս հարկերէն ոմանք ժամանակի ընթացքին վերածուցան տարեկան մնայուն հարկի: Նոյն ձևով ստեղծուեցաւ մնայուն դրութիւնը պատի հաւայի, որ Հիմա կը բաղկանար զանազան տուղանքներէ, ճիւղիւմ վէ ճինայէթէն, բեամի աբուան, չիֆթլիք Թափուսուէն, էվ երի Թափուսուէն, դըլլըզ Թիւթին բեամէն, սպանութեան, կազ ու կուլի, դողութեան, կաւատութեան, պոռնկութեան, բոնարաուսի, շնութեան, դինովութեան եւ նոյնանման այլ աբարքներու համար դանձուող տուղանքներէն եւ հարկերէն: Փոփոխական էր քանակով՝ ըստ տեղի, ժամանակի եւ դանձիչի, ու կը հաւաքուէր ամենայն խտութեամբ՝ պատճառ դառնալով կեղեքումի եւ բոնութեան: Օսմանեան Կայսրութեան մէջ ամէն մարդ ենթակայ էր պատի հաւայի, սահայն կային կարգ մը վայրեր, որոնց բնակիչները հարկազերծ էին: Տես Թուրքական Բ., էջ 297-298: Պետխոստանու, Բ., էջ 153, 210, 282, 283, 288: Պարքան, էջ 14, 33, 36, 52, 71, 72, 86, 110-111, 117, 129, 135, 136, 143, 190, 208-209, 216, 226, 232, 234, 236, 245, 247, 263, 271, 274, 311, 317, 331-333, 338, 339, 352, 354:

46. Արարերէն ճուրմ՝ յանցանք, ոճիր, եւ ճնէյէթ՝ յանցանք, ոճիր բառերէն կազմուած այս տարազը Օսմանեան Կայսրութեան հարկային դրութեան մէջ ստացած էր յանցագործութեան, օրինազանցութեան եւ ոճիրի համար դանձուող տուղանքի իմաստ: Պատի հաւայի կարգէն եղող այս եկամուտը կը դանձուէր իշխանութիւններուն, աւատատիրութեան եւ վազֆներուն կողմէ, ամէն անգամ երբ կատարուէր օրէնքի, սովորութեան եւ բարոյականի որեւէ խախտում: Երկար էր շարքը ոճիր-

ներուն, արկածներուն, ասորինութիւններուն եւ տուգանելի բարոյական արարքներուն, նոյնքան նաեւ անօրինակ տուգանքներուն եւ դանձուքներուն զանազանութիւնը, որ կը սկսէր նուազագոյն սաստէն Հասնելու համար անդամահատումի եւ մահապատիժի, միայն թէ նոյն արարքին համար, ըստ կանոնադրութիւններու եւ սովորական փաստաթուղթերու, վայրէ մը մէջ կարելի էր կատարել նիւթական հատուցում, մինչ այլ տեղ՝ զայն վճարել կեանքով: Բայց ընդհանրապէս խտրականութեան վրայ հիմնուած էր ճիւղում վէ ճիւղայէթը եւ այդ իսկ պատճառով յաճախ տեղի կու տար դանդաղութիւն, որոնք անլսելի կը մնային պատկան իշխանութիւններուն կողմէ: Տես՝ Ատեմագրութիւն Ազգային Ժողովոյ, 1871, էջ 473: Մերոպ Արքեպս. Նշանեան [խմբ.], Օրագրութիւն Երեմիա Զելեպի Քէօմիւրմեմի, Երուսաղէմ, 1935, էջ 47, 211, 549: Henry Richard, **Papers on Eastern Question**, No 1, **Evidence of Turkish Misrule**, Westminster, n. d. p. 35 Բաբային, Ա., էջ 318: Պարքան, էջ 71, 103, 108, 124-128, 136, 191, 200, 201, 325, 388, 552: Պէտրիսիանու, Ա., էջ 94, 136, 167: Պէտրիսիանու, Բ., էջ 201, 202, 207, 288:

47. Պարքան, էջ 115-117:

48. Ըստ Պարքանի պրոպոնիւմներուն՝ այս կանոնադիրը պէտք է որ գրուած ըլլայ 1500 թուականէն առաջ: Տես՝ Պարքան, էջ 39-40:

49. Հոս թարգմանութեան մէջ զանց առնուած են կանոնադրութեան առաջին չորս տողերը, ուր օրուան սուլթանը, ըստ օսմանեան թղթակցութեան եւ հրովարտակներու սովորութեան՝ մեծամտութեամբ եւ զարգարուն ոճով մը կը խօսի ինքն իր մասին:

50. Սուլթանին վստահելին, որուն յանձնուած էին հսկողութիւնը եւ կանոնաւոր ընթացքը հանքերուն, փողերանոցներուն, մաքսատուններուն, քաղաքներուն եւ շահագործումի համար ուրիշներուն տրուած հողին ու դաշտին: Անիկա էր նաեւ այն վերին իշխանաւորը, որ կը դանձէր պետութեան հասնելիք դումարները եւ հարկերը: Աւելին՝ անոր իշխանութեան մէջ կ'իյնար տուգանքի կամ պատիժի ենթարկել իրեն ենթակայ եղող շրջանին մէջ կատարուող օրինազանցութիւնները: Տես՝ Բաբային, Ա., էջ 525-526: Պէտրիսիանու, Ա., էջ 161, 162: Պէտրիսիանու, Բ., էջ 127-131: Պարքան, էջ 91-95, 97, 99, 101-105, 108, 133, 140-142, 180, 193, 199, 205, 211, 215, 228, 230, 288, 322, 325, 361, 364, 366-370, 381, 383, 385, 401:

51. Մահմետական աստուածաբան եւ օրէնսդէտ: Տես՝ Քէլէկեան, էջ 857:

52. Բառացի կը նշանակէ մեր տէ՛րը, ո՛ր, ստիպյա՛ն, արարերէնի՛ ինչպէս նաեւ օսմաներէնի մէջ վերածուած է կրօնական բարձր տիտղոսի մը, որ կը տրուի մահմետական հռչակաւոր կրօնաւորներու: Տես՝ Քէլէկեան, էջ 1248:

53. Հարկային տարազը կազմուած է արարերէն ըսած՝ հարկ, տուրք, էմիր՝ իշխան, եւ պարսկերէն ապ՝ ջուր բառերէն, եւ կը նշանակէ ջուրի պատասխանատուին վճարուող հարկ: Իրականութեան մէջ՝ ջուրի օգտագործումին համար վճարուող հարկն էր անիկա, զոր կը դանձէր մարդի մը, շրջանի մը, գիւղի մը կամ նոյնիսկ նահանգի մը աւատատէրը միւլթալիներու ձեռքով: Ընդհանրապէս, ստիպյա՛ն, մի-

րապետները՝ ջրաբաշխութեան պատասխանատու եղողներէ լ՝ այդ իրաւունքը կը զօր-
ցընէին իշխանութիւններէն որպէս մուգաթաա՝ կանխիկ վճարելով որոշ դումար
մը, որմէ ետք միւթեղելիքները կ'անցնէին դործի եւ ջուրի օգտագործումը արտո-
նելու համար տուեալ շրջանի մը կամ դիւղի մը մարդերուն՝ կը պահանջէին հար-
կը: Այդ վերջինը, սակայն, միշտ ալ կ'արձանագրէր որոշ յաւելում, հախառակ որ
միւթեղելիքներն ընտրուած էին շրջանին կամ դիւղին իսկ բնակիչներուն կողմէ:
Նոյնհետայն մեծ դեր կը խաղային յաւելեալ դումարներն ու կաշառքները՝ ժամա-
նակին ջրեւ կարենալու համար պարտէզն ու այգին, դաշտն ու ցանքը, այլապէս
փճացումն էր անոնց բախտը: Ըստ կանոնադրութիւններու եւ վաւերագիրներու
տուեալներուն՝ կատարուող բռնութիւններն ու կեղեքումները զուտ կը բանային
դանդաղեցում, որոնք, սակայն, ոչ մէկ ձեւով կարող էին բանալու խոզոթութիւն-
ները: Հետաքրքրական է, որ Օսմանեան Կայսրութեան մէջ կային կարգ մը շրջան-
ներ, որոնք զերծ էին այս հարկէն: Տես՝ Պարքան, էջ 41, 42, 46, 113: Բաքային,
Բ., էջ 542-543:

54. Արարերէն բեւմ՝ հարկ, տուրք, թահուն՝ աղօրթիք, եւ պարսկերէն խանէ՝
տուն, բնակարան, վայր բառերէն կազմուած հարկային տարադ, որուն կը հանդի-
պինք միայն մէկ անգամ՝ Պարքանի հրատարակած կանոնադրութիւններուն մէջ:
Անիկա անմիջապէս դրացին է բեւմ-ի ասիւպին, բեւմ-ի տէրմէնին, բեւմ-ի տին-
դին, եւ բեւմ-ի պեղիրխանէին, եւ դուցէ ունի նաեւ անոնց քանակը որպէս տարե-
կան վճարում. սակայն, ըստ Պարքանի տուած վաւերագիրին՝ այս հարկը կրնար
ըլլալ մերթ մուգաթաա եւ վճարուիլ կանխիկ, միանուազ եւ որոշ դումարով մը,
իրականութիւն մը՝ զոր արդիւած էին կարգ մը սուլթաններ: Տես՝ Պարքան, էջ 41:

55. Արարերէն բեւմ՝ հարկ, տուրք, պեղիր՝ կուտ, սերմ, եւ պարսկերէն
խանէ՝ տուն, բնակարան, վայր բառերէն կազմուած հարկային այս տարադն Օս-
մանեան Կայսրութեան մէջ զգեցած էր բովանդակութիւնը ձեռքանի հարկին: Կը
դանձուէր ձեռքաններէն եւ շուշմայէն իւղ քամող հնձաններէն: Փոփոխական էր քա-
նակով ըստ վայրի եւ ժամանակի, ու կը դանձուէր ոչ միայն դրամով, այլ նաեւ
արտագրութեամբ: Ըստ կանոնադրութիւններու եւ աղբիւրներու՝ ոչ մէկ ձեռքան
կամ հնձան հարկագրեծ կացուցուած էր, սակայն, վաւերագիրներ կը խօսին կարգ
մը հարկագրեծուած կրօնական հաստատութիւններու մասին: Տես՝ Յ. Փափաղեան,
Վաղարշապատ Գիւղի 1725 եւ 1728 թթ. Թուրքական Հարկացուցակները, «Բանբեր
Մատենադարանի», Թիւ 5, Երևան, 1960, էջ 441. ասիկէ ետք կը նշուի որպէս Վա-
ղարշապատ: Պելախիսիսու, Ա., էջ 125: Պարքան, էջ 47, 57, 68, 329:

56. Յողնակին է արարերէն մաղթու՝ որոշուած, կտրուած բառին, որ օսմա-
ներէնէ մէջ զգեցած է հողային հարկի իմաստ: Միանուազ վճարուող դումար մըն
էր մուգաթաան, որ մերթ կը փոխարինէր աշարը, մերթ պետելի էօշիւրը: Սակայն
Օսմանեան Կայսրութեան մէջ դայն կը վճարէին նաեւ անհատ մարդեր՝ ստանալու
համար տնօրինութիւնը եկամտաբեր կալուածի մը կամ հողի մը, կամ ալ տիրանա-
լու համար կրօնական կամ այլ ձեւի պաշտօնի մը: Կարգ մը պարագաներու՝ յստակ
էր քանակը վճարումին, սակայն յաճախ փոփոխական էր անիկա, երբ պիտի դանձը-

ւէր կկղեցիներէն, վանքերէն, հանգ-ւէն, լաւիներէն, դիւիի արտադրութեան արտօնութեան, կիւրի հոցներէն, ձկնարաններէն, եւ այլն, եւ կախում ունէր օրուան իշխանաւորին կամքէն ու քմայքէն: Ընդհանրապէս հարկերու դանձումին իրաւունքը մուգաթաղով եւ կանխիկ՝ կը վաճառուէր միւլթեղիմներուն: Տես՝ Թ. Գ. փափազեան, Մատեմատարամի Պարսկական վաւերագրերը, Ա., Հրովարտակմեր, պրակ, 2-րդ, Երեւան, 1959, էջ 325: ասկէ ետք կը նշուի որպէս Հրովարտակմեր, Բ.: Զամբո, էջ 130: Թուրքական, Բ., էջ 294: Քէլէկեան, էջ 1206: Բաքալին, Բ., էջ 579: Պարքան, էջ 25, 42, 44, 80, 93, 94, 96, 100, 102, 112, 254, 305, 330, 333, 335-336, 390:

57. Արարերէն բուսում՝ հարկեր, եւ ըէայա՝ բայաներ բառերէն կազմուած հարկային այս տարազը կ'ընդգրկէր այն բոլոր հարկերը, զորոնք ոչ-մահճատականները կը վճարէին պետութեան եւ աւատական իշխանութիւններու Օսմանեան կայսրութեան մէջ: Եւ որովհետեւ կայսրութեան ամբողջ տարածքին վրայ փոփոխական էին այդ հարկերը եւ ոչ նոյնանման՝ տեղի կու տային անախորժ դէպքերու եւ մերթ նաեւ դանդաղներու: Տես՝ Բաքալին, Գ., էջ 64: Պարքան, էջ 37, 51, 81, 279, 296, 331:

58. Արարերէն աուարիտ՝ պատահարներ, արկածներ, աշխատաժամ, արդեւք, իողա բառն է, որ օսմաներէնի մէջ զղեցած է իմաստները լոկ արկած եւ դժբախտութիւն բառերուն: Բայց որպէս հարկային տարազ, անիկա ընդհանուր վերադիր մըն էր լոկ, որուն ներքեւ կ'իյնար երկար շարք մը սովորութային հարկերու: Ըսկըղնական չըջանի այս բովանդակութիւնը, սակայն, փոխուեցաւ ժամանակի ընթացքին: Նախապէս պատահական եղող աւարիտը վերջապէս վերածուեցաւ մնայուն ու պարտադիր հարկի մը, որ եթէ անցեալին կը դանձուէր արտակարգ դէպքերու եւ պատահարներու պարագային՝ հիմա սկսաւ դանձուիլ տարեկան զբոլթեամբ: Անիկա կը դանձուէր մերթ պարտադիր եւ անվճար աշխատանքով, եւ մերթ մթերային եւ դրամական վճարումով: Կը դանձուէր պետութեան կողմէ: Չայն կը դանձէին նաեւ քիւրտ ցեղապետները: Ունէր իր բազմաթիւ տարատեսակները, որոնք, ըստ վաւերագրիներու տուեալներուն, յաճախ կը դանձուէին նոյն տարուան իսկ ընթացքին: Այս իսկ պատճառով շատ ծանր կը կշռէին բայաներուն տնտեսականին վրայ: Տես՝ Հրովարտակմեր, Ա., էջ 44, 105, 108: Թուրքական, Բ., էջ 295: Ա. Սաֆրաստեան [Թրք.], Թուրքական Աղբիւրներ, Դ., Երեւան, 1972, էջ 49: ասկէ ետք կը նշուի որպէս Թուրքական, Դ.: Սիբուրի, էջ 283: Բաքալին, Ա., էջ 113-114: Պարքան, էջ 18, 20, 41, 45, 47, 50, 54-56, 72, 85, 109, 191, 202, 205, 219, 227, 228, 234, 235, 237, 238, 246, 249, 250, 260, 263, 270, 275-277, 280, 281, 288, 296, 304, 307, 325, 331, 333, 395, 398, 400: Պէլտիսիանու, Ա., էջ 137: Պէլտիսիանու, Բ., էջ 275, 292:

59. Ըսեւ կ'ուղուի՝ իսթուն Սարայը գիւղին մէջ կիսարբութեամբ հող մը չակողներն ալ:

60. Արարերէն բեւմ՝ հարկ, տուրք, սապուն՝ օճառ, եւ պարսկերէն խանէ՝ տուն, բնակարան, վայր բառերէն կազմուած հարկային տարազ մըն է բեւմ-ի սա-

պունիանէն: Սա այլ բան չէր եթէ ոչ տարեկան որոշ այն դուժարը, որ կը դանձուէր օճառի դործարաններէն. առ այդ՝ բովանդակութեամբ կը հաստատէր մուրաբաթային: Ստեփան անիկա կը դանձուէր նոյնիսկ երբ օճառի դործարան մը չկար չրջանին մէջ: Այդ պարագային հարկը կը դանձուէր ընտանիքներէն՝ տարեկան դարութեամբ: Բայց այդ վերջինը, ինչպէս ցոյց կու տան վաւերադիրները, վերջուցաւ որպէս ապօրինութիւն եւ բռնացում ժողովուրդին վրայ: Հետաքրքրական է, սակայն, որ պետութիւնը մրցակից էր օճառի դործարանատէրերուն եւ ունէր իր իսկ դործարանները: Տե՛ս՝ Պետիտիանու, Բ., էջ 142: Պարբան, էջ 41, 214:

61. Արարիւնն ըստ՝ հարկ, տուրք, եւ թրքերէն օթլադ՝ արօտավայր բառերէն կազմուած հարկային տարադ, որ բառացի կը նշանակէ արօտավայրի հարկ: Սովորութային հարկ մըն էր, զոր կը վճարէին խաշնարածները աւատատիրոջ, որուն չիմանական եկամուտներէն մէկը կը կազմէր անիկա: Հարկը կը դանձուէր տարին մէկ անգամ եւ շատ խիստ կերպով: Ոչ մէկ խաշնարած աղաւտ էր այս հարկէն, բացի միայն այն պարագայէն՝ երբ արօտավայրը կը պատկանէր զիւղին, եւ հանրային սեփականութիւն էր: Հարկը կը վճարուէր նոյնիսկ այն պարագային՝ երբ արօտավայրը պետական էր: Հարկն ունէր բազմաթիւ տարատեսակներ: Տե՛ս՝ Բաքալին, Բ., էջ 745: Պետիտիանու, Բ., էջ 201, 207, 210, 208: Պարբան, էջ 12, 34, 52, 82, 146, 168, 233, 274, 290, 301, 305, 308, 310, 313, 322, 323, 328, 333, 338, 342, 345:

62. Արարիւնն ամիլ՝ դործաւոր բառէն յառաջացած այս տարադը Օսմանեան կայսրութեան մէջ ստացած էր կայսերական վարչամեքենային մէջ կեդրոնական դիրք ունեցող պաշտօնեայի իմաստ: Արդարեւ՝ որոշ շրջանի մը կամ նահանգի մը հողային կամ այլ ձեւի հարկերու դանձիւը, հանքերու եւ հանքավայրերու պատասխանատուն եւ պետական կալուածներու տնօրէնն էր անիկա, պաշտօններ՝ այս բոլորը, զորոնք որոշ շրջանի մը համար կապալով կը վերցնէր ամիլը: Ըստ կանոնադիրներու եւ վաւերաթուղթերու տուեալներուն՝ սուլթանին վստահելին էր անիկա, եւ խոտի կը հրահանգուէր բայաներուն, ժողովուրդին եւ պետական ու վարչական այլ պաշտօնականներուն լրիւ դործակցութիւն ունենալ անոր հետ եւ ամբողջական ներաւրում ցուցարեւել անոր: Աւելին՝ անոր իրաւունք կը տրուէր օրէնքը պարտադրել եւ դործադրել իրեն ննջակայ շրջանին մէջ: Այսքան իշխանութիւն եւ իրաւունք ըստանալէ ետք՝ յստակ էր որ ունէ՛ր ամիլ ոտնձգութիւն պիտի կատարէր եւ միջամտէր այլ ամիլներու դործերուն, առաւել՝ պիտի դիմէր ապօրինութիւններու, կեցեքումի եւ բռնութիւններու: Այդ վերջին պարագային՝ պաշտօն կը տրուէր սանճադպէսներուն եւ դատաւորներուն տնօրինել պարան ու պատշաճը, պաշտպանել սուլթանին իրաւունքները, եւ ապահովել այդ վերջինին եկամուտները: Մինչդեռ, ինչպէս ցոյց կու տան կանոնադրութիւնները՝ ամիլի մը եկամուտները կընային բազմապէս հանքավայրերէն դանձուելիք հարկերէն, իրեն ննջակայ շրջանի զանազան հարկերէն եւ տուրքերէն, եւ նոյն շրջանի տուղանքներէն, ժառանգական հարցերէն իրեն բաժին ինկած եկամուտներէն եւ պատահական դանձումներէն: Տե՛ս՝ Պետիտիանու, Ա., էջ 65-68, 71, 73-76, 80, 82, 85, 86, 90, 93, 97, 100, 102-103, 105, 107-

112, 115-116, 120, 122-123, 131, 133-136, 142-143, 147, 153, 159: *Պետրոսյան*, Բ., էջ 145-153, 183-184, 194, 201, 206-207, 209, 215, 217, 220, 226-227, 230-231, 255-256, 259-261: *Պարթևյան*, էջ 10, 22-23, 42, 44, 47, 51, 53, 61, 71, 91, 94-95, 99, 101-103, 107-108, 112, 134, 147, 167, 214, 223-224, 236, 240, 252, 340, 354, 366-367, 370-372, 397:

63. *Պարթևյան*, էջ 40-41:

64. Արարերէն բեամ՝ Հարկ, տուրք, եւ պարսկերէն չիֆթ՝ դոյզ, լուծ բառերէն կաղմուած Հարկային տարազ, որ բառացի կը նշանակէ լուծի Հարկ: Իրականութեան մէջ անիկա ցանքատարածութենէ զանձուող Հարկ մըն էր Օսմանեան Կայսրութեան մէջ, ու կը զանձուէր Հող մշակող բոլոր գիւղացիներէն: Ըստ կանոնադրութիւններու՝ զայն կը վճարէին մահմետականն ու ոչ-մահմետականը, թէպէտեւ, օրինակներէն, պէտք էր որ զանձուէր լոկ մահմետականէն, որ չիֆթլիք մը ունէր: Փոփոխական էր քանակով՝ ըստ տեղի եւ ժամանակի, ու կը վճարուէր Հողատիրոջ՝ ընդհանրապէս Մարտին: Երբ ցանուած արտն ունէր լրիւ չիֆթի տարածութիւն՝ զանձուող Հարկը կրնար կոչուիլ բեամ-ի թամ, իսկ երբ կէս էր անիկա՝ Հարկն ալ կէս ըլլալուն՝ կը կոչուէր բեամ-ի նիմ: Հարկի զանձումը տեղի կ'ունենար բռնութեամբ, որուն կ'ընկերանային նաեւ զանազան ապօրինութիւններ: Տես՝ Հայկ Ղազարեան, Արեւմտահայերի Սոցիալ-Տնտեսական եւ Քաղաքական Կացութիւնը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 105: Պաշտօնական Տեղեկագիր, «Դրօշակ», ԺԱ., 1 (112), Յունուար, 1901, էջ 25: ասիէ ետք կը նշուի որպէս «Պաշտօնական»: *Պետրոսյան*, Բ., էջ 291: *Պարթևյան*, էջ 2, 19, 30, 63, 105, 114, 128, 145, 165, 188, 216, 237, 264, 289, 327, 338:

65. Մոնկոլերէն թենկէ բառը, որ մուտք դործեր է օսմաներէնին մէջ. դրամական միւսուր մըն է՝ երկու ազէի արժէքով: Տես՝ *Պարթևյան*, էջ 148-153, 156, 159, 167, 169-171:

66. Արարերէն բեամ՝ Հարկ, տուրք, եւ պարսկերէն շահնա՝ Հարկահան, ուստիկանապետ բառերէն կաղմուած Հարկային այս տարազը բառացի կը նշանակէ Հարկահանի տուրք: Ինչպէս կը ճշդէ Փափաղեան՝ շահնանբու օգտին զանձուող Հարկն էր անիկա Օսմանեան Կայսրութեան մէջ եւ կը զանձուէր կալի ատեն, դրամով կամ Հողային արտադրութեամբ, եւ յաճախ՝ ըստ քրտական սովորութեան: Սա կը նշանակէ, թէ ընդհանրապէս քրտներն էին որ կը զանձէին զայն ապօրինի կերպով, թէպէտեւ կանոնադրութիւնները միշտ ալ կը յիշէին անոր արդիւնած ըլլալը: Տես՝ Լէօ, Երկերի ժողովածու, Գ., Հայոց Պատմութիւն, Ա., Երևան, 1969, էջ 487: ասիէ ետք կը նշուի որպէս Հայոց, ԳԱ.: *Պարթևյան*, էջ 151, 156, 167, 171, 176, 189:

67. Վաթսուն խուրճէ բաղկացած խոտի դէղ: Տես՝ *Պարթևյան*, էջ 168:

68. Թրքերէն օթլուզ կամ օթլուզ՝ արօտավայր եւ դարման բառէն յառաջացած Հարկային տարազ, որ վաւերագրներու մէջ յաճախ կը յիշուի որպէս բեամ-ի օթլուզ ձևով: Պարզօրէն կը նշանակէ դարմանի, խոտի Հարկ, որ Օսմանեան Կայսրութեան մէջ կը զանձուէր խոտէն, դարմանէն եւ մերթ նաեւ արօտավայրէն: Պալ-

քաններու մէջ բաժնէն էր անկէա, մինչ ալ վայրերու մէջ փոփոխական քանակով հարկ մը, որ երբեմն տասանորդ մըն էր լոկ: Ընդհանրապէս զայն կը վճարէին ամուսնացածները, մինչ անկէ զերծ էին կացուցուած ամուսնիները, այրիները եւ մանուկները: Հարկը կը դանձուէր դրամով կամ արտադրութեամբ՝ խոտհարքի ժամանակ: Օսմանեան Կայսրութեան մէջ կային կարգ մը շրջաններ, որոնք զերծ էին հարկէն: Օսմանեան Կայսրութեան մէջ կային կարգ մը շրջաններ, որոնք զերծ էին հարկէն: Տես՝ Պարթան, էջ 26, 61, 67, 99, 101, 107, 108, 113, 118, 145, 147, 149, 160, 162, 168, 233, 247, 269, 270, 274, 283, 293, 295, 302, 305, 309, 315, 317, 323, 325, 399: Պեւտիսիանու, Բ., էջ 197, 201, 219, 298, 302:

69. Արարերէն քեֆեր՝ անհաւատ բառն է, որ օսմաներէնի մէջ եղած է քեաֆիւր կամ կեափուր բառը: Շեքրիաթական օրէնքով իսկ մահմետական ընկերութիւնը բաժնուած էր հիմնական երկու հատուածներու, մուսիմներու, որոնք հետեւորդներն էին Մեծ Մարգարէին, եւ կեափուրներու, որոնք ոչ-մահմետականներն էին: Առաջինը կը յիշուէր նաեւ որպէս սուրի ժողովուրդ, իսկ երկրորդը՝ որպէս արօրի: Տես՝ Գրիգի, էջ 105-109. Wayne S. Vucinich, **The Ottoman Empire: Its Record and Legacy**, Princeton, New Jersey, 1965, pp. 63-66, առկէ ետք կը նշուի որպէս Վուսիմի:

70. Հոս վաւերագիրը բաց է ձգուած ձեռագիրին անընթեռնելիութեան պատճառով:

71. Տես՝ Ծանօթ. Թիւ 14:

72. Ըսել կ'ուզուի՝ դիւղարնակներէն:

73. Մէկ պաթմանը կը հաւասարէր 7.68 քէ-ի. առ այդ՝ երեսուն պաթմանը կը հաւասարի $7.68 \times 32 = 245.76$ քէ-ի:

74. Օսմաներէնի մէջ շիրան կը նշանակէ Թէ՛ խաղող եւ Թէ՛ ալ դինի:

75. Արարերէն բեւմ՝ հարկ, տուրք եւ մեվլաշի՝ արջառներ բառերէն կաղմուած հարկային տարազ մը, որուն վերջին բառը յողնակին է մեշիէթ բառին: Օսմաներէնի մէջ մեվլաշին կը նշանակէ մասցու եւ կոտոշաւոր ընտանի կենդանիներ: Բեւմ-ի մեվլաշին արջառի հարկ մըն էր, որ, ըստ կարգ մը կանոնադրութիւններու, կը դանձուէր կովէն, թէպէտեւ կան ալ կանոնադրութիւններ ալ, որոնք կը նշեն անոր դանձումը ձիէն, ջորիէն, էշէն, հզէն, ցուլէն, դոմէշէն, եւ նոյնանման ալ կենդանիներէ: Փոփոխական էր քանակով՝ ըստ տեղի, ժամանակի, կենդանիի եւ կենդանիի սեռի: Մերթ կը դանձուէր այս կենդանիներու առուծախէն ու կը վերածուէր լոկ բաճի: Տես՝ «Վաղաշապատ», էջ 441: Պարթան, էջ 145, 146, 150, 168, 172, 185, 194, 231, 257, 258, 348: Բաքալին, Գ., էջ 441: Պեւտիսիանու, Բ., էջ 186, 188-189, 196, 208, 211, 214-215, 216, 220, 238, 240, 276:

76. Արարերէն բեւմ՝ հարկ, եւ մերայի՝ արօտավայր բառերէն կաղմուած հարկային այս տարազը լոկ տարբեր մէկ ստորոգումն էր արօտավայրերէն դանձուող հարկին, որ Ծանօթ էր նաեւ որպէս բեւմ-ի աղլլ, բեւմ-ի օթլաղ, բեւմ-ի եալլաղ, եւայլն: Բեւմ-ի մերային փոփոխական էր քանակով՝ ըստ տեղի եւ ժամանակի, եւ կը դանձուէր անոր կողմէ, որուն որ անունին արձանագրուած էր արօտավայրը որպէս աւատ: Կարգ մը շրջաններու մէջ կը դանձուէր տասանորդի դը-

բութեամբ, մինչ ընդհանրապէս դանձումը կը կատարուէր ոչխարի թիւին համաձայն: Ոչ մէկ անասնապահ ազատ էր արօտավայրի այս հարկէն, բացի անոնցմէ՝ որոնք այս ուղղութեամբ իրենց ձեռքն ունէին սուլթանական հրովարտակ մը: Տես՝ Պարբան, էջ 146, 150, 163, 191, 234:

77. Արարերէն բեւմ՝ հարկ, եւ ասել՝ մեղր բառերէն կազմուած այս հարկը կը դանձուէր արտադրուող մեղրէն. կը դանձուէր նաեւ շուկան վաճառուողէն. առաջին պարագային անիկա կը նոյնանար բեւմ-ի քիւլարէին հետ, իսկ երկրորդին՝ բաճին: Տես՝ ծանօթ. Թիւ 43: Տես նաեւ՝ Պարբան, էջ 25-26, 51, 146, 153, 158, 165, 168, 170, 181, 198, 346: Պէտխիանու, Ա., էջ 122, 129: Պէտխիանու, Բ., էջ 186, 188 194, 196, 201, 203, 207, 208, 211, 215, 221, 237, 240, 302: Ինան, էջ 48:

78. Արարերէն բեւմ՝ հարկ, եւ արուս՝ հարս բառերէն կազմուած հարկային այս տարազը, որ բառացի կը նշանակէ հարսնութեան հարկ, իրականութեան մէջ ամուսնութեան հարկն էր Օսմանեան Կայսրութեան սահմաններէն ներս, որուն ենթակայ էին բոլոր ամուսնացողները: Պատ-ի հավայի կարգէն տուրք մըն էր լոկ, զոր ընդհանրապէս կը վճարէր հարսնանալիք աղջկան հայրը իր սիրահարին կամ աւատատիրոջ, թէպէտ եւ այլի կնոջ մը վերամուսնութեան պարագային՝ հարկը կը վճարուէր այն աւատատիրոջ՝ որուն ենթակայ էր ամուսնացող տղամարդը: Կարգ մը շրջաններու մէջ, սակայն, բեւմ-ի արուսիէն եկամուտ արձանագրուած էր սուլթաններուն, խասկերուն եւ սանճազայէրիներուն, որոնց հետ երբեմն միասին կը դանձէին աւատատէրերը: Առկայ փաստաթուղթերը ցոյց կու տան, որ բեւմ-ի արուսիէն կը դանձուէր ըստ աղջիկին հօրը ունեւորութեան եւ առ այդ՝ Ժողովուրդը ենթարկուած էր որոշ դատարարութի մը, որուն համաձայն վճարումներն ունէին մէկ, երկու եւ չորսի համեմատութիւն: Պարականութեան վրայ հիմնուած հարկ մըն էր բեւմ-ի արուսիէն: Ընդհանրապէս ոչ-մահմետականը կը վճարէր դրեթէ կէսը մահմետականին, այլի կինը՝ կէսը կոյս աղջիկին: Սակայն կանոնադրութիւնները կը յայտնեն, որ տարբեր էր դրութիւնը Արեւմտեան Հայաստանի մէջ, ուր այս հարկն տնտեսմամատօրէն աւելի ծանր էր քան որեւէ այլ տեղ, եւ կը վճարուէր ոչ միայն աւատատիրոջ՝ ինչպէս կը պահանջէր կանոնը, այլ նաեւ քիւրտ աղային՝ եթէ անկէ կար շրջանին մէջ, եւ հայ եկեղեցիին, որ երբեք չէր հրաժարեր իր իրաւունքներէն: Յաճախ կը դանձուէր կանոնադրութիւններու սահմանէն շատ աւելիով: Կարգ մը պարագաներու՝ կնոջ մը վերամուսնութիւնը կը դառնար անկարելի՝ հարկին ծանրութեան պատճառով: Ապօրինութիւններու ծնունդ տուող այս հարկը մէկէ աւելի անգամներ տեղի տուաւ դանդատի եւ բողոքի, սակայն շարունակեցին ապօրինութիւնները. կարգ մը վայրերու մէջ ապօրինութիւն էր հռչակուած բեւմ-ի արուսիէն, իսկ կը թուի թէ կը դանձուէր անիկա: Սովորութեային այս հարկը կը դանձուէր դրամով, մասցու կենդանիով եւ այլապէս: Վաւերագիրները զայն կը ճանչնան նաեւ որպէս բեւմ-ի արուս, արուսիէ, բեւմ-ի արուսանէ, բեւմ-ի արուս պիքըր վէ սիպէ, բեւմ-ի կերտեք, կերտեք տէյլերի, բեւմ-ի նիքիւհ, նիքիւհ աչչէ-սի եւ ճիզմէ պահաւ: Հայկական աղբիւրները զայն կը յիշեն որպէս խարսնց խաղ,

Հարսանհարկ, եւ զաղջկան յաղկն: Օսմանեան բարոսորդութենէն սկսեալ անկա սկսաւ կոչուիլ իղէննամէ խարճը: Տես՝ Հայոց, ԳԱ., էջ 486-487: Մ. Կ. Զուլալեան, Ջալալիների Երթումը եւ Հայ Ժողովուրդի Վիճակը Օսմանեան Կայսրութեան Մէջ (ԺԶ-ԺԷ դարեր), Երեւան, 1966, էջ 82, 103: Ղազարեան, էջ 105: Վաղարշապատ, էջ 441: Հարկերը, էջ 86: Պաշտօնակամ, էջ 27: Լ. Ս. Քաչիկեան, Ժ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, մասն երկրորդ, 1451-1480 թթ. Երեւան, 1958, էջ CXXXII-CXXXIII. ասկէ ետք կը նշուի որպէս Յիշատակարաններ, Բ.: Պարզան, էջ 13, 26, 27, 29, 49-50, 68, 86, 103, 133, 150, 151, 153, 156, 158, 171, 173, 174, 181, 196, 199, 201, 207, 232, 244, 247, 249, 285, 295, 302, 314, 329, 333, 389, 391, 393: Բաբային, Գ., էջ 29: Պէտրոսիանու, Ա., էջ 119, 121, 135-136: Պէտրոսիանու, Բ., էջ 194, 201, 207, 214-215, 217, 219-220, 223, 238, 276, 283, 302:

79. Շահրուսին 4-5-6 աղէէի արժէքով դրամական միւսուր մըն էր:

80. Պարզան, էջ 167-169:

81. Արարերէն բնամ՝ Հարկ, տուրք, եւ Հայերէն բննաք [բնակ]—բնակիլ բառի արմատէն կազմուած Հարկային տարազ: Ըստ բառակազմութեան՝ բնակութեան Հարկն էր, զոր կը վճարէր գիւղացին, երբ ունէր կէս չիֆթէն նուազ տարածութեամբ հող: Արդարեւ, Օսմանեան Կայսրութեան մէջ կէս չիֆթէն նուազ տարածութեամբ հող ունեցող գիւղացին ծանօթ էր որպէս բննաք, թէպէտեւ ըստ Ապտուրահման Վեդիթ պէյի՝ բննաք կը նշանակէր ամուսնացած: Բնամ—բննաքը կը վճարէին բոլոր հողագործներն անխտիր՝ անկախ իրենց կրօնական եւ ցեղային պատկանելութենէն: Զայն կը դանձէին հողատէրերը: Զայն կը վճարէին նաեւ անոնք, որոնք կը մնային ձմեռանոցի մը մէջ երեք տարի անընդմէջ: Հարկը կը դանձուէր չորրորդ տարիէն սկսեալ: Կը վճարէին նաեւ այն հողագործները, որոնք կը մնային սիփազիի մը հողին վրայ ու կը վճարէին բնամ—ի տուխանը կամ թիւթիւնը: Զորրորդ տարիէն սկսեալ ստիպուած էին այլեւս վճարել բնամ—ի բննաքը: Նոյնն էր դրութիւնը այն բայային Համար, որ հեռանալէ ետք իր վայրէն՝ կը վերադարձուէր նոյն տեղը: Այս Հարկին ենթակայ էին նաեւ ամուսնացած այն բայաները, որոնք իրենց հօրմէն կը ժառանգէին կէս կամ մէկ չիֆթէն նուազ հող: Մեծ զանազանութիւն ներկայացնող Հարկ մըն էր բնամ—ի բննաքը, եւ երբեմն կը նկատուէր մէկ տարբերակը զլիսահարկին եւ առ այդ՝ կ'իյնար շերիաթական Հարկերու դասէն ներս: Ըստ կանոնադրութիւններու եւ վաւերադիրներու՝ ունէր իր տարատեսակները, ահա թէ ինչու Համար տարօրինակ չէ անոր հանդիպիլ որպէս բաճ—բննաք, էքիւնլու բննաք, ճապա բննաք կամ պարզօրէն որպէս բննաք: Տես՝ Ծանօթ. թիւ 39: Բաբային, Ա., էջ 204: Բաբային, Գ., էջ 441: Պարզան, էջ 2, 6, 8, 9, 19, 22-24, 29, 30, 33, 38, 45-49, 54-57, 63-68, 76, 78, 80, 102, 105-106, 110-111, 116, 132-133, 158, 165, 174-176, 181, 188, 193, 196, 198, 206, 235, 253, 308, 326, 327, 333, 390:

82. Արարերէն բնամ՝ Հարկ, տուրք, եւ Թրքերէն ճապա՝ ձրի, ի զուր, կամաւոր բառերէն կազմուած Հարկային այս տարազը կը նշանակէ կամաւոր Հարկ: Ըստ

կանոնադրութիւններու՝ ճապա կը կոչուէր ամուրի եւ հողագործի այն դիւղացին, որ ապրելով հանդերձ իր հօրը հետ՝ իր օրապահիկին համար ունէր իր անկախ զործը: Իրականութեան մէջ բեամբի ճապան՝ հողէն շահ չսպասողով մարդուն վըճարած հարկին էր Օսմանեան Կայսրութեան մէջ: Չայն կը վճարէին ընդհանրապէս միայն ոչ-մահմետականները, թէպէտեւ կանոնադրութիւնները ցոյց կու տան թէ կային շրջաններ, ուր անիկա կը դանձուէր նաեւ մահմետականներէն: Փոփոխական էր քանակով՝ ըստ տեղի եւ ժամանակի, ու կը վճարուէր աւատատիրոջ, որուն աւատին մէջ կը բնակէր տուեալ ամուրին: Վաւերագիրները զայն կը ճանչնան նաեւ որպէս բեամբի ճապա բննաք եւ ճապա աղչէսի: Տես՝ Պարքան, էջ 2, 35, 36, 47, 48, 50, 54, 57, 76, 77, 80, 110-111, 158, 165, 181: Բաքալին, Ա., էջ 253: Բաքալին, Գ., էջ 29:

83. Բեամբի արուսանէի բաղկացուցիչ երկրորդ բառը լոկ պարսկական ձեւն է արուսիէի: Տարազը բառացի կը նշանակէ հարսնութեան հարկ: Տես՝ Ծանօթ. Թիւ 78:

84. Տես՝ Ծանօթ. Թիւ 41:

85. Արաբերէն բեամբ՝ հարկ, տուրք, եւ Թրքերէն դովան՝ փեթակ բառերէն կազմուած հարկային այս տարազը կը նշանակէ փեթակի հարկ. իրականութեան մէջ, սակայն, սովորութային այս հարկը, զոր կարգ մը հեղինակութիւններ կը նկատեն շերիաթական՝ մեղուարուծութեան այն հարկն էր, զոր մեղուարոյծը կը վճարէր մերթ անոր, որուն բայան էր ինք, ու երբեմն այն աւատատիրոջ, որուն հողին վրան էր փոխադրած իր փեթակները: Տակալին՝ հարկը կը դանձէին նաեւ սանձաղպէյները, սիփահիները, վաղֆներուն տէրերը, սուպալները, պետութիւնը, եւ նոյնիսկ քիւրտները՝ ըստ մատենանի արձանագրութեան, կամ ալ պարզօրէն ապօրինութեամբ, մերթ առանձին ու երբեմն ալ ընկերովի: Երբ փեթակներուն թիւն ըլլար տասէն աւելի, հարկը կը դանձուէր իւրաքանչիւր փեթակէ որոշ գումարով մը, որ կրնար շրջանէ շրջան ներկայացնել մեծ զանազանութիւն: Գանձուածի այս դրութեամբ՝ հարկին բովանդակութիւնը կը համընկնէր տարադին կազմութեան: Պատի՝ հալայի կարգէն եղող այս հարկը կը դանձուէր մեղրի կութէին՝ որ ընդհանրապէս տեղի կ'ունենար աշնան, կամ՝ կալի ատեն, կամ ալ Օղոստոսի երկրորդ կէսին՝ տարուան ամենէն տաք օրը: Կանոնադրութիւնները բեամբի դովանը կը ճանչնան բազմաթիւ այլ վերագրերով, որոնք կամ կ'աւելուին մեղրին եւ կամ ալ՝ փեթակին: Տես՝ Պարքան, էջ 6, 20, 31, 56, 57, 68, 79, 112-113, 193, 216, 233, 253, 273, 305, 308, 329, 340: Պելտիսիանու, Ա., էջ 122, 187: Պելտիսիանու, Բ., էջ 194, 201, 207, 214, 220, 223:

86. Պարքան, էջ 110-111:

87. Պարսկական ամանորը:

88. Արաբերէն բառ, որ կը նշանակէ դրամ: Միջնադարուն Օսմանեան Կայսրութեան մէջ օգտագործուող դրամական միւսեր մըն էր՝ տեղէ տեղ եւ ժամանակէ ժամանակ դնողական տարբեր կարողութեամբ:

89. Թրքերէն դարա՝ ցամաք, հող, երկրամաս, սեւ, դժբախտ, եւ սալիւն

կամ սալղըն՝ կատաղի, յարձակողական, հարկ, տուրք բառերէն կազմուած հարկային այս տարազը բառացի կը նշանակէ հողի տարեկան Իրականութեան մէջ առնուած հարկ մըն էր Օսմանեան Կայսրութեան մէջ, որ օրինական էր կարգ մը շրջաններու մէջ եւ ապօրինի՝ ուրիշներու: Կը դանձուէր տարեկան միանուազ դումարով մը, թէպէտեւ մերթ արտադրուած բերքի որոշ մէկ համեմատութեամբ ալ: Երբեմն կը դանձուէր դարիով, յարգով, իւղով, մեղրով, ապուխտի համար օգտագործելի միսով, մուշտակով, կաթնտու կովով, թաղիքով ու փայտով: Հարկը կը դանձէին աւատատէր սիրահիւները, սանճադպէսիները եւ զանազան մեծ ու փոքր պաշտօնատարներ: Որպէս ապօրինութիւն արդիւնեցաւ մէկէ աւելի անդամներ, բայց առնուած մնաց ի զօրու, ու շարունակեց տեւել՝ ինչպէս ցոյց կու տան կանոնադրութիւնները: Տես՝ Պարթան, էջ 61, 118, 129, 151, 155, 171, 270, 317, 323:

90. Արարերէն խարած՝ հարկ, տուրք բառէն յառաջացած խարճ, եւ թրքերէն թիմար՝ խնամատար, կամ աւատատիրոջ յանձնուած հողամաս բառէն կազմուած հարկային այս տարազը կը յիշուի միայն մէկ անգամ ձեռքի տակ գտնուող կանոնադրութիւններու մէջ, թէպէտեւ որպէս հարկային տարազ՝ թիմարին կը հանդիպինք բաղմամբիւ անդամներ: Բառացի կը նշանակէ աւատի հարկ, մինչդեռ անկապ ապօրինի հարկ մըն էր, որ կը դանձուէր միանուազ, որպէս մադթու, ոչ միայն աւատատէրերու կողմէ՝ այլ նաեւ պետութեան: Ըստ Սեւերեկի կանոնադրութեան՝ վերցուեցաւ 1518 թ.ին, բայց Քիաթիպ Զեյնպի թուրք պատմիչը կը յայտնէ, որ առնուած դանձուեցաւ 1642 թ.ին ալ: Տես՝ Թուրքական Բ., էջ 115, 268: Պարթան, էջ 171:

91. Արարերէն զիրպել՝ մաղ բառն է, որ կ'օգտագործուէր նաեւ հացահատիկ չափելու. բովանդակութիւնը կը կընէր Պոլսոյ մէկ քիւլէն:

92. Արարերէն բեամ՝ հարկ, տուրք եւ իյտ՝ տօն բառերէն կազմուած հարկային այս տարազը բառացի կը նշանակէ տօնական հարկ, որ ըստ բովանդակութեան՝ կը նշանակէ տօնական օճերու առիթով վճարուող հարկ: Իրականութեան մէջ՝ մահմետական Փիթր, դատիր, դուրպան եւ նեվրուզ կոչուած տօներուն առիթով դանձուող պարտադիր նուէրն էր անիկա, զոր կը դանձէին աւատատէրերը, պետական պաշտօնեաները եւ պաշտօնատարները՝ դրամով կամ ոչխարով եւ բնամթերքով: Ապօրինի այս հարկը, որ սկիզբները պատահական էր, հետագային վերածուեցաւ միայնու եւ տարեկան հարկի մը, որ կը դանձուէր մահմետական ամանորին, կամ կալի եւ ալքեկութիւն մտնէ: Զայն կը դանձէր նաեւ սուլթանը կամ շահը: Փոփոխական էր քանակով՝ ըստ տեղի, ժամանակի եւ դանձողի: Սկզբնաղբիւրները զայն կը յիշեն նաեւ որպէս իյտիէ, ըյտիէ, էյտի, պայրամճեք, պայրամըզ գոյունու, բեամ-ի նովրուզիէ, եւ նովրուզի: Շահ'տ քիւլեր զերծ էին այս հարկէն Տես՝ Կամուռ, էջ 129, 138: Թուրքական, Ա., էջ 359: Ղազարեան, էջ 107: Հայոց, ԳԱ., էջ 487: Յիշատակարաններ, Ա., էջ CXXXIII: Հրովարտական, Ա., էջ 54-56: Պարթան, էջ 128, 149, 150, 153, 171, 172, 192, 215, 552: Բաքալին, Բ., 107-108:

93. Տես՝ Ծանօթ. Թիւ 92:

94. Պարթան, էջ 170-171:

95. Առանձին վիճակի այս կանոնադրութիւնը, որ կը պատկանի Սուլթան Սիւլէյման Գանուռիի ժամանակաշրջանին՝ պէտք է ինչո՞ւ 1520-1566 թուականներուն միջեւ: Դատ հաւանարար այս թուականներու կէսերուն էր որ զբաւուեցաւ Կիլիկիոյ այս շրջանը օսմանցիներուն կողմէ՝ ու կոչուեցաւ Զուզուր Ապատ: Այսօր չրջանն ամբողջ ծանօթ է որպէս Զուզուր Օվա:

96. Արարերէն բնամ՝ հարկ, տուրք, եւ պարսկերէն խանէ՝ տուն, կայք, հաստատութիւն բառերէն կազմուած այս հարկին բաղկացուցիչ երկրորդ մասը կը նշանակէ նաեւ ընտանիք. առ այդ՝ հարկային տարազը բառացի կը նշանակէ ընտանիքին կամ ընտանիքի հարկ, որ կը դանձուէր թէ՛ Օսմանեան եւ թէ՛ ալ Պարսկական Կայսրութիւններուն մէջ: Սովորութեամբ այն հարկ մըն էր անիկա եւ կը դանձուէր ստանդալէյիներուն, աւատատէրերուն, քիւթիպներուն, էմիրներուն, պետութեան, արքունիքին եւ սուլթանին կողմէ, յաճախ երկու նուազով, դարնան եւ տշնան: Կը դանձուէր դրամական որոշ գումարով մը, կամ որպէս փոխարժէք որոշ քանակով փայտի, խոտի, յարդի, հաւի, իւղի, եւ նոյնանման այլ նիւթերու: Ձայն կը վճարէին ընտանիքներ եւ անհատ մարդեր: Խտրականութեան վրայ հիմնուած հարկ մըն էր բնամի խանէն, զոր յաճախ ոչ-մահմետականը կը վճարէր աւելի մահմետականներէն: Կարգ մը վայրերու մէջ յայտարարուած էր ապօրինութիւն, բայց հակառակ անոր կը շարունակուէր դանձուիլ՝ ըստ «Հին օրէնքի» կամ «Քրտական սովորութեան» ինչպէս կը նշեն կարգ մը կանոնադրութիւններ: Կային շրջաններ, ուր որոշ ծառայութեան մարդեր զերծ էին կացուցուած բնամի խանէի պարտաւորութենէն, մինչ՝ երբ կայսրութեան արեւելեան շրջաններուն մէջ անիկա ընդհանրապէս կը դանձուէր բոլոր հպատակներէն՝ Պալքաններուն մէջ զայն կը վճարէին միայն անոնք, որոնք զաւրով այլ վայրէ մը կը հաստատուէին հանքավայրերուն մէջ: Սկզբնաղբիւրներու եւ դրականութեան մէջ բնամի խանէն կը յիշուի նաեւ որպէս խանէ աշէնի, խանէ ֆլորիսի, խանէ-ի շուսար, բնամի թիւթիւն, բնամի եուրտ, բնամի տուխան, բնամի տուտ, էվ փուլի եւ թուտ-ի փուլ: Տես՝ Հայնց, ԳԱ., էջ 93: Թուրքական, Բ., էջ 230: Ղազարեան, էջ 107: Պելտիանու, Բ., էջ 201, 301-302: Պարքան, էջ 117, 118, 132, 134, 139, 144, 149, 153, 155, 168, 190, 194, 200, 201, 204, 228, 245, 249, 306, 307, 318, 321, 322, 325, 340: Բաքալին, Ա., էջ 727:

97. Երկու աղէի համազօր օսմանեան դրամական միաւոր: Համաշխարհային Առաջին Պատերազմէն առաջ կ'արժէր մէկ զրուլի մէկ քառասուներորդը, թէպէտեւ, ըստ Սաֆրաստեանի՝ երեք աղէ էր անիկա: Տես՝ Թուրքական, Ա., էջ 380: Քէլէկեան, էջ 312:

98. Արարերէն ճիզիէ՝ տուրք, հարկ բառէն յառաջացած հարկային տարազ, որ գրեթէ բոլոր սկզբնաղբիւրներու մէջ ալ ստացած է զլիսահարկի իմաստ: Ըստ վաւերագիրներու եւ հասկացողութեան շերիաթական այս հարկը կը վճարէին բոլոր ոչ-մահմետականները՝ մահմետականներու կողմէ իրենց կեանքին, պատիւին եւ ինչքին պաշտպանութեան համար: Կարգ մը աղբիւրներ կը նշեն, թէ անիկա կը վճարուէր ոչ-մահմետականին կողմէ՝ պահելու եւ գործադրելու համար իր կրօնն ու անոր սկզբունքները, մինչ այլ փաստաթուղթեր կը վկայեն անոր զինուորութեան

փոխան դանձուած ըլլալը: Ինչ որ ալ ըլլայ անոր տուն տուող պատճառը՝ անիկա կը դանձուէր պետութեան կողմէ, մասնաւոր պաշտօնեաներու միջոցով, որոնք կը կոչուէին ճիզիէտար: Ուղիղները խարաճի փոխան զործածուող հարկային տարազ մըն էր անիկա, եւ անոր սահմանածը կը դանձուէր մթերքով. բայց հետագային վերածուեցաւ զբամական որոշ դումարի մը: Ըստ նիւթական կարողութեան՝ ժողովուրդը բաժնուած էր երեք դասի՝ աղքատներու, միջակօրեակներու եւ հարուստներու, որոնք կը վճարէին մէկի, երկուքի եւ չորսի համեմատութեամբ: Հակառակ այս մէկուն սակայն, փաստաթուղթերը ցոյց կու տան խտրական այն ուղին, որուն վրայ յենած մնաց անիկա: Դրեթէ միշտ ալ ապօրինութիւններու տուն տուող հարկ մը եղաւ ճիզիէն, որ կանոնադրութիւններու, փաստաթուղթերու եւ զբահանութեան մէջ կը յիշուի նաեւ որպէս ճիզիէ կեպեան, շախի վերիկի, զաֆա վերիկիսի, մադթու ճիզիէ եւ ալեքուուս ճիզիէ: Հայկական աղբիւրներ զայն կը ճանչնան նաեւ որպէս ճիզրա, ջազիա եւ արծաթազին ծառային: Ճիզիէն յառաջացած ապօրինութիւններուն վրայ պէտք է աւելցնել նաեւ անոնց ընկերակցող խփութութիւններն ու բրոնութիւնները: Օրինականօրէն հասունութեան թեւակոխած այր մարդերէն դանձելի այս հարկը կը դանձուէր ոչ միայն օրօրոցի մանուկներէն եւ զառամեալ ծերերէն՝ այլ նաեւ մահացածներէն՝ զործադրելով կարելի եւ անկարելի ամէն տեսակ բռնութիւն: Աւելին՝ կը դանձուէր ոչ միայն աւելիով՝ այլ նաեւ զալիք քանի մը տարիներունը միասին, անոր ընկերացնելով դանազան ու զարմանազան անուններով կատարուած յաւելումներ: Ի վերայ այս ամենայնի՝ երբ Մահմուտ Բ.-ի իշխանութեան օրերուն՝ աղէն դադրեցաւ շրջապայութենէ եւ զայն փոխարինեց զուրուշը որպէս զբամական միաւոր, աղէն վերածուեցաւ զրուշի եւ այդ ձևով աւելցաւ ու լազմապատկուեցաւ նիւթական բովանդակութիւնը ճիզիէին: 1855-1856 թթ.-ու շրջանին փոխուեցաւ անունը ճիզիէին եւ անոր փոխան իշխանութիւնները սկսան դանձել պետելի ասքերիէն. բայց կարգ մը շրջաններու մէջ նորին քովիկն ի վեր յամառեցաւ մնալ հինը, ու դանձուիլ: Երբ քրիստոնեաներէն դանձուողը պարզօրէն կը կոչուէր ճիզիէ՝ հրեաներէն դանձուողը կոչուեցաւ ճիզիէ հեռւտան: Ըստ կանոնադրութիւններու եւ փաստաթուղթերու տուեալներուն՝ ոչ ոք ազատ էր այս հարկէն, բայց կային կարգ մը շրջաններ եւ կարգ մը մարդեր, որոնք զերծ էին կացուցուած ճիզիէն եւ այլ պարտաւորութիւններէ՝ շնորհիւ կա՛մ իրենց կատարած աշխատանքին ու պաշտօնին եւ կա՛մ ալ՝ իրենց շնորհուած հրովարտակներուն: Տես՝ Ղազարեան, էջ 101: Զուլալեան, էջ 68, 98-99: Հրովարտակներ, Ա., էջ 46, 49, 51, 69, 70, 118: Հրովարտակներ, Բ., էջ 228: Հայոց, ԳԱ., էջ 78, 84, 482, 487: Թուրքական, Ա., էջ 184-185, 279, 375: Թուրքական, Բ., էջ 230, 294-295: Ա. Ռ. Սաֆրաստեան եւ Գ. Հ. Սանթուրեան [Թրք.] Թուրքական Աղբիւրներ, Դ., Երեւան, 1972, էջ 33, 69, 226, 230. ասկէ ետք կը նշուի որպէս Թուրքական, Դ.: Ա. Ռ. Սաֆրաստեան [Թրք.], Թուրքական Աղբիւրներ, Գ., Եվիա Զելիպի, Երեւան, 1967, էջ 180, 341. ասկէ ետք կը նշուի որպէս Եվիա Զելիպի: Յ. Գ. Փափազեան, Ռայաթների իրական Ազատութեամբ Հարցը Արեւելեան Հայաստանում 16-18րդ դդ. Եւ Շահ Սուլթան Հուսէյնի Հրովարտակը, Վ. Դ. Բարեւադարեան եւ Վ. Ա. Յակոբեան [խմբ.] Ճէջեր

Հայ ժողովուրդի Պատմության և Բանասիրության, Երևան, 1971, էջ 48, 134: ճիշատակարաններ, Բ., էջ CXXI-CXXII: Յ. Փափազյան, Սեֆեան Իրանի Ասիական տարածքի Վաղաքականության Հարցի Շուրջ, «Բանբեր Մատենադարանի», Թիւ 3, Երևան, 1956, էջ 87, 93: Դ. Ե. Երեմեև, Թուրքիի Մագուսը, Երևան, 1975, էջ 133, 140, 187: Առաջ Յովհաննիսյան, Դրուագներ Հայ Ազատագրական Մղձի Պատմության, Գիրք Երկրորդ, Երևան, 1959, էջ 18, 137, 139: Ավդալբեկյան, էջ 442: Սիրունի, Ա., էջ 143, 283: Համարեան, էջ 315: Ջամբո, էջ 130, 144, 150-151, 215: Լ. Ս. Խաչիկյան, Ժ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, մասն Երրորդ, 1481-1500 թթ., Երևան, 1967, էջ 259: ասկէ ետք կը նշուի որպէս Յիշատակարաններ, Գ.: Ջաւէն Արքեպ., Պատրիարքական Յուշերս - Վկայագիրներ Եւ Վկայութիւններ, Գահերէ, 1947, էջ 67: Վ. Ա. Յակոբեան [խմբ.], Մամբ Ժամանակագրութիւններ, Բ., Երևան, 1956, էջ 249, 396, 397, 420: ասկէ ետք կը նշուի որպէս Ժամանակագրութիւններ, Բ.: Վաղարշապատ, էջ 453: Աւետիս Վարժապետ Պէրպէրեան, Պատմութիւն Հայոց, Կոստանդնուպոլիս, 1871, էջ 452, 469, 480, 488: Վուսինի, էջ 47-48: **Shorter Encyclopedia of Islam**, p. 611. Majid Khadduri, **War and Peace in the Law of Islam**, Baltimore, 1961, p. 196, 198. Իսան, էջ 24: Բաբայի, Ա., էջ 50, 298-302: Բաբայի, Բ., էջ 133, 394: Բաբայի, Գ., էջ 14, 343: Bernard Lewis, **The Emergence of Modern Turkey**, London/Oxford/New York, 1968, p. 116 Պարթան, էջ 72, 83, 198, 200, 201, 204-205, 216, 226, 227, 230, 301, 316, 318, 320, 322, 338, 351, 398:

99. Թրքերէն քիւլթը՝ խնոցի, և պարսկերէն բաճ՝ հարկ, տուրք բառերէն կազմուած հարկային տարադ, որ կը յիշուի միայն մէկ անգամ՝ ձեռքի տակ դրուող կանոնադրութիւններու մէջ: Անորոշ բովանդակութեամբ այս հարկը կը դանձուէր միայն Ատանայի շրջանին մէջ, և միայն քրիստոնեաներէն, իսկ անկէ զերծ էին կացուցուած լոկ անոնք, որոնք սուլթանական հրովարտակ մը ունէին հարկադրութեան համար: Տես՝ Պարթան, էջ 20:

100. Գրեզարական սխալէ յառաջացած Թիւ մը. ըստ հաշիւի՝ վաթսուն փաթան պիտի ընէ հարիւր քսան ազգէ: Տես՝ Ծանօթ. Թիւ 97:

101. Արարերէն բէխ՝ պետ, տոհմապետ, մեծաւոր, նախագահ բառն է ու կը նշանակէ պատասխանատու:

102. Արարերէն սազա՝ ջրկիր բառն է, որ հոս կը նշանակէ ջրարաշխ, բրինձի դաշտերուն մէջ ջուրի օգտագործումին հսկող մարդ:

103. Թրքերէն քիւլթը՝ Թիւ վարող բառէն յառաջացած տարադ մը, որ Օսմանեան արդարադատութեան մէջ կը նշանակէր նաեւ Թիւ պարտ: Հոս կը նշանակէ մշակ, ձրի բանուոր:

104. Արարերէն բեմ՝ հարկ, տուրք, և Թրքերէն եաթազ՝ անկողին, ապառտանարան բառերէն կազմուած հարկային տարադ, որ կը նշանակէ ապաստանարանի հարկ, մինչդեռ Օսմանեան Կայսրութեան մէջ ձմերանոցներու մէջ կայք հաստատած ոչխարի և այծի հօտերէն դանձուող հարկն էր անիկա: Կը դանձուէր աւատա-

տիրոջ կողմէ՝ Մալտի սկիզբը, սշխարով, հացահատիկով եւ դրամով: Սկզբնաղբիւր-ներու մէջ կը յիշուի նաեւ սրպէս բեւեռ-ի զըշտադ: Տես՝ Պարբան, էջ 47, 67, 68, 146, 192, 200, 201, 206, 208:

105. Արարեբէն բեւեռ՝ հարկ, տուրք, եւ տուխիշն՝ ծուխ, մուխ, ծխախոտ բառերէն կազմուած այս հարկը իրականութեան մէջ բնակարանի հարկ մըն էր լուի, որ կը զանձուէր իւրաքանչիւր տունէ, բնակարանէ կամ ընտանիքէ: Աւելին՝ բնա-կութեան հարկ մըն էր անիկա եւ կը զանձուէր աւատատիրոջ կողմէ: Սկզբնաղբիւր-ները զայն կը ճանչնան նաեւ սրպէս տտեթ-ի տուխանի, բեւեռ-ի թիւթիւն եւ բեւեռ-ի տու, բ., էջ 201, 223, 301, 303:

106. Տես՝ ծանոթ. թիւ 41:

107. Արարեբէն իմամ՝ մահմետական կրօնապետ բառն է: Թրքերէնի մէջ կը նշանակէ նաեւ պետ, հրամանատար եւ առաջնորդ:

108. Պարբան, էջ 204-206:

108ա. Պարբան, էջ 300:

109. Նոյնը, էջ 124-129:

110. Այսինքն՝ ղիսուսներու զրութիւնն ըստ Զիւլզատիւրներու հին օրէնքին:

111. Պարբան, էջ 124:

112. Ըսել կ'ուզուի՝ ղոզերուն եւ աւաղակներուն:

113. Կերպասի հաստակ եւ փափուկ կտոր, որ կը զետեղուի դրաստի մորթին եւ համետին միջեւ:

114. Օսմանեբէն բառն է ղինա, որ հոս թարգմանուած է շնանալ, պոռնկու-թիւն ընել եւ պատուազրկել՝ ըստ տեղի եւ նախադասութեան բովանդակութեան:

115. Արարեբէն տիէթ՝ տուղանք բառէն ստեղծուած օրինական տարազ մը, որ օսմանեբէնի մէջ ստացեր էր տրեան դին իմաստը: Օսմանեան Կայսրութեան մէջ տիէթը կը վճարուէր ոճրագործին կամ յանցաւորին կողմէ սպանեալին հարազատ-ներուն, ժառանգորդներուն կամ աղղականներուն, եւ վերաւորեալին՝ եթէ արիւ-նահեղումը մահ չէր պատճառած: Տեղէ տեղ եւ ժամանակէ ժամանակ քանակական եւ որակական տարբեր իմացում զգեցած տարազ մը եղաւ տիէթը, որուն վճարումը պէտք էր որ որոշուէր օսմանեան օրէնքի տրամադրութիւններուն համաձայն: Սա-կայն, ինչպէս կը նշեն կանոնադրութիւնները եւ այլ վաւերագրերն էր՝ յամախ կը պատահէին ապօրինութիւններ եւ օրինադանցութիւններ, եւ փոխանակ օրէնքով քննելու, երեւան հանելու ոճիրին կամ ոճրագործ արարքին ներքին ծալքերը եւ դրդապատճառները, եւ ըստ այնմ տնօրինելու պարտն ու պատշաճ՝ դատական իշ-խանութիւնները կը կաշառուէին եւ աղատ կ'արձակէին մահաւանդ մահուան դա-տապարտուելիք ոճրագործները: Եթէ, ըստ սկզբնաղբիւրներու, մահապատիժ չկար կատարուած արարքին համար՝ յանցաւորն անհրաժեշտ էր որ վճարէր տիէթը: Օրե-նականօրէն կրնէր կը վճարէին տիէթին կէսը, ինչպէս որ էր դրութիւնը անչափա-հասներուն համար ալ. այդ պարագային՝ կէս տիէթը կը վճարէին անչափահասին

Հարազատները: Խենթները զերծ էին տիէթէն, որովհետեւ անպատասխանատու կը նկատուէին իրենց արարքներուն համար, եւ առ այդ՝ անոնց կէս տիէթը կը վճարուէր պետութեան կողմէ: Երբ չափահասը կամ անչափահասը կանխամտածուած ձեռով զործէր ոճիրը՝ մահապատիժ էր վճիռը: Տես՝ Բաքալին, Ա., էջ 489: Պարբան, էջ 121-123, 126, 180:

116. Ըսել կ'ուզուի՝ տուգանք պիտի չդանձուի անկէ:

117. Ըսել կ'ուզուի՝ տուգանք պիտի չդանձուի անկէ:

118. Թրքերէն գոյուն՝ ոչխար, եւ պարսկերէն բաճ՝ մաս, բաժին, տուրք, մաքս, բառերէն կազմուած Հարկային այս տարազը պարզօրէն կը նշանակէր ոչխարի մաքս, այսինքն՝ չուկայի մէջ մորթուելու համար կամ ալլապէս վաճառուող ոչխարէն դանձուող մաքս, թէպէտեւ կարգ մը աղբիւրներ եւ կանոնադրութիւններ կը նշոյնացնեն զայն ատեթ-ի գոյունի, ատեթ-ի աղնեմի, բեսմ-ի աղնեմի եւ նոյնատեսակ Հարկային այլ տարազներու հետ: Մինչդեռ՝ եթէ վերջիները կը դանձուէին խաշնարածներէն որպէս ոչխարաբուծութեան Հարկ՝ գոյուն բաճըն Հիմնականօրէն բաճ մըն էր, որ կը դանձուէր անոնցմէ անկախ եւ ամէն անգամ՝ երբ վաճառուէր ոչխարը: Հարկին կէսը կը վճարուէր Ժախողին, եւ միւս կէսն ալ՝ զնողին կողմէ, ու կը դանձուէր ամիրին ներկայացուցիչը եղող էմինի մը կողմէ: Տես՝ Պելտիսիանու, Ա., էջ 167: Պարբան, էջ 24, 101, 123:

119. Վաւերագիրներու եւ կանոնադրութիւններու մէջ մերթ այսպէս կը կոչուի օսմանեան աղչէն: Տես՝ Պարբան, էջ 111, 112, 118, 123, 124, 138, 145, 146, 148-151, 153, 156, 166, 183, 204-206, 217, 218, 226, 230, 361:

120. Արարերէն դատի՝ դատաւոր, եւ ասքեր՝ զինուոր բառերէն կազմուած այս տարազը տարօրինակ կերպով ոչ մէկ կապ ունի բանակի եւ զինուորութեան հետ: Ընդհակառակը, Օսմանեան Կայսրութեան մէջ չէյն իւլ-իսլամէն անմիջապէս ետք եկող կրօնական բարձրագոյն հեղինակութիւնն էր անիկա: Իրականութեան մէջ՝ օսմանեան վարչամեքենան կանդուս պահող չորս պաշտօններ կային - վեզիրներունը, զազըասքերիներունը, տեֆթերտարներունը եւ նշանճըներունը: Վարկով երկրորդ աստիճանի վրայ կը գտնուէր զազըասքերը, որմէ Օսմանեան Կայսրութիւնը ունէր երկու հատ, որոնք Ժանօթ էին Բումէլիի զազըասքեր եւ Անատոլիի զազըասքեր անուններով, եւ կը ներկայացնէին արդարադատական բարձրագոյն հեղինակութիւնը իրենց շրջանին մէջ: Գազըասքերն իր ապրուստին եւ զանազան ծախսերուն համար պետական զանձէն կը ստանար որով քանակով ուճիկ, որ Ժանօթ էր ուլուֆէ անունով, եւ որմէ անկախ՝ Ժողովուրդէն ալ կը զանձէր շարք մը մասնաւոր Հարկերու: Տես՝ Թուրքիսլամ, Ա., էջ 364: Գրիգի, էջ 97:

121. Թրքերէն դան՝ արիւն, եւ արարերէն ճերիմէ՝ ոճիր, յանցանք բառերէն յառու՛ղած Հարկային այս տարազի ներքին բովանդակութիւնը կը համընկնի տիէթինին, տրուած ըլլալով որ Թրքերէնի մէջ ճերիմէն ունի տուգանք իմաստը: Առ այդ՝ դան ճերիմէսին հեղուած արեան տուգանքն էր: Բայց մերթ այսպէս կը կոչուէր նաեւ այն տուգանքը, զոր Օսմանեան Կայսրութեան մէջ իշխանութիւնները կը զանձէին բռնութեամբ կատարուած պատուազրկումի մը պարագային: Տես՝ Ժա-

նօթ. Թիւ 46: Քէլէկեան, էջ 439: Պարթան, էջ 121, 123, 126, 180, 388:

122. Պարսկերէն քեթիսուտա բառը կը նշանակէ տանուտէր կամ փոխանարդ, որ օսմաներէնի մէջ ստացած է նաեւ իմաստը շրջանի մը վարչական պատասխանատուն, կամ Հիմնարկի մը վաշութեան մեծաւորին: Կը նշանակէ նաեւ պաշտօնական ներկայացուցիչ. աւելին՝ դիւղապետ: Այս վերջինին աղաւաղումն է քեթիան, որ մուխթարն է դիւղին, մինչ մուխթար կը նշանակէ պարզօրէն թաղապետ: Ըստ կարգ մը օսմանեան վաւերագիրներու՝ քեթիսուտան պաշտօնական ներկայացուցիչն էր Բարձրագոյն Դրան եւ շրջաններու մէջ սանճադպէյէն, դատընէ եւ սուպաշընէ անմիջապէս ետք կու գար, ու կը հսկէր սուլթանին եկամուտներուն եւ սիմսարներու արարքներուն եւ շարժումներուն վրայ: Կրնար ըլլալ նաեւ կառավարիչը շրջանի մը, եւ օղնէլ միւհթեպիյին՝ անոր պաշտօնի կատարումին ատեն: Հոս տարազը առնուած է վերջին այս իմաստով: Տես՝ Թուրքական, Ա., էջ 381: Պետիսիանու, Ա., էջ 79, 93, 94-95, 96, 98, 102, 104, 106-107, 132, 133, 139, 144, 149-150, 162, 169: Պետիսիանու, Բ., էջ 296: Քէլէկեան, էջ 1012: Պարթան, էջ 50, 66, 78, 91, 117, 123, 124, 149, 290, 356-359, 391:

123. Օսմաներէն պոյ՝ տոհմ, ցեղախումբի որոշ հատուած, եւ պէյ՝ տէր, պետ, առաջնորդ բառերէն յառաջացած բառակազմութիւն մը, որ կը նշանակէ ցեղախումբի մը բաղկացուցիչ որոշ հատուածին պետը, որուն պարտականութիւնն էր ղեկավարութիւնը իրեն ենթակայ ժողովուրդին: Հայերէն տոհմապետ եւ նահապետ բառերը կը մնան ամենէն մօտը օսմաներէն այս բառի բովանդակութեան: Տես՝ Քէլէկեան, էջ 295: Պարթան, էջ 81:

124. Արարերէն հէսէպէ՝ հաշուել բառէն յառաջացած հարկային տարազ մըն էր իհթիսապը, եւ հին օրերուն ունէր պետութեան վճարուող հարկի իմաստ: Իրականութեան մէջ կը նշանակէր նաեւ կատարուած դործ մը քննելով վճիռ արձակել, կամ առուծախի քննութիւն եւ վերահսկողութիւն: Հետաքրքրական է, որ այսպէս կը կոչուէր նաեւ այն պաշտօնեան, որուն պաշտօնն էր շուկայի մէջ որոշել վաճառուելիք ապրանքներուն գինը եւ անոնցմէ դանձել հարկերը, շուկային մէջ հսկել չափի ու կշիռի անխարդախութեան, պարտադրել շուկայի անգիր օրէնքները, միս ու մսացու եւ օսկի հայթայթել շուկային, ուշադիր ըլլալ որ վաճառորդները չխախտէին պետութեան կողմէ ապրանքներուն համար որոշուած գիները, եւ արգիլել զեղծարարութիւնը արհեստաւորներուն եւ առեւտրականներուն: Բոլոր այս պարտականութիւններուն համար իհթիսապը կը դանձէր որոշ գումար մը իրեն համար, որ սկիզբները չէր անցնէր քառասունէն մէկը տուեալ ապրանքի մը գինին: Գանձումը կը կատարուէր բաճին հետ միասին: Օսմանեան Կայսրութեան սկզբնական շրջանին իհթիսապը կը դանձուէր ուղղակի պետական պաշտօնեաներուն կողմէ, որոնք ծանօթ էին որպէս միւհթեպիյ. հետագային, սակայն, բոլոր այս պաշտօնները յանձնուեցան միւլթեգիմներու, որոնք իրենց պաշտօնը պետութեանէն կը վերցընէին կապալով՝ որոշ մուզաթա մը վճարելով անոր: Իհթիսապին միւլթեգիմներու փոխանցումով խախտեցաւ ամէն ինչ եւ հարկն ստացաւ փոփոխական նկարագիր: Կանոնադրութիւնները ցոյց կու տան ոչ միայն նոյն բովանդակութեամբ տարանուն

Հարկեր՝ այլ նաև քանակական նկատառելի փոփոխութիւն՝ ըստ վայրի, ապրանքի, ժամանակի եւ դանձիշի: Հարկը կը դանձուէր զբամով, եւ մերթ նաև արտադրութեամբ քիչ մը այն բոլորէն, որոնք աղբրս մը ունէին շուկային եւ առևտուրին հետ: Տես՝ Թուրքական, Ա., էջ 361: Քէլէկեան, էջ 55: Պելախիանու, Բ., էջ 143, 158, 195-197, 200, 220, 232, 237-239, 280, 296: Բաքալին, Բ., էջ 43: Պարքան, էջ 69, 123, 134, 167, 186, 199, 218, 226, 229, 255, 257, 330, 349, 350, 396, 400:

125. Ծանրութեան եւ բովանդակութեան տարազ. փոփոխական էր քանակով եւ կշիռով, եւ Օսմանեան կայսրութեան մէջ կը տարբերէր 800-2400 տէրահի միջև. այդ վերջինները կ'ընեն 2560-7680 կրամ: Տես՝ Կամու, էջ 129: Քէլէկեան, էջ 269: Պարքան, էջ 16, 48, 85, 123, 137, 142, 159, 161, 163, 166, 168, 177, 182, 185, 187, 196, 199, 212-213, 222:

126. Արարերէն Հազդ՝ իրաւունք, հարկ, եւ պիտաթ՝ զորդ, ծածկոց, սիւսց բառերէն կազմուած Հարկային այս տարազը կը յիշուի միայն մէկ անգամ Պարքանի Հաւաքածոյին մէջ: Օսմաներէնի մէջ պիտաթ բառը ստացած է զորդ իմաստէն անկախ նաև կա՛հ կարասիի բովանդակութիւն, մինչդեռ Պարքան կը նշէ թէ անիկա պարզօրէն անկողինն էր: Առ այդ՝ Հազդը պիտաթը կ'ըլլայ այն Հարկը, զոր պետութեան կը վճարէին վերմակ, անկողին, բարձ, բազմոց եւ յարակից այլ առարկաներ պատրաստողները Օսմանեան կայսրութեան մէջ: Տես՝ Քէլէկեան, էջ 265: Պարքան, էջ 538:

127. Պարքան, էջ 120-124:

OTTOMAN REGULATIONS AND THE ARMENIANS OF WESTERN ARMENIA

LEVON VARTAN

(Summary)

The article comprises a number of Ottoman regulations – kanunnames – shedding light on the economic and taxation systems of various regions in Western Armenia and Cilicia. It brings out through the content of these regulations, the dire economic condition which was the lot of the indigenous of western Armenia during the XVI-XVII centuries.

The Ottoman regulations cited here are all drawn from Omer Lutfi Barkan, **XV ve XVII inci asirlarda Osmanli Imperatorlugunda zirai ekonominin hukuki ve mali esaslari**, Birinci cilt, **Kanunlar**, Istanbul, 1943, translated into Armenian, annotated, and put into circulation for the first time in Armenian historiography, thus being an addition to those Ottoman regulations which make the content of Safrastian's and Zulalian's book, **The Ottoman Regulations in western Armenia, XVI-XVII centuries: Kanunnames**, Erivan, 1964.

The regulations given here belong to the Armenian provinces of Ergani, Erzenka, Malatia, Garaman, Chermoug, Gargar, Tivrig, Severeg, Chougour Abat and Roumi.